Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՔՐ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄՏՔԵՐԸ

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՉԱՐԻՔ
ՄԻՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ
ՀԱՅ-ՔՐՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԿՈՎԿԱՍԱՀԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ

ՄԱՏԵՆԱՇԱՐ
Հ. Յ. Դ. ՋԱՒԱՐԵԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 1

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երրորդ տպագրութեամբ մը լոյս ընծայելով Քրիստափոր Միքայէլեանի յօդուածներու հաւաքածոն, ծանօթ՝ **«Յեղափոխականի մտքերը»** ընդհանուր խորագրով, չենք առաջադրեր բերել հրատարակչական նպաստ մը, անմիջականօրէն, մեր նորագոյն պատմութեան եւ քաղաքական մտքի ճանաչումին: Այլ հարց՝ բազմաթիւ երկեր կան, հրատարակուած եւ սպառած, կամ տակաւին ցրուած պարբերական մամուլի հաւաքածոներու մէջ, եւ որոնք կը սպասեն հրատարակութեան: Մասնագիտական այդ աշխատանքին իրագործումը, անշուշտ, մեզի չ՚իյնար: Մեր մատենաշարը, իբր քաղաքականօրէն կազմակերպուած ուսանողներու կազմի մը նախաձեռնութիւն, պիտի ձգտի ուսանողներու, եւ առհասարակ երիտասարդութեան տրամադրութեան տակ դնել քաղաքական մտածողութեան աղբիւրներ, նախատարրեր. այդ պատճառով իսկ՝ կը ծրագրենք կայն դնել աւելի այլապան ընտրութեան մը հիման վրայ, փորձելով աւելի լայնօրէն դարմանել հայ կեանքէն ներս, նաե՛ւ երիտասարդութեան մէջ տիրող քաղաքական թերաճութիւնը:

Այս շարքին մէջ ուրեմն տեղ պիտի գտնեն, անտիպ բնագիրներու եւ թարգմանական երկերու

կողքին, որոշ թիւով վերահրատարակութիւններ՝ հայ քաղաքական մտքի ներկայացուցչական երկերէն:

Քրիստափոր Միքայէլեանի յօդուածներու այս հաւաքածոյին կցուած կը պահենք Փիէռ Քիյարի յառաջաբանը, վաւերագրական եւ նոյն ատեն մարդկային խոր արժէքով վկայութիւն մը՝ Հ. Յ. Դաշնակցութեան գլխաւոր հիմնադիրին մասին: Կը կցենք նաեւ Բ. հրատարակութեան «երկու խօսք»ը, նոյնպէս իր վաւերագրական արժէքին համար: Եւ կը դիմադրենք այն փորձիչ ինքնաթելադրանքին, որ մեզ պիտի մղէր, ընդարձակ ներածականով մը, փնտռելու տեղն ու արժէքը գործին, այս անգամ՝ **մեր ժամանակին մէջ:** Դաստիարակչական անմիջական ծառայութեան մը ձգտող հրատարակչական մեր աշխատանքով կը նախընտրենք երիտասարդ ընթերցողը ձգել ապատ, այս փաստաթուղթերուն հետ դէմ առ դէմ: Ուրիշ հարց՝ նման փորձ մը պիտի ենթադրէր չափականց լուրջ եւ պատասխանատու աշխատանք, մասնաւորաբար այսօր, տասնամեակի մը սեմին, որ կը խոստանայ հարուստ ըլլալ հայ յեղափոխութեան եւ Հայ Դատի պատմութեան մէջ արժէքներու վերահատումներով: Այս բոլորը յանձնառու երիտասարդութեան կողմէ պէտք է դիմաւորուին կինուած փաստացի ծանօթութիւններով եւ համապատասխան պատրաստութեամբ:

Հ. Յ. Դ.
ԶԱՒԱՐԵԱՆ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

(Բ. հրատարակութեան առիթով)

Հայ յեղափոխական գրականութեան մէջ Քրիստափոր Միքայէլեանի յօդուածները առանձին տեղ են գրաւում: Հայերէն շատ քիչ գրուածք կայ — գուցէ Բաֆֆիի վէպերը եւայլն — որ այնքա՜ն զօրաւոր տպաւորութիւն գործած լինին ժամանակակից երիտասարդութեան մտքին վրայ, որքան «Ամբոխային տրամաբանութիւն»ը:

Պէտք է յիշել, թէ ի՜նչ ժամանակ էր լոյս տեսնում «Ամբոխային տրամաբանութիւն»ը: Ընդհանուր, զանգուածային կոտորածներ Պոլիսէն սկսած մինչեւ Վասպուրական, դիւանագիտական անյաջողութիւններ ու ծայրայեղ յուսալքում: Հայ հասարակութիւնը ապրում էր վհատութեան և քարոյալքման ծանր տագնապ: Սկսուել էր պատասխանատուների որոնումը, եւ ի հարկէ, քա-

բերը, առաջին հերթին, թափում էին յեղափոխականների գլխին: Բորբոսած խոհեմութիւնը՝ կապուած քաղքենի եսամոլութեան մսուրին, պատեհապաշտութեան ու համակերպութեան իմաստութիւնն էր որոտում: Հայ յեղափոխական շարժումը ապրում էր իր առաջին ծանրագոյն տագնապներէն մէկը:

Եւ այս գաղջ ու տամուկ մթնոլորտում, յանկարծ, ուժգին որոտի պէս, հնչեց Քրիստափորի սթափեցնող ձայնը. «Ցարատե՛ւ կռիւ»: Սուր ու խորաթափանց դիտողութեամբ, հարուստ փաստերով ու պողպատէ տրամաբանութեամբ՝ նա սպանիչ քննադատութեան ենթարկեց «Ամբոխային տրամաբանութեան» հերոսներին եւ ցոյց տրուեց, որ հայ յեղափոխական շարժումը ո՛չ միայն քնական էր, ո՛չ միայն անխուսափելի, այլեւ անհրաժեշտ էր ու ցանկալի: Եւ ամառուայ տօթին տեղացող յորդառատ անձրեւի պէս «Ամբոխային տրամաբանութիւն» շարքը մաքրեց ու պայծառացրեց հայ կեանքի հեղձուցիչ մթնոլորտը: Քրիստափորի այդ գլուխ գործոցը դարձաւ այնուհետեւ մեր երիտասարդութեան հաւատոյ հանգանակն ու ներշնչման աղբիւրը:

Այսօր էլ դեռ «Ամբոխային տրամաբանութիւն»ը, ինչպէս Քրիստափորի միւս յօդուածները, լիքն է կենդանի այժմէականութեամբ: Մեր օրերի «ամբոխն» էլ «տրամաբանում» է այնպէս, ինչպէս «տրամաբանում» էր ինքնական թուականների վերջին: «Պատմական չարիքը» ոչնչով չի թուլացած եւ այսօր: Հայի «Ցաւելեալ արիւնը» շարունակում է հոսիլ անընդհատ: Ներկայ սերնդին էլ յուզում են այն խնդիրները, որոնցով յուզուում էր Քրիստափորի սերունդը: Այդ պատճառով «Յեղափոխականի մտքեր»ի վերհրատարակութիւնը միայն պատմական հետաքրքրութեան արդիւնք չէ, այլ եւ գործնական պահանջ:

Քրիստափորի յօդուածները սկզբնապէս հրատարակուեցին «*Դրօշակ*»ում, մեծ մասամբ, իբրեւ խմբագրական, անստորագիր: «Ամբոխային տրամաբանութիւն»ը տպուեց «*Դրօշակ*»ի 1899 թ. 5, 6, 8 եւ 1900 թ. 2, 3, 4 համարներում: Ապա լոյս տեսաւ առանձին գրքով, Ելլէն ծածկանունով, Հ. Յ. Դ. մատենաշարի հրատարակութեամբ Ժընեւում: Իսկ 1909 թուին «Պատմական չարիք»ի հետ միասին, վերհրատարակուեց Պոլսում, իբրեւ Հ. Յ. Դ. Ազատութեան Մատենաշարի թիւ 6:

«Պատմական չարիք»ը առաջին անգամ տպուեց «*Դրօշակ*»ի 1900ի թիւ 6, 9 եւ 1901ի թիւ 3, իբրեւ առաջնորդող յօդուած:

«Միութիւն թիւրքերի հետ»ը՝ «*Դրօշակ*»ի 1900ի թիւ 8ում:

«Հայ–քրտական յարաբերութիւնները»՝ «*Դրօշակ*»ի 1901ի թիւ 4 եւ 5ում:

«Կովկասահայ տագնապ»ը՝ «*Դրօշակ*»ի 1903ի թիւ 7ում:

Քրիստափորի եղերական մահից յետոյ, այս բոլոր յօդուածները ամփոփուեցին մի հատորի մէջ եւ 1906 թուին հրատարակուեցին Հ. Յ. Դ. Մատենաշարի շարքում: Գրքոյկին կցուեց Քրիստափոր Միքայէլեանի լուսանկարը եւ կենսագրութիւնը՝ գրուած Փիէռ Քիյարի ձեռքով:

Ներկայ հրատարակութիւնը հարազատ կրկնութիւնն է «Յեղափոխականի մտքեր»ի առաջին տպագրութեան եւ ոչ Քրիստափորի գրուածքների ամբողջական հաւաքածուն: Ամբողջական հաւաքածուի հրատարակութիւնը վաղուց արդէն զգացուած, բայց մեր պայմաններում դժուար իրագործելի պահանջ է: Ե՛ւ Քրիստափորի, Ե՛ւ Զաւարեանի ու Ռոստոմի գրուածքները ցրուած են զանազան թերթերում կամ մնում են պահուած կուսակցական եւ անհատական դիւանների անյայտութեան մէջ: Անհրաժեշտ է ժամանակ, առանձին յարմարութիւններ ու նիւթական միջոց այդ բոլորը յայտնագործելու, ի մի հաւաքելու, համեմատելու եւ հրատարակութեան տալու համար: Ո՞ւր են այդ յարմարութիւններն ու միջոցները:

Բացի հաւաքածուի մէջ մտած յօդուածներից, Քրիստափորը 1899 թ., թիւ 1 եւ 2 «*Դրօշակ*»ներում ունի երկու խմբագրականներ՝ 1898–1899 թ. տարեկան տեսութիւն, որ սկսւում է «Հայի համար վաղուց է Նոր Տարի չկայ» խօսքերով: «*Դրօշակ*»ներում կան եւ նրա կազմած մի

քանի մանր տեսութիւնները, կենսագրականներն ու լուրերը:

Քրիստափորի գրական ժառանգութեան տեսակէտից վերջին աստիճանի արժէքաւոր են եւ նրա ձեռքով գրուած զեկուցումներն ու նամակները: Զգայուն, բայց միաժամանակ եւ հզօր իմացականութիւն, օժտուած արտակարգ յստակատեսութեամբ, անկեղծ տրամաբանութեան ու կամքի տէր, անհուսօրէն լաւատես ու հաւատացող, գործով յարատեւ, զարմանալիօրէն աշխատունակ, բծախնդիր դէպի իր խօսքը — ահա Քրիստափորը իր գրութիւնների մէջ: Դիտեցէ՛ք նրա ձեռագիրը — մէկ տող չկայ, որ մի քանի անգամ ուղղուած, ջնջուած ու սրբագրուած չլինի: Բառեր են պատահում, որ մի քանի անգամ գրուել ու ջնջուել են. գրում ու անցնում է, նորից վերադառնում, փոխում ու փոփոխում է. գրած բառը ջնջում՝ վերն է գրում. այս էլ է ջնջում՝ տակն է գրում, սրա վրայ էլ գիծ քաշում՝ կողքին է գրում: Նրա մանր հատիկ հատիկ շարուած բառերը այնքան գրուած ու ջնջուած են, որ ձեռագիրները յանախ տողերի ու բառերի խառնաշփոթ լաբիրինթոսի են վերածուած: Մի բան, որ եթէ մի կողմից ապացոյց է մտքի ստեղծագործութեան ծանր երկունքի, միւս կողմից վկայութիւն է հեղինակի դէպի գրուած խօսքը տածած անսահման յարգանքի:

Ներկայ հատորի նպատակն է տալ ընթերցող լայն հասարակութեան մեռոքը մեր ժամանակների մեծագոյն յեղափոխական–հրապարակագրի գրուածքները: «Ամբոխային տրամաբանութեան» եւ «Յեղափոխական մտքեր»ի նախորդ տպագրութիւնները վաղուց արդէն սպառուած են: Նոր սերունդը գրեթէ ծանօթ չէ նրանց: Այս հրատարակութիւնը կը լրացնէ այդ թերին: Աւելին՝ թողնում ենք ապագային:

Աթէնք, 1931

Քրիստափոր Միքայէլեան եւ Սիմոն Զաւարեան

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Քրիստափոր Միքայէլեանը, — «Մեր Քրիստափորը», ինչպէս որ յարգանքով, հպարտութեամբ ու գորովով կոչում էին նրան իր աշակերտներն ու հայ մտերիմները եւ այն եւրոպացի բարեկամները, որոնց նա պատիւ արեց իր ամենաթանկագին խոհերից մի բան վստահանալու — նա՛, Քրիստափոր Միքայէլեանը, մեռաւ Սոֆիայի մօտերը, 1905ի Ապրիլին, ողբերգական հանգամանքների մէջ, մի ժամում՝ նմա՛ն իր կարճատեւ կեանքի բոլոր ժամերին, երբ նա՝ ինչպէս միշտ, անյայտութեան մէջ ու լռելեայն, կռում էր յեղափոխական գործը:

Եթէ վաղանցուկ մահկանացուից յետոյ գաղափարները չմնային կենդանի, կորուստը անգիւտ կը լինէր յեղափոխութեան եւ հայկական դատի համար: Սակայն գաղափարները այնպիսի զօրութեամբ էին մարմնացել նրա անձնաւորութեան մէջ եւ այն տեսակ շառաւիղներ սփռել, որ իր անյայտանալուց յետոյ էլ՝ նրանք ապրում են հաւատարիմ յուշերի մէջ եւ ի հարկին՝ մեզանից իւրաքանչիւրին կը ներշնչեն կորով՝ շարունակե-

լու նրա աշխատանքը, այնպէս՝ ինչպէս ինքը կը ցանկանար, եւ իրականացնելու, նայած ժամանակին, անհրաժեշտ ձեռնարկներն ու ծրագիրները:

Քրիստափոր Միքայէլեա՛ն, «Մեր Քրիստափո՛ր»: Երբե՛ք պիտի չմոռանամ աշնանային այն օրը, 1900 թուին, երբ նա ինձ այցելութեան եկաւ՝ «**Pro Armenia**»ի հրատարակութիւնից մի քանի ամիս առաջ, եւ մենք առաջին անգամ հանդիպեցինք իրար, Պուրկոյնի մի փոքրիկ գիւղում: Թէեւ անծանօթ՝ իր առաջին խօսքերից եւ առաջին հայեացքից՝ նա տիրաբար իշխեց իր խօսակցին: Այդ փոքրիկ, թուլակազմ մարդը, շփոթ քայլուածքով, որ՝ հակառակ իր ալեխառն մազերին՝ դեռ տարիքաւոր չէր եւ պահպանել էր մանկական աչքերի յստակութիւնը, խօսում էր մի ձայնով՝ միաժամանակ մեղմ եւ խռպոտ, համոզիչ եւ հրամայական: Նրա տժգոյն կերպարանքը, հիւծուած՝ երկար, անանձնական տառապանքից, ցաւագինօրէն յայտնում էր, որ նա զգացել ու կրել է իր հալածական եւ մարտիրոսացած բոլոր եղբայրների տանջանքները եւ որ նա արիւն էր թորել բոլոր նրա՛նց վէրքերով եւ լացել նրա՛նց արցունքով: Սակայն այդ դէմքը ասում էր եւ այն, որ ինքը նրանցից չէ, որոնք ընկնում են տանջանքի առջեւ, եւ իրայիններին դէմ գործուած ամէն մի ոճիր արծարծում էր նրա մէջ հաստատուն վճիռ՝ բնաւ չենթարկուելու

դառն ճակատագրին եւ պատրաստել աւելի լաւ օրեր՝ տրամադրելի բոլոր միջոցներով, սկսած ամենախաղաղամիտ եւ խորաթափանց բանականութիւնից, մինչեւ անխուսափելի բռնադատումը, երբ այլեւս չկայ ուրիշ միջոց:

Եւ այնտեղ, խաղաղ հովիտի բարձրութեան վրայ, ուր երեկոյեան մութը իջնում էր եղեւնու անտառների եւ արդէն թափուր դաշտերի վրայ՝ Միքայէլեանի հոգին դրոշմուեց իմ մէջ: Ու այնուհետեւ՝ մօտիկ լինէր նա թէ հեռու, ես հայկական դատին վերաբերմամբ ոչինչ չեմ ասել, ոչինչ չեմ գրել, ոչինչ չեմ արել, առանց հարցնելու ինքս ինձ, թէ ի՞նչ կը մտածէր նա՝ ա՛յս խօսքի, ա՛յս նախադասութեան այս **արարքի** մասին...

Ահա նրա կեանքը՝ շատ համառօտակի:

Նա ծնուեց 1859ին, Կովկասի մի աւանում, Վերին-Ագուլիս, այսինքն հին Արարատեան նահանգում՝ լի պատմական յիշատակներով, Մասիսի դիմաց, որ արեւմտեանները Արարատ են կոչում, Արաքսի մօտ, որ նահապետն է հայկական գետերի, եւ մանկութիւնը անցկացրեց հայրենի ջրերի եւ առասպելական լեռների միջեւ:

Շրջապատուած պարտէզներով, այգեւէտ, լաւ ոռոգուած, Ագուլիսը շնորհում էր ուղեւորներին մի յանկարծադէպ հրապոյր իր գեղածիծաղ տներով եւ մաքուր փողոցներով, մի տեսակ

սմանչելիք քարքարուտ շրջապատի մէջ: Հազուադէպ սմանչելիք նոյնպէս եւ իր մտաւոր կրթութեամբ·— գիւղացիները՝ ուսումն առած, նոյնքան եւ գուցէ աւելի քան ուրիշ հայ գիւղերում: Ամէն ոք գիտէ, թէ ամենազարգացած, լաւագոյն հայերն որպիսի՛ յափշտակութեամբ ընդիրուեցին ժողովրդական կրթութեան գործին, — նոյնիսկ տարրական դպրոցների պաշտօնախմբերը բաղկացած էին լաւագոյն մարդկանցից, համարեա բոլորն էլ աշխարհական, գերագոյն հրսկողութեամբ Էջմիածնի կաթողիկոսի, որ պատասխանատու է ցարի կառավարութեան առջեւ...

Իւրաքանչիւր գիւղ, ինչպէս Ագուլիսը, եւրոպական կրթութեան կենտրոն էր: Քրիստափորի հայրը, երկրագործ, նրան տուեց տարրական ուսումնարան եւ երեխան դրսում սովորածը լրացնում էր ընտանիքի մէջ, կիսանահապետական բարքերի շրջանում: Երբ նա դարձաւ 11 տարեկան, տնեցիք մի մեծ որոշում կայացրին, — բաժանուել նրանից որպէս զի նա կարողանայ Թիֆլիսում միջնակարգ ուսում առնել: Ճանապարհորդութիւնը երկար էր, տասն օր, որովհետեւ ոչ երկաթուղի կար, ոչ կառք: Եւ այս ուղեւորութիւնը հանդիսացաւ իբրեւ մի կարեւոր դէպք իր մերձաւորների եւ ողջ գիւղի համար, ինչպէս այն՝ երբ մէկը գնում է համալսարան կամ Եւրոպա, աւելի ազատ եւ աւելի քաղաքակիրթ:

Աշակերտ Թիֆլիսի ուսուցչական դպրոցի՝ Քրիստափոր Միքայէլեանը շնորհիւ իր հոգեկան կազմի, որ բաց էր ամէն նոր գաղափարների եւ ամէն յանդուգն վճիռների առջեւ, յարեց ռուս նորածիլ յեղափոխութեան եւ սոցիալիստական շարժման: Ցետոյ, երբ ձեռք բերեց աւարտման վկայական, վերադարձաւ իր ծննդավայրը՝ որպէս դպրոցական ուսուցիչ, եւ նոյն միջոցին՝ երբ ուսուցանում էր աշակերտներին տարրական գիտութիւններ, նա մասնակից էր անում այլ մարդկանց, — իր ընկերներին եւ իրենից տարիքաւորներին, — ա՛յն գեղեցիկ մտքերին, զորս ինքը իւրացրել էր, եւ այն օրուանից ահա սկսեց իր փրոփականտը ժողովրդի մէջ:

Այդ միջոցին տեղի ունեցաւ մի ծանր դէպք: 1885ին բիրտ ռուսացումը յաջորդեց նախկին համբերողութեանը·— առաջին անգամ ռուս կառավարութիւնը փակեց բոլոր հայ դպրոցները եւ այսպիսով հազարաւոր երեխաներ՝ տղայ–աղջիկ՝ զրկուեցին ուսումից: Անձնական փորձով գիտեմ, թէ ինչքա՜ն վատ է ուսանելու տենչը հայ փոքրիկների մէջ, մանաւանդ ժողովրդական խաւերում: Ագուլիսի եւ այլ բազմաթիւ գիւղերի երեխաները՝ զրկուած դպրոցից՝ արտասուք էին թափում տանը եւ փողոցներում, իսկ զայրացած ընտանիքները արդէն նզովք էին կարդում ցարի բռնակալութեանը: Քրիստափոր Միքայէլեանը խորապէս ցնցուեց անցած–դարձածից, իր բոլոր

տեսածից, եւ ինքը՝ որ ռուսական յեղափոխութեամբ էր տարուած, ամբողջապէս նուիրուեց տառապող հայերի դատին:

Նա վճռեց նախ լրացնել իր ուսումը եւ դրպրոցների փակումից յետոյ գնաց Մոսկուա, ուր նա նուիրուեց յատկապէս քաղաքատնտեսութեան և ընկերաբանութեան ուսումնասիրութեան և խելամուտ եղաւ մարքսիզմի բարձր դիալեկտիկային: Միաժամանակ նա հիմնեց հայ ուսանողների մի շրջան, ուր բոլորը պատրաստւում էին ապագայ գործունէութեան եւ իր պարզութեամբ, վարդապետութիւնների լայնութեամբ եւ անընկճելի եռանդով նա ձեռք բերեց իր ընկերների մէջ մի դիւրաւ ընդունելի եւ հաւանելի հեղինակութիւն: Նա վերադարձաւ Կովկաս 1888ին, ա՛յն միջոցին, երբ խմորւում էր մտաւոր եւ յեղափոխական մի ուժգին շարժում թրքահայերի օգտին: Նա անմիջապէս նետուեց այդ հոսանքի մէջ ու մի քանի ընկերների հետ յղացաւ միտք՝ հիմնելու յեղափոխական մի մեծ կուսակցութիւն — Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, ունենալով իրբեւ օրգան՝ «Դրօշակ»ը:

Տաս տարի շարունակ, Կովկասում, շրջապատուած ամէն տեսակ նեղութիւններով՝ նա եղաւ Դաշնակցութեան հոգին: Առաջին անգամ բանտարկուելով Թիֆլիս, աքսորուելով մի տարի Պեսարապիա եւ կրկին բանտարկուելով Բագու 1895ին, նա հայկական դատին նուիրեց այն բոլոր դադարները, որ ռուս ոստիկանութիւնը տալիս էր նրան՝ խուզարկութեան, բանտի եւ աքսորի միջեւ: Քաշքշուած, հալածուած տեղական իշխանութիւններից, ընտանեկան բաւական ծանր բեռը վզին, նա նուիրում էր փրոփականտին ո՛չ միայն իր ժամանակն ու ուժերը, այլեւ այն դրամական միջոցները, որ կարողանում էր ձեռք բերել լրագրական աշխատանքով:

Իր տունը՝ յեղափոխական օճախ էր, որտեղից դուրս էին գալիս պատուէրի խօսքեր, ուր մարդիկ գալիս էին խորհուրդ հարցնելու՝ ազատօրէն ընտրուած պարագլխից, որ իր հեղինակութեամբ պարտական էր ոչ թէ իրեն շնորհուած նուիրապետութեան, այլ դէպի ինքը տածած հանուր վստահութեան, մի տուն, որի դռները բաց էին բոլոր ընկերների համար, բոլորած ընդհանուր սեղանի շուրջը, եւ որոնց հետ Քրիստափորը բաժանում էր իր ծածկը եւ իր համեստ քաղաքը: Ահա այն ժամանակից է, որ նա դարձաւ բոլոր գիտակից հայերի համար «Մեր Քրիստափորը»:

Վրայ հասան 1895–1896ի կոտորածները· ազգային այդ մեծ աղէտին հետեւեց յետաշրջում (*ռէակցիոն*) եւ ժողովրդի մի մասի, աւելի ճիշդ ասած՝ ապահով եւ կեղեքումներից ազատ շրջանների անվստահութիւնը՝ դէպի հայ յեղափոխականները: Քրիստափորը անյողդողդ մնաց, չյուսահատուեց: Եւրոպական մեծ պետութիւն-

ների ամօթալի անգործութիւնը նրան զայրացրին եւ տրտմեցրին. սակայն նա հասկացաւ միաժամանակ, որ այն անգիտութիւնը, որին մատնուած էին եւրոպական ժողովուրդները իրենց կառավարութիւնների շնորհիւ, թոյլ էր տալիս վերջիններին հեշտութեամբ շարունակելու իրենց ոճրալի անտարբերութիւնը: Նա հասկացաւ եւ ա՛յն, որ հայկական յեղափոխութիւնը ինքը մենակ բաւական չէ եւ որ բռնութեան դէմ ուղղած դիմադրութիւնը, — մշտապէս անհրաժեշտ, — չէ կարող դրական հետեւանքի հասցնել՝ առանց այն ժողովրդների համակրութեան, որոնք աւելի ուժեղ են՝ քան հայ ժողովուրդը, թողնուած իր բախտին եւ իր անզօրութեան:

Ահա դրանից դրդուած՝ նա եկաւ Եւրոպա, երկու երեք ընկերով, նուիրուելու երկու առաքելութեան.— ապահովել Յեղափոխական Դաշնակցութեան ապագան եւ հայկական դատի կողմը գրաւել արեւմտեան երկրների հասարակական կարծիքը, վատատեղեակ անցած-դարձածին: Առանց հանգստի, առանց մի րոպէ յուսաբեկուելու՝ նա աշխատեց այս երկու նպատակի համար եւ երբեք՝ հակառա՛կ մասնակի անյաջողութիւնների, հակառա՛կ եւրոպական կառավարութիւնների նորագոյն ստորնութիւններին, նա չընկճուեց եւ չվհատուեց:

Դեռ ժամանակը չէ մանրամասն պատմելու, թէ ինչպէ՛ս նա պարտահատոյց եղաւ այն ծանր

աշխատանքին, որ դրել էր իր առջեւ եւ ո՛չ էլ այն, թէ ո՞րպիսի զուարթ հաւատով այդ մարդը, — որ այնքա՞ն վիշտ էր կրել եւ տեսել, — դիմում էր՝ մի անգամ վճիռ կայացրած՝ դէպի ահարկու փորձանքներ:

Իր ընկերներն ու Սոֆիայի ժողովուրդը մի փառահեղ թաղում սարքեցին պուլկարական մայրաքաղաքի մէջ. իսկ Կովկասի աւաններում հայերը նրա յիշատակին նուիրեցին այնպիսի սգահանդէսներ, որպիսին չէ եղել ո՛չ մի պետական մարդու համար: Եւ նա՛, որ երբեք չէր որոնել ամբոխի ծափերը, մտաւ յաւիտենականութեան գիրկը՝ ուղեկցուած համայն ժողովրդի ողբով...

ՓԻԷՌ ՔԻՅԱՐ

1905, *Փարիզ*

Քրիստափոր Միքայէլեան

ԱՄԲՈԽԱՅԻՆ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

«Եթէ կարելի լինէր ենթադրել, որ տաճկական վարչութիւնը այսպիսի ճգնաժամում (1876, Սեպտեմբեր) կարող է Եւրոպայի համաձայնութեամբ կամ նրա վաւերացմամբ շարունակել իր օրինական գոյութիւնը Պուլկարիայում՝ այն ժամանակ պէտք է յանցանք համարել մարդկային արդարադատութեան ամէն մի բողոք՝ իշխանութիւնն ի չարը գործ դնելու դէմ, ամէն մի դիմադրութիւն ամենազգրելի բռնապետութեան դէմ: — Բայց մենք դեռ չենք հասել այդպիսի ծայրայեղ ստորնացման»...

Վ. ԿԼԱՏՍԹՈՆ

I

Ամբոխը, կազմուած լինի նա «կրթուած» թէ անկիրթ մարդկանցից, միշտ տրամադիր է կարծելու, թէ ամէն մի երեւոյթ, որին հետեւում է մի ուրիշը՝ անմիջական պատճառ է այդ յետագայ երեւոյթի:

Այդ է ամբոխի տրամաբանութիւնը եւ միայն այդ տրամաբանութեամբ կարելի է բացատրել

հայոց հասարակութեան որոշ շրջաններում տարածուած այն անհեթեթ կարծիքը, թէ հայ յեղափոխականներն են հայկական սոսկալի կոտորածների իսկական պատճառը: «Post hoc, ergo propter hoc» (Այս դէպքից յետոյ, ուրեմն այս դէպքի պատճառով») տրամաբանեց chapeau կրող ամբոխը եւ հալած իւղի տեղ ընդունեց Թուրք Հերովդէսի պալատից դուրս եկած ճեղուիթական մեղադրանքը: Չէ՞ որ հայկական կոտորածներից առաջ ո՛չ մի նորանշան բան տեղի չէր ունեցել, — ոչ արեւի խաւարում, ոչ դիսաւոր աստղի ծագում, — ոչի՛նչ՝ բացի յեղափոխական ցոյցերից: Ի՞նչ կասկած, ուրեմն, որ ա՛յդ ցոյցերը եղան մեր կորուստների պատճառը. Թող անիծեալ լինեն այդ ցոյցերը, Թող կորչեն յեղափոխականները, — խօսում է մարդկային յիմարութիւնը կամ անսրտութիւնը, — եւ ահա ձեր առաջ ներկայանում է մի երեւոյթ, որ նոյնքան զարշելի է որքան եւ վնասակար:

Այն ժամանակ, երբ դուք՝ այնպիսի մի չարագործութեան դիմաց, ինչպիսին են հայկական կոտորածները, բռնկուած էք անսահման ցասումի սուրբ զգացմունքով միայն, այն ժամանակ, երբ հայութիւնը ջնջելու բացարձակ քաղաքականութեան դիմաց, դուք կարող էք ունենալ մի անընկճելի ձգտում միայն, — աղատուել վերջապէս այսքան չարիքների միակ պատճառից, — ահա այդ ժամանակ, ասում ենք, ձեր շուրջը,

այս ու այնտեղ, դուք տեսնում էք հայ մարդիկ, որոնք ոտնակոխ անելով բացարձակ ճշմարտութիւնը, պատրաստ են բարին չար անուանել ու չարը՝ բարի. պատրաստ են համարեա Թէ արդարացնել մարդկային պատմութեան մէջ չտեսնուած մի բարբարոսութիւն, պատրաստ են անօրինակ բռնութեան հեղինակի մեղքը փաթաթել այդ բռնութեան դէմ կռուող բանակի վրին...

«Կորած ենք հայերս», կ՚ասէինք մենք համարձակ, եթէ ականատես չլինէինք սակայն, Թէ ինչպէս մի կողմից տանջուած ժողովուրդը իր մաքուր բնազդով եւ միւս կողմից արեւելեան հարցին ծանօթ մարդիկ միանգամայն պարզ են համարում վերջին սարսափների պատճառները եւ չեն ձայնակցում հայկական դպիրների ու փարիսեցիների համերգին: Դժբախտաբար կան միամիտ մարդիկ, որոնք զուրկ են այդ բնազդից ու այդ ծանօթութիւնից. եւ նրանց վրայ մասամբ ազդում է այդ հակայեղափոխական երկդիմի քարոզը: Վերջապէս հենց այդպիսի մի քարոզի զոյութիւնը ինքնըստինքեան, — հենց այն փաստը, որ Ապտիւլ Համիտի անթիւ զոհերի անարժան եղբայրները, մոռացած սուրբ վրէժը, կրկնում են այդ դահակալ դահճի եւ նրա արբանեակների զրպարտութիւնը, — այնպիսի ամօթաբեր երեւոյթ է մեզ համար, որ մենք ստիպուած ենք երկարօրէն ծանրանալ այդ անհեթեթ մեղադրանքների վրայ:

* * *

Բայց թող նախ եւ առաջ եւրոպացի հեղինակները խօսեն:

«Սուլթանը եւ պետութիւնները» *վերնագրով իր յայտնի գրուածքի մէջ* Մակ – Կոլ *գրում է.*

«Կոտորածները սուլթանների աւանդական քաղաքականութիւնն են կազմում եւ վերջին վաթսուն տարիների ընթացքում կրկնուել են միջին թուով ամէն 10 տարին մի անգամ... *բնութեան օրէնքի կանոնաւորութեամբ...*

«...Ամէն անգամ, երբ քրիստոնեաները՝ չընայած իրենց անօգնութեան, սկսում էին *գերազանցել* միւսիւլմաններին քանակութեան, կրթութեան եւ բարեկեցութեան տեսակէտով, մահմետական իշխանները, հետեւելով փարաւոնի քաղաքականութեանը դէպի ստրուկ իսրայելացիները, *նուազեցնում էին ազգաբնակութիւնը* Պուլկարիայի եւ Սասունի *սիստեմով...*

«...Տանիկ ցեղը, ինչպէս նիշդ նկատում է Նասսաուի Սենեոր, արագ կերպով ջնջւում է. տանիկ կինը շատ հազիւ դէպքում է ունենում աւելի քան երկու երեխայ... Տանիկները գիտակցում են, որ *իրենք ջնջւում են եւ չեն կարող մրցել քրիստոնեաների հետ հաւասար պայմաններում*, — դրանով են բացատրւում քրիստոնեաների դէմ գործ դրուած անընդհատ ճնշումներն

ու պարբերական կոտորածները, որոնք *միակ միջոցն* են յետաձգելու տանիկների տիրապետութեան վախճանը:

«...Սուլթանը,— *գրում է նոյն հեղինակը մի ուրիշ տեղ*,— սկսել է իր սխրագործութիւնները Սասունից, և եթէ բարեռորոգումների (réformes) ծրագիրը չլինէր, գուցէ այդ կոտորածը առ ժամանակ յաղթեցնէր նրա արիւնռուշտ սիրտը. բայց բարեռորոգումների հիմքում դրուած է *հայերի եւ միւսիւլմանների թուի յարաբերութիւնը*, ուստի նա վճռեց խանգարել այդ ծրագրի իրագործումը, հակառակ կողմը փոխելով այդ յարաբերութիւնը (այսինքն նուազեցնելով հայերի թիւը): Այս հանգամանքը պիտի նախատեսէին բարեռորոգումների ծրագիր կազմողները եւ ամենից առաջ նրանք պիտի հոգային, — իմանալով ում հետ գործ ունեն, — միջոցներ ձեռք առնելու այդպիսի պատեհութեան դէմ... Բայց *պետութիւնները ոչինչ չարին մարդասպանի ձեռքը բռնելու համար* եւ հայերին կոտորելու հրամանը տրուեց Ելլտրզ-Քէօշկից»:

Իրլանդացի Էմիլ Տիլոն, *նախկին փրոֆեսոր, որ* 1895 *թուի սկզբում Տաճկաստան մտաւ եւ* Contemporary Review *ամսագրի միջոցով առաջին ճշգրիտ տեղեկութիւնները հաղորդեց Եւրոպային Սասունի կոտորածների մասին, ասում է.*

«1891 թուին՝ Բարձրագոյն Դուռը, վախենալով թէ *լուրջ դժուարութիւններ կը ծագեն իր համար՝ Հայաստանում խոստացուած բարենորոգումները մտցնելուց* եւ թէ Ռուսիայի սահմանակից նահանգներում բնակող քրիստոնեաները կարող են *օգնել Ռուսիային պատերազմի դէպքում*, վճռեց մի անգամից երկու նապաստակ սպաննել եւ կազմակերպեց բացառապէս քիւրտերից «համիտիէ» կոչուող հեծելազօրքը: Կառավարութեան մի քանի բարձր պաշտօնեաների առաջարկած ծրագիրն էր՝ ազատել սահմանակից նահանգները, օրինակ Ալաշկերտը՝ հայերից եւ փոխարինել նրանց մահմետականներով, որպէսզի բոլոր *հինգ նահանգներում հայերի թիւը այն աստիճան կրճատուի*, որ կարեւորութիւն չմնայ առանձին *հայկական բարենորոգումների* եւ որ պատերազմի դէպքում քիւրտերը գործեն իբրեւ հակակշիռ կոզակների: *Ինչման այդ բացարձակ քաղաքականութիւնը* այնուհետեւ ճշդօրէն իրագործուում է ու հետզհետէ ընդարձակւում, եւ եթէ դրան վախենան չդրուի, անկասկած, այդպիսով վերջնապէս կը լուծուի հայկական հարցը···»

Նշանաւոր անգլիացի ճէյմս Պրայս *գրում է*.

«1878ի անցքերը մեծ ազդեցութիւն ունեցան թէ սուլթանի եւ թէ նրա քրիստոնեայ հպատակների վրայ: *Պուլկարիայի ազատագրութիւնը*

յոյս ներշնչեց կրթուած հայերի մէջ, որ Եւրոպան իրենց համար եւս կ'անէ նոյնը, ինչ որ արաւ պուլկարների համար: Այն միտքը՝ որ հայերը Անգլիայի հովանաւորութեամբ պիտի ձեռքտէին մի ինքնավար Հայաստան ստեղծելու, ընդման Պուլկարիային եւ որ հայերին տրուած այս կամ այն զիջումները կարող էին սկիզբ լինել մի այդպիսի ինքնավարութեան, *այդ միտքը ամենազլխաւոր պատճառն էր*, որ մղեց սուլթանին պուլկարական սարսափները աւելի մեծ չափերով կրկնելու Հայաստանում:

Նոյն միտքն է յայտնում եւ ամերիկացի միսիոնար Գրին, *որ, ինչպէս եւ* Պրայս, *չհամակրելով հանդերձ արտասահմանեան հայ յեղափոխական կազմակերպութիւններին, պնդում է սակայն, որ տաճիկները բաւական ճարպիկ կերպով աշխատում են դարձնել հասարակութեան ուշադրութիւնը յեղափոխականների վրայ, որպէս զի կարողանան ծածկել իրենց սեփական գործողութիւնները: Իսկ եթէ հարցնէք՝ թէ որո՞նք են այդ «սեփական գործողութիւնները», Գրինը մատնացոյց է անում* The Independant *ամերիկեան լրագրիը, ուր ասուած է*.

«Այսպիսով Նենիպ փաշան 1840 թուին (Սուրիայի քրիստոնեաների ջարդը), Պետիր խանը 1850 թուին (նեստորականների եւ հայերի կոտո-

ռածները Քիւրտիստանում), Խուրշիտ փաշան 1860 թուին (մարոնիտների եւ սուրիացոց կոտորածները Լիբանանում եւ Դամասկոսում), Շեֆկէտ փաշան 1876 թուին (պուլկարների կոտորածը) եւ Զէֆի փաշան 1894 թուին (Սասունի ջարդը), մէկը միւսի ետեւից ջանք են թափել մի ազնիւ եւ մարդասիրական գաղափարի վրայ, — ազատել տաճկական կայսրութիւնը քրիստոնեայ ազգաբնակութիւնից»(*):

Դառնալով հայերին՝ Գրինը՝ մի կողմից հետեւելով Պրայսին եւ միւս կողմից (ինչպէս ինքն էլ խոստովանում է) մանաւանդ Ռոլէն Ժակմէնին, գրում է.

«Ասում են, որ հայերը իրենք դժբախտութիւնների պատճառ եղան, գրգռելով թուրքերին: Բայց ո՞վ գրգռեց հայերին··· Նրանք տեսան, որ Պուլկարիան ազատուեց արիւնից եւ նախատական վիճակից ու սա դրեց ինքնաճանաչութեան եւ բարօրութեան ճանապարհի վրայ՝ եւրոպական պետութիւնների պաշտպանութեան ներքոյ: Միթէ կարելի՞ է զարմանալ, որ հայ ժողովրդի սրտում *եւս բարձրացան յոյսեր եւ սպասելիքներ* — մի այնպիսի ժողովրդի, որ բնաւ

(*) Այս շարքին աւելացնենք եւ սուլթան Մահմուտին, որ 1822 թուին առնուազն 50·000 յոյների ջարդի հեղինակ եղաւ:

ատոր չէ պուլկարներից եւ շատ դէպքերում աւելի տաղանդաւոր··· Հայ յեղափոխական գաղափարը ներկայանում է իբրեւ մի նոր երեւոյթ այս խաղաղ եւ դարերի ընթացքում հնազանդութեամբ տաճկական լուծը կրող ժողովրդի կեանքում: Բայց *դա բնական հետեւանք է այն սարսափելի կացութեան*, որ նկատւում է Պերլինի դաշնագրից յետոյ· եւ այս ախտը կը դառնայ օրէցօր աւելի եւ աւելի թունաւոր, աւելի եւ աւելի վարակիչ, մինչեւ եւրոպական բժիշկները չդիմեն խիստ ու արմատական միջոցների՝ «հիւանդ մարդու» վերաբերմամբ»:

Մոսկուայի համալսարանի փրոֆեսոր, կոմս Լ· Կամարովսկի, յենուելով արեւելեան գործերին քաջ ծանօթ յայտնի դիւանագէտ կոմս Պենեդետտէի կարծիքի վրայ՝ ասում է.

«*Տաճիկները՝ համոզուելով, որ իրենց տիրապետութեանը ամէն կողմից վտանգ է սպառնում՝* այժմ դէպի քրիստոնեաները բացի արհամարհանքից, նաեւ կատաղի, անողորմ ատելութիւն են տածում: Իրենց կոյր զայրագնութեան մէջ, որ, — աւելացնենք, — միմիայն *սաստկանում է Եւրոպայի անկարող եւ անվճռողական միջամտութեամբ*, նրանք չեն տեսնում ուրիշ ոչ մի միջոց իրենց զօրութիւնը պահպանելու եւ սպառնացող վտանգների առաջն առնելու, բայց թէ

կոտորածների միջոցով *քրիստոնեաներին ջնջելը*: Այստեղից առաջ են գալիս քրիստոնեաների կոտորածները ամէն տեղ, ուր վերջինները փորձում են դիմադրել տանիկներին. Պուլկարիայում, Պոսնիայում, Հայաստանում, Կրետէում, եւայլն: Այդ սիստեմը անուանւում է «խաղաղացո՛ւմ» եւ մեծահոգի փատիշահի հայրակա՛ն կառավարութեան վերահաստատում: Այդպիսի մի կառավարութեան դիմաց մի՞թէ կարող է խօսք լինել «օրինականութեան» մասին եւ ի՞նչ տեսակ «խաղաղասիրութեամբ» կարելի է արդարացնել նրան պահպանելու ցանկութիւնը»:

Ֆրանսացի յայտնի գործիչ եւ գրող Ժան Ժորէս՝ *հայկական հարցի մասին փարլամենտում արտասանած իր գեղեցիկ ճառի մէջ, դիմելով արտաքին գործերի նախարար Հանոտոյին*, 1897 *թուի Հոկտեմբեր 3ին, ասաց.*

«Դուք մոռացաք աւելացնել... որ հայ յեղափոխականների վրայ ինչ դատաստան էլ որ կտրենք — ապահովապէս նրանք գրգռիչներ (provocateur) չեղան: Դուք մոռացաք յիշեցնել, որ նրանց պատասխանատուութիւնից առաջ, եթէ միայն նրանք ունէին այդպիսին, եւ ի՞նչ կարող է լինել մի քանի մարդկանց կամ մի քանի կոմիտէների պատասխանատուութիւնը մի ամբողջ ժողովրդի նահատակութեան ու կոտորածի դիմաց,

— կրկնում եմ, դուք մոռացաք յիշեցնել, որ այդ մարդկանց պատասխանատուութիւնից շատ առաջ եւ նրանից էլ վեր՝ կար *սուլթանի եւ Եւրոպայի* պատասխանատուութիւնը»:

Գերմանացի հայասէր Լեփսիուս, *որ* «Հայաստան եւ Եւրոպա» *իր գրքի վերնագրի տակ գրել է՝* «Մի ամբաստանագիր մեծ պետութիւնների դէմ», *մանրամասնօրէն կոտորածների խնդիրը քննելուց յետոյ, ասում է.*

«Կրկնում ենք մեր հարցը.— ի՞նչ բան են Հայաստանի ջարդերը, պատասխանում ենք. դա *Բարձր Դրան ձեռք առած* վարչական *մի միջոց է*, որ *ուրիշ չարժառիթ* եւ նպատակ չունի, բայց եթէ հայ ազգի ջնջումովը անիրագործելի դարձնել մեծ պետութիւնների պահանջած բարեռոգումները... Բայց հասկանանք իրար. ինչ որ արժանի է պարսաւանքի — դա ոչ թէ այն է, որ Եւրոպայի դիւանագէտները ուզեցին իրենց ձեռքն առնել մի խեղճ ու ջարդուած ժողովրդի դատ, այլ այն՝ որ *նրանք այդ արին այնպիսի մի ձեւով*, որ հայերը ստիպուեցին իրենց արիւնով վճարել նրանց քաղաքականութեան գինը»...

Միջազգային իրաւունքի հեղինակաւոր փրոֆեսոր պելճիքացի Ռոլէն–Ժակմէն *իր մի աշխատութեան մէջ* («Հայաստան, հայեր եւ դաշնա-

գիրքեր») *դեռ 1887 թուին, երբ ոչ մի յեղափոխական շարժման մասին խօսք չկար Եւրոպայում, գրում էր.*

«...Հայկական հարցը, շնորհիւ Պերլինի դաշնագրի 61րդ յօդուածի՝ մտաւ միջազգային դրական իրաւունքի շրջանը եւ մտաւ ոչ թէ դիւանագիտութեան քմահաճոյքով, այլ *իրրեւ նախընթաց փաստերի եւ դաշինքների տրամաբանական հետեւանք*: Նոյն այդ տրամաբանութիւնը պահանջում է այժմ, որ 61րդ յօդուածը գործադրուի: Եթէ այս պահանջը չիրագործուի, եթէ այս շատ ընդունակ ժողովուրդը, որ *ազգային գիտակցութիւն* ունի եւ որի իրաւունքները հանդիսաւոր կերպով արդէն ընդունուած են, առաջուան պէս անպատիժ հարստահարուի, *եթէ տաճիկ կառավարութիւնը չկամենայ կամ չկարողանայ կատարել իր խոստումները, իսկ Եւրոպան մոռանայ յիշեցնել նրան այդ մասին*, — այն ժամանակ հայկական հարցի հետ՝ առաջին յարմար առիթով կը պատահի նոյնը, ինչ որ պատահեց ռումանական, սերպիական, պուլկարական, ռումէլական հարցերի հետ: Դա կը լինի մէկը այն *անակնկալներից*, որոնք սովորաբար առաջ են գալիս անհեռատեսութեան շնորհիւ ինչպէս դիւանագիտութեան, այնպէս էլ բժշկականութեան մէջ: Նրանք նման են այն վառ ու *փոթորկալի տենդերին*, *որոնք*, — շնորհիւ այն բանի, որ

սկզբում անխնամ են վերաբերում, — *յանկարծ բռնկում են լափող և մահաբեր արագութեամբ*»:

* * *

Դիմենք այժմ եղրակացութիւններին: Ամփոփելով այդ կարծիքները, մենք տեսնում ենք, որ Մակ-Կոլ, Պրայս եւ Տիլոն Անգլիայում, Գրին Ամերիկայում, Կամարովսկի Ռուսաստանում, Ժորէս Ֆրանսայում, Լեփսիուս Գերմանիայում, Ռոլէն-Ժակմէն Պելճիքայում — միաձայն պնդում են, որ հայկական կոտորածների բուն պատճառներն են մի կողմից՝ տաճիկ կառավարութեան գիտակցօրէն ընդունած վճիռը՝ նուազեցնել հայերի թիւը Հայաստանում (*միանգամայն անկախ յեղափոխական շարժումներից*), *եւ միւս կողմից՝* Եւրոպայի քաղաքականութիւնը *հայերի վերաբերմամբ*:

Այո՛, այդ բոլոր հեղինակները ո՛չ միայն տարակուսանք չեն թողնում, որ սուլթանական կառավարութիւնը հայերի ջնջման ձգտելու համար ունէր աւելի խորին շարժառիթներ, *քան յեղափոխական ձեռնարկներն են, ինչպէս ենթադրում է ամբոխային տրամաբանութիւնը*:

Ահա այդ շարժառիթները.

Առաջին.— *Հաւասար եւ ազատ պայմաններում տաճիկները* անկարող են մրցել *հայերի հետ, որոնք դերազանցում են նրանցից կուլտուրայով,*

իրենց աճելութեան ուժով եւ տնտեսական յառաջդիմութեամբ։

Երկրորդ։— Հայերի մտաւոր-բարոյական վերածնութիւնը մի կողմից եւ տաճկական դարհուրելի ռեժիմը միւս կողմից՝ անհրաժեշտօրէն ստեղծեցին հայկական շարժում, որի հետեւանքը եղաւ հայկական հարցը, իբրեւ Հայաստանի ինքնավարութեան ծրագիր կամ առնուազն — պահանջ՝ բարենորոգումներ մտցնելու հայկական նահանգներում, որ ուրիշ ոչ մի կերպ չեն հասկանում տաճիկները, բայց եթէ Թուրքիայի ջլատում։

Երրորդ։— Հայկական նահանգները սահմանակից են Ռուսաստանին — տաճիկների համար այդ ամենավտանգաւոր թշնամու խոստացուած բարենորոգումները կարող են առիթ տալ ռուսների միջամտութեան, որ հաւասար կը լինի հայկական նահանգների գրաւման, մանաւանդ որ պատերազմի ժամանակ հայերը կարող են մեծ ծառայութիւններ մատուցանել ռուս զօրքերին։

Այդ մէկ։ Իսկ ինչ վերաբերում է միւս հիմնական պատճառին — այն է՝ Եւրոպայի քաղաքականութեան, — նոյն հեղինակները միեւնոյն ներդաշնակութեամբ պնդում են, որ Եւրոպան իր վրայ վերցնելով հայերի վիճակը բարւոքելու պարտականութիւնը, դրանով Թուրքիայի ամ-

Հ. Օհանեան, Քրիստափոր, Զաւարեան եւ Ս. Թադէոսեան

բողջութեան կամ ներիչխանութեան առաջ բացեց երկիւղի մի մեծ դուռ, բայց միաժամանակ ոչ միայն որեւէ ապդու քայլ չարաւ յօդուտ հայերի, այլեւ չնորհիւ իր եսամոլ, նախանձոտ ու ոճրագործ ընթացքին, միանգամայն ապահովեց Մեծ Մարդասպանին՝ իրագործելու հայկական կոտորածների գժոխային ծրագիրը։

* * *

Եթէ մենք ճիշդ ամփոփեցինք օտար հեղինակների մատնացոյց արած պատճառները, ապա հարցնում ենք.— ի՞նչ մաս ունեն այդ պատճառների մէջ հայ յեղափոխականները, որոնց մեղադրում է այսօր ամբոխային տրամարանութիւնը։

Մի՞թէ նրանց քարոզների չնորհիւ էր, որ հայ ժողովուրդը սկսեց պերազանցել տաճիկներից իր աճելութեան ուժով, տնտեսական յառաջդիմութեամբ, կուլտուրայով...

Մի՞թէ նրանք ստեղծեցին հայերի մէջ մտաւոր շարժում, առաջ բերին ազգային ինքնաճանաչութիւն, ազատեցին Պուլկարիան եւ հիմք դրեցին «հայկական հարցին»...

Մի՞թէ նրանք թշնամացրին Ռուսաստանը Թուրքիայի հետ կամ մօտեցրին դրանց սահմանները, կոչնելով Փոքր Ասիան Կովկասին...

Մի՞թէ նրանք խրախուսեցին Եւրոպայի անտարբերութիւնը, չահասիրութիւնը, մարդակերութիւնը...

Կարծում ենք թոյլ կը տրուի մեզ պատասխանել՝ ո՛չ։ Բայց այդ բաւական չէ։ Հայ յեղափոխականները ոչ միայն մաս չունին կոտորածների այդ իսկական պատճառներում, այլեւ — խորին համոզմունքով պնդում ենք — նրանք իրենք, ամբողջ հայ յեղափոխական շարժումը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյնպէս մի անհրաժեշտ բնական հետեւանք միեւնոյն տնտեսական ու պատմական-քաղաքական պատճառների։

II

Բայց եթէ յեղափոխական շարժումը չի կարող պատճառ համարուել հայկական կոտորածների, նա դուցէ այս կամ այն դէպքում ծառայել է իբրեւ առիթ, իբրեւ պատրուակ այդ կոտորածները սկսելուն։ Ինչո՞ւ ուրեմն տալ առիթ կամ պատրուակ, կարող է ասել ընթերցողը, ինչպէս ասում են շատերը եւ դրանց թւում, — թէեւ երբեմն շատ ծուռ ու մուռ ձեւերով, — նոյնիսկ մի քանի հայասէր եւրոպացիներ։ Քննենք հարցը եւ այս տեսակէտից։

* * *

Ով սովոր է հասարակական երեւոյթները քիչ-շատ կանոնաւոր կերպով ընդհանրացնելու, ի հարկէ գիտէ, թէ որքան ուժեղ է իրերի ընդհանուր հոսանքը պատմական առանձին դէպքերի, առանձին անցքերի դէմ։ Նա գիտէ, որ տարիներն ու տասնեակ տարիները, որոնք կարող են նշանակութիւն ունենալ անհատի կեանքում, պատմութեան մէջ մի-մի վայրկեաններ են լոկ, որոնց հիման վրայ դժուար է որեւէ դուշակութիւն անել։ Նա գիտէ, թէ ո՛րքան անիմաստ է ամբոխային տրամաբանութեան սովորական ընթացքը։— ամէն երեւոյթ դատել այն անմիջական տպաւորութիւնների համեմատ, որ ստանում է անհատը կեանքի այս կամ այն հարուածներից։ Նա գիտէ, ի՛նչ է նշանակում խօսել «առիթի» կամ «պատրուակի» մասին այնտեղ, ուր կան ներքին, հիմնական պատճառներ։

Ահա այդպէս վերաբերուելով կեանքի պատմական ելեւէջներին, մենք մեզ համար միանգամայն պարզ ենք համարում հետեւեալ չորս դրութիւնները։

1։— Երբ կան հիմնական պատճառներ ո՛րեւէ երեւոյթի առաջ գալու համար, առանց ակներեւ «առիթի» էլ երեւոյթը զարգանում է։

2։— Երբ չկան հիմնական պատճառներ, նոյնիսկ խոշոր դէպքերն էլ «առիթի» նշանակութիւն չեն ստանում։

3։— Երբ կան հիմնական պատճառներ, հարկաւոր դէպքում «առիթ» կամ «պատրուակ» երբեք չի պակասիլ։

4։— Երբ կան հիմնական պատճառներ, դը-

բանց դէմ կռուող բոլոր միջոցները ոչ միայն վնասակար չեն կարող լինել, այլեւ միանգամայն անհրաժեշտ հակակշիռ պիտի համարուեն։

Այս կէտերի համաձայն էլ մենք կը դասաւորենք մեր ասելիքը։

* * *

Բոլորիս յայտնի են այն կատաղի հալածանքները, որ վերջին տարիները ռուս կառավարութիւնը յարուցել է հայերի դէմ։ Մեզ համար այդ ամէնը շատ հասկանալի է այն տեսակէտից, որ հայ տարրը վերջին ժամանակներս տնտեսապէս եւ մտաւորապէս ուժեղանում էր Կովկասում, իսկ ռուսական անընդունակ բիւրոկրատիան եթէ շատ բան էլ չի հասկանում, դոնէ այդքան հասկանում է, որ իր սեփական ուժը պահպանելու հիմնաքարը հպատակների թուլութիւնն է։ Նոյն տեսակէտից մեզ համար միանգամայն պարզ են նաեւ հրեաների պարբերական ջարդերը հարաւային Ռուսաստանում եւ մի շարք ուրիշ երեւոյթներ։ Բայց հարցնում ենք. ի՞նչը «առիթ» տուեց այդ բոլորին։ Որ հրեաները իբրեւ մի ամբողջութիւն, ամէն բանով հետաքրքրւում են, բացի քաղաքական հարցերից, այդ յայտնի է ամբողջ աշխարհին։ Որ հայերը Ռուսաստանում ամենախոնարհ կերպով համակերպում են կառավարութեան բոլոր հարուածներին, այդ եւս ստոյգ է.

ռուսաց կառավարութեան բոլոր խուզարկութիւններն ու ձերբակալումները, գաղտնի հսկողութիւններն ու բաղմաթիւ քննութիւնները երբեք չկարողացան այդ կառավարութեան դէմ ո՛րեւէ ագիտացիայի, ո՛րեւէ գաղտնի գործունէութեան հետքեր գտնել։ Կարո՞ղ է միթէ խօսք լինել սրանից էլ աւելի «խոհեմութեան», «զգուշութեան», «չրջահայեցութեան» մասին։ Եւ սակայն հայերին Կովկասում հալածում են, հալածում են անվերջ, ամենէն անսիրտ, ամենատրխմար կերպով։ Բայց երեւակայեցէ՛ք, ընթերցող, ի՞նչ կը լինէր, եթէ մէկը ձեզնից կովկասեան հայ գաղթականների առաջին փակման միջոցին, այսինքն 1885ին, չտանելով կառավարութեան բարբարոս կարգադրութիւնը՝ վճռէր ռուսահայերի մէջ այդ առթիւ առաջացած ընդհանուր դայրոյթի արտայայտութիւնը լինել եւ հայոց գաղթականներից մէկի կամ միւսի չէմքում տեղնուտեղը փոէր ռուս պաշտօնեաներից ոեւէ Կիրիլլովի կամ Պետրովի դիակը... Կարո՞ղ էր մի վայրկեան անգամ տարակուսել, որ այդ դէպքում յետագայ բոլոր հալածանքների «պատճառ», «առիթ», «պատրուակ» — ինչ կամենում էք — պիտի համարուէր այդ դիմադրութեան դէպքը։ Եւ ո՞վ գիտէ, կը բաւականանա՞ր արդեօք ամբոխային տրամաբանութիւնը միմիայն Ռուսաստանով, թէ Լոփանովների քաղաքականութեան (հայոց հարցի վերաբերմամբ) սկզբնապատճառն էլ նոյն այդ «սոսկալի»

դէպքը պիտի համարէր... Նոյնը, ի հարկէ կը լինէր եւ հրեաների մէջ, եթէ այնտեղ էլ որեւէ հակակառավարչական զոյն ունեցող իրողութիւններ տեղի ունենային: Ահա ուրեմն հալածանքների եւ ջարդերի կենդանի օրինակներ, որոնց համար ի զուր կը լինէր որեւէ ակներեւ «առիթ» փնտռելը:

Բայց անցնենք Թուրքիային:

1880 Թուի Սեպտեմբեր 11ին Բ. Դրանը ներկայացրած ընդհանուր մի ծանուցագրի մէջ վեց պետութիւնները, ի միջի այլոց, պնդում են.

«Հենց այն դարձուածները, որոնցով Բ. Դուռը իրեն իրաւունք է համարում խօսել հայաբնակ նահանգներում կատարուած յանցանքների մասին, ապացուցանում են, որ Դուռը չի ընդունում այն *անիշխանութիւնը, որ տիրում է* այդ նահանգներում, ոչ էլ իրերի դրութեան լրջութիւնը, որը եթէ շարունակուի, հաւանօրէն *պիտի առաջացնէ քրիստոնեաների ջնջումը այդ լայնատարած նահանգներում»:*

Ռուս սպայակոյտի գնդապետ Կարցով՝ ռուսաց աշխարհագրական ընկերութեան յիշատակարաններում «Քրտեր» վերնագրով իր մի յօդուածի մէջ բերում է հետեւեալ փաստը.

«1880 թուին Վանում տեղի ունեցաւ ֆիւրտ ցեղապետների մի համագումար (գլխաւոր խորհուրդը իսկապէս կայանում է Շամդինանում): Ասում են, որ տաճիկները զաղտնի առաջարկեցին նրանց՝ *վերջնականապէս ոչնչացնել* Քիւրտիստանում (?) դեռ եւս մնացած *հայերին*: Ոչ մի անկարելի բան չկայ այսպիսի մի առաջարկութեան մէջ, եթէ ի նկատի առնենք, որ այն ժամանակ նոր էր հրատարակուած հայերին ինքնավարութիւն խոստացող 61րդ յօդուածը: Զնայելով իրենց ատելութեան եւ արհամարհանքին դէպի հայերը, ֆիւրտերը սակայն չընդունեցին այդ առաջարկը, ինչպէս պատմում են, այն պատճառով, որ պետերից մէկը նկատեց. «Երբ մենք կը ջնջենք հայերին՝ տաճիկները մեզ վրայ կը յարձակուեն»:

Փաստը միանգամայն ճիշդ է եւ իր ժամանակին 900 հայեր Վանում ընդհանուր ստորագրութեամբ բողոքեցին կառավարութեան այդ ծրագրի դէմ: Բայց, ինչպէս տեսնում է ընթերցողը՝ թէ վեց պետութիւնների հաւաքական ծանուցագիրը, որ նախատեսում էր հայերի ջնջումը առանց սակայն կանգ առնելու համար հարկաւոր որեւէ «առիթի» վրայ եւ թէ հայերին ջնջելու ծրագիրը ու դրա իրագործման համարձակ փորձերը տեղի են ունեցել մի այնպիսի ժամանակ, երբ, որքան մեզ յայտնի է, հրապարակի

վրայ գոյութիւն չունէր ո՛չ մի հայկական յեղափոխական կազմակերպութիւն։

Ո՞ւր մնացին ուրեմն յանցապարտ «առիթները»...

* * *

Անցնենք մեր վերը բերած չորս դրութիւններից երկրորդին։

Գաղտնիք չէ, որ Թուրք ազգաբնակութիւնը Կովկասում մի օրրան է ամենասոսկալի աւազակութիւնների, որ Թուրք աւազակների անթիվ խմբերը Կովկասի մէջ կազմում են երկրորդ կառավարութիւն, որ նրանք երբեք չեն խնայում ռուս ոստիկանութեան ներկայացուցիչներին՝ աջ ու ձախ դնդակահարելով նրանց, եւ մինչեւ իսկ փորձեր են արել վերցնելու գաւառապետներ եւ նոյնիսկ նահանգապետ։ Ցայտնի է նոյնպէս, որ նոյն ռուս կառավարութիւնը կովկասեան ազգերից Թուրքերին սիրում է բոլորից աւելի։ Զարմանալի չէ՞։ Թուրքերը երկիրը անիշխանութեան են մատնում, կոտորում են իրենց ետեւից գնացող մանր ու խոշոր պաշտօնեաներին, ամէն տեղ իրենց հայրենակիցների մօտ գտնում են ապաստան եւ պաշտպանութիւն, սպառնում են մի դեղեցիկ օր երկիրը թողնել առանց կառավարիչների, բայց եւ այնպէս ռուսները այսօր հոգեղմայլ քնքշութիւն են տածում դէպի Թուրքերը, փոխանակ... փոխանակ նրանց ջարդելու, ինչպէս պիտի հետեւէր ամբոխային սովորական աշխարհահայեացքից։ Նոյն երեւոյթը տեղի ունի Տաճկաստանում, քրտերի վերաբերմամբ։ Շատ տեղ եւ շատ վաղուց քիւրտ աշիրէթները թշնամական, անկախ դիրք են բռնել տաճիկ կառավարութեան դէմ. բայց այն օրից, երբ վերջինս համոզուեց, որ քրտական ցեղերը իրենց ներկայ վիճակում եւ սեփական ուժերով միայն՝ անկարող են «Քիւրտիստանը» վերականգնել, նա ո՛չ միայն այլեւս չի հալածում քրտերին, այլ, ինչպէս գիտեն, նրանց վրայ է հիմնում հարկաւոր դէպքերում իր ուժը։ Ի՞նչ եզրակացութիւն կարող ենք հանել այս երեւոյթներից. — այն, որ քանի դեռ Թուրքերն ու քիւրտերը Կովկասում եւ Տաճկաստանում գտնւում են իրենց այժմեան տնտեսական դրութեան եւ կատարեալ տգիտութեան մէջ, նրանց ներւում են եւ դեռ շատ երկար ժամանակ պիտի ներուին հազար ու մի տեսակ «առիթներ»...

* * *

Լորտ Ստրատֆորտ դը Ռետֆլիֆ, որ համարւում է Տաճկաստանի լաւ բարեկամներից մէկը, իր «Արեւելեան խնդիրը» վերնագրով աշխատութեան մէջ ասում է.

«Տաճկաստանը թոյլ է, մոլեռանդ եւ վատ է կառավարւում... Արեւելեան հարցը մի փաստ է, մի իրականութիւն, որ ձգձգւում է անվերջ... Դա մի հրաբուխ է... որի *ժայթքումները կրկնը-ւում են* յաճախ, բայց այդ ժայթքումների *առիթ-ները անորոշ են* եւ ազդեցութիւնը՝ աւերիչ... Միթէ 1860 թուին Սուրիայում տեղի ունեցած կոտորածը մեզ համար *անսպասելի չէ՞ր*... Ունե՞նք արդեօք որեւէ լուրջ հաւաստիք, որ չեն *կրկնուելու* միեւնոյն սարսափները, միեւնոյն անխուսափելիութիւնը եւ նոյնանման դէպքե-ը... Տաճկական կայսրութեան արդի դրութիւ-նը որոշւում է նրա դէպի կատարեալ անզօրու-թիւն տանող *բնական ընթացքով*... Մենք չգի-տենք, արդեօք շուտո՞վ եւ ո՞րտեղ *կրկին կը ժո-ղովեն անգղներին նոր կոտորածները կամ խռո-վութիւնները*»:

«ժայթքումները կրկնւում են յաճախ», «ա-ռիթները անորոշ են», «դէպքերը անսպասելի», ասում է Ստրատֆորտ ու անցնում, որովհետեւ այդ ամէնը բխում է Տաճկաստանի դրութեան «բնական ընթացքից», որովհետեւ երբ մի պե-տութեան կեանքում գոյութիւն ունեն որոշ հիմ-նական պայմաններ, նրանք անդառնալի կերպով այսօր թէ վաղը պիտի առաջացնեն նաեւ իրենց ճակատագրական հետեւանքները բոլոր հարկա-ւոր ու ոչ հարկաւոր, բոլոր որոշ ու անորոշ «ա-ռիթ-պատրուակներով» հանդերձ:

Եւ իրա՛ւ: Մենք արդէն տեսանք, որ սուլթան Ապտիւլ Համիտ իր հայաջինջ ծրագիրը գործա-դրելու համար ջանքեր էր անում դեռ 1880 թուին, երբ ըստ երեւոյթին հայերի կողմից «առիթներ» չէին տրուած: Բայց մի՞թէ, եթէ այդ էլ չգիտե-նայինք, երբեւիցէ տաճիկ կառավարութեան հա-մար պիտի պակասէին «առիթ-պատրուակները»:

1880 թուի Մայիսին, հիւպատոս Էլերստ հե-ռագրում էր անգլիական կառավարութեան.

«Եթէ մի տարի առաջ (1879) չկար ոչ կեանքի, ոչ գոյքի ապահովութիւն, այժմ այդպիսի ապահովութիւն աւելի քիչ կայ: Եթէ առաջները աղքատութիւն կար, այժմ աւելի է. արդարադատութեան նշոյլ անգամ չկայ, իսկ յանցանքները, կաշառակերութիւնը եւ բռնութիւնները աւելացել են... Ամբողջ ազգաբնակութիւնը կատարեալ յուսահատութեան մէջ է եւ այժմ աւելի յաճախ, քան առաջ, *վրդովիչ փաստերը առաջ են բերում անկարգութիւններ եւ տեղական խռովութիւն-ներ*, մինչեւ անգամ *առանց մասնաւոր փոխա-դարձ համաձայնութեան եւ նախամտածութեան* խեղճ ռայաների կողմից, որոնք համբերութեամբ տանում էին բազմադարեան բռնութեան նշու�-մը»:

Ընթերցողին խնդրում ենք ուշադրութիւն դարձնել այս «առանց փոխադարձ համաձայնութեան եւ նախամտածութեան» դեռ 1880ին առաջացող «տեղական անկարգութիւնների եւ խռովութիւնների» վրայ։ Հրաւիրում ենք նրան ծանօթանալ հիւպատոս Կլէյտոնի մի հեռագրի հետ, ուր նա նկարագրում է մի ինչ որ պինպաչու հարբստահարութիւնների պատճառով ծագած այդ տեսակ խռովութիւններից մէկը (Կապոյտ գիրք, 1881)։ յիշեցնում ենք նրան, որ Տաճկաստանում լապտերներով պէտք չէ փնտռել «վրդովիչ փաստեր»։ առաջարկում ենք մտաբերել 1880ի Վանի բողոքագիրը։ խնդրում ենք ի նկատի առնել, որ հայ ժողովուրդը այնքան ստորնացած չէր, որ միշտ լռութեամբ տանէր իր դժոխային դրութեան ամբողջ ծանրութիւնը, — եւ այս բոլորից յետոյ կրկնում ենք մեր հարցը։— մի՞թէ իրաւ որ հայկական հալածանքների համար «առիթներ» պիտի պակասէին Հայաստանում, եթէ յեղափոխական կազմակերպութիւնների գործունէութիւնը չլինէր։

Վերջապէս, հայկական անօրինակ աղէտների համար անպատճառ «առիթներ» որոնողներին կ՚առաջարկէինք փոքր ինչ կանգ առնել նաեւ ուրիշ կարգի մի շարք երեւոյթների վրայ, որոնք հայ ժողովրդի թոյլ ցնցումների դիմաց, գուցէ աւելի մեծ, աւելի նշանաւոր «առիթներ» համարուեն։

Այդպէս՝ հայկական հարցով հետաքրքրուող բոլոր հեղինակները պնդում են, թէ տաճիկ կառավարութիւնը շատ լաւ գիտէր, որ հայ ժողովուրդը ապստամբութեան համար չունի «ոչ փող, ոչ զէնք», եւ այդ պատճառով հայերի յեղափոխական ձգտումներից նա երբեք երկիւղ չունէր։ Հայկական հարցը վտանգաւոր էր Տաճկաստանի համար, — ասում են միեւնոյն հեղինակները, — այն տեսակէտից, որ խնդրի հետ կապուած էր եւրոպական միջամտութիւն — մի հանգամանք, որ միշտ սոսկում է ապդել թուրքերի վրայ։ Եթէ մի բոպէ ընդունենք այդ տեսակէտը, այն ժամանակ պէտք է ընդունենք նաեւ, որ հայ յեղափոխական ձեռնարկների հետ չեն կարող համեմատուել իրենց դրդռիչ ազդեցութեամբ ոչ 1879 թուին Անգլիայում ծագած ծովային ցոյց անելու միտքը, ոչ մեծ պետութիւնների բազմաթիւ անգամ կրկնած պահանջները, ոչ Սասունի քննիչ յանձնաժողովը, ոչ բարենորոգումների ծրագիրը եւ ոչ էլ նոյնիսկ Մեծ Ծերունու չանթող լեզուն, որի ուժը սուլթան Համիտ զգացել էր դեռ 1876 թուին։

Ահա թէ ինչ են ասում այդ կարգի երեւոյթների մասին մի քանի հեղինակներ։ Դոկտոր Լեփսիուսի գրքում կարդում ենք։

«Հայ ազգաբնակութեան ջնջման այդ ծրագիրը արդէն տարիներից ի վեր պատրաստուած էր։

եւ այդ ջնջման գործը կատարելու համար նշանակուած գործիքները խորին լռութեան մէջ աշխատում էին, երբ Դուռը հարկադրուեց՝ Հայաստանի մէջ բարեհորոգումներ *մտցնելու ստիպողական պահանջի պատճառով՝ արագացնել այդ շարժումը*: Այն ժամանակ նա որոշեց, ամբողջ Եւրոպան իր դէմ ոտքի հանելու վտանգի տակ՝ մէկ հարուածով բնաջինջ անել հայ ազգը եւ վերջ դնել այդ ատելի քրիստոնէութեան, որ անդադար *Եւրոպայի համակրութիւններն էր գրգռում*: *Ջարդերը կատարուեցին մի յայտագրի համաձայն, որի մէջ տեղերը, վայրկեանը, զոհերի ազգութիւնը եւ մինչեւ անգամ սպանութիւնների ու թալանի եղանակը նախատեսնուած էին»*:

Նոյն հեղինակը մի ուրիշ տեղ.

«Մի բարձր թուրք պաշտօնեայ՝ խօսելով հայկական հարցի մասին՝ հետեւեալ կարծիքն է յայտնել. «Մի՛ խաբուիք կառավարութեան այն *անմիտ տեղեկագիրներով*, որոնք ճիգ են թափում՝ կոտորածների մեղքը հայերի վրայ ձգելու: Կառավարութիւնը հայերին պատժելու համար մի նախագծած ծրագիր ունէր. սուլթանը գայրացած էր, որ իրեն *ստիպում էին բարեհորոգումներ* տալու եւ դրա համար բարեհորոգումների ծրագիրը ստորագրուելուց յետոյ նա հրաման տուեց ջարդել հայերին՝ իր զօրութիւնը ցոյց տալու համար»:

Ականջ դնենք եւ Տիլոնին.

«Անկողմնակալ դիտողը, որ ծանօթ է Տաճկաստանի եւ նրա բնակիչների սոսկալի դրութեանը... համարձակ պիտի պնդէր, որ *հրապարակային ժողովների մէջ համակրութեան արտայայտութիւնները*, որոնց հետեւում է կատարեալ անգործութիւն, ոչ միայն աւելի վատ են, քան իրական օգնութիւնը, այլ դրականապէս *վնասակար են*... Աւելի լաւ չէ՞ր՝ լռէիք բոլորովին Սասունի կոտորածների առթիւ եւ աչքերս փակէիք մահու սարսափների առաջ, քան կատաղութեան չափ գրգռէիք տանկին (քննիչ մասնաժողով ուղարկելով) եւ ապա թողնէիք նրան կատարելապէս ազատ՝ իր չարութիւնը քրիստոնեաների գլխին թափելու»...

Ահա թէ ինչ է ասում եւ պրն. Լաուէր՝ ամերիկացի միսիոնար Գրինի գրքի առաջաբանում.

«Իմ համոզմունքն է, որ այդպիսի փոփոխութիւններ (բարեփոխում Տաճկաստանի) ներկայումս կարող են ձեռք բերուել, եթէ քաղաքակիրթ աշխարհում արդէն առաջ եկած հետաքրքրութիւնը արտայայտուի խելացի եւ վճռական գործողութեամբ: *Ցոյս դրած այդպիսի գործողութեան վրայ, ես հրատարակում եմ այս փոքրիկ գիրքը*: Եթէ իմ յոյսը չարդարանայ, ապա

այս գիրքը, — ինչպէս եւ տաճկական տիրապետութեան զոհերի օգտին տեղի ունեցող ամբողջ ագիտացիան, — միայն աւելի կը սաստկացնի ճնշումը»։

Տեղը չէ, ի հարկէ, այստեղ ասելու, թէ որքան իրաւացի է՝ Գրինի գրքի հրատարակութիւնը «խելացի եւ վճռական գործողութեան» համար աւելի նպաստաւոր հանգամանք նկատել, քան հայ յեղափոխականը կարող էր համարել իր ռումբը, որով նա որոտում էր Թուրքիայի սրտում. փաստերը արդէն կատարուել են. գիրքը հրատարակուել է, ռումբն էլ պայթել — երկուսն էլ «յոյսները դրած քաղաքակիրթ աշխարհի խելացի եւ վճռական գործողութեան վրայ»... Տեղը չէ նաեւ քննել, թէ ո՞ր չափով արդար է Տիլոնը, «վնասակար» գտնելով Անգլիայի միջամտութեան փորձերը։ Մեզ համար հետաքրքիրն այն է, որ հետեւելով այդ հեղինակներին, մենք պիտի համարենք սուլթանին գրգռելու մի մի խոշոր «առիթներ» նաեւ բարենորոգումների ծրագիրը, դեսպանների դիմումները, փարլամենտական հարցաքննդումները, Սասունի քննիչ մասնաժողովը, հայոց դատին նուիրուած բոլոր համակրական միթինկները, հրատարակութիւնները եւայլն եւայլն։ Գուցէ, այդ այդպէս էլ է, — մենք չգիտենք, բայց եւ այնպէս փաստն այն է, — որ մենք դեռ չենք պատահել մի հայի, որ չուզենար

Ռուբէն Զարդարեան,
Քրիստափոր Միքայէլեան, Է. Ակնունի

հայկական հարցը միշտ յուղուած տեսնել Եւրոպայի մէջ, մենք դեռ չենք լսել եւ ոչ մի ձայն, որ ուղղուած լինէր մեր անբախտ ժողովրդի վիճակին արձագանգ տուող որեւէ քայլի դէմ, որ անշահախնդրաբար արել են օտարները: Եւ ո՞ւմ բերանը կը բացուէր այդպիսի մի դատապարտութեան համար: Սակայն տեսնո՞ւմ էք, որ շատ յարգելի անձնաւորութիւնների կարծիքով, այդ բոլորը նոյնպէս կարող էր «առիթ» ծառայել... Այո՛, ընթերցող, երբ կան հիմնական պատճառներ, խնդրի հետ կապուած ամէն մի երեւոյթ ինքնըստինքեան «առիթ» կամ «պատրուակ» կարող է համարուել, եւ դրանով չէ, որ չափւում է երեւոյթի նշանակութիւնը:

Դա լոկ մեր տեսակէտը չէ, այլ պատմական մի ճշմարտութիւն:

III

Մենք արդէն ցոյց տուինք հայկական աղէտների հիմնական պատճառները եւ այսպէս կոչուած առիթ կամ պատրուակների դերը այդ աղէտների մէջ: Ժխտելով միանգամայն, թէ հայ յեղափոխական շարժումը մեր անհամար կուստների հիմնական պատճառների շարքում որեւէ տեղ է բռնում, մենք ցոյց տուինք նաեւ, որ այդ շարժումը նոյնիսկ առիթ կամ պատրուակ

համարուել կարող է միմիայն սահմանափակ, պայմանական մտքով — նոյնչափ, որչափ առհասարակ հայ ժողովրդի ազատութեան խնդրի հետ կապ ունեցող ամէն մի, թէկուզ չատ ցանկալի, թէկուզ բոլորից ջատագովուող երեւոյթ:

Այդպիսով պարզւում է մեզ համար, որ այն բոլոր զանգատները, որոնք այսօր ծանրանում են յեղափոխական շարժման կամ ձեռնարկների վրայ, — իբրեւ կոտորածների պատճառ կամ ոգիթ, — իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ ամբոխային տրամաբանութեանը յատուկ խառնիճաղանճ ճիշեր, որոնք անխուսափելի են դառնում, երբ մարդիկ կամ անընդունակ են ըմբռնելու այդ շարժման ամբողջ նպատակայարմարութիւնը եւ կամ զաղափար չունեն նրա զարգացման համար անհրաժեշտ պայմանների մասին: Հազար ու մի տեսակ ձեռնպահութիւններ, պայմանական համաձայնութիւններ, «թէեւ» ու «բայց»երի հետ համեմուած համակրութիւններ կամ հակակրութիւններ. դրանք բոլորը խղճուկ մտքի արտայայտութիւններ են, որոնց տակ թաղնուում է կամ փափուկ կեանքի սիրահար հակայեղափոխականի դժգոյն ու անտարբեր դէմքը կամ թէ եսամոլ իմաստակի աղքատիկ հոգին: Հարցերը ուրեմն այդպէս էլ դնենք, այսինքն՝ տեսնենք.

1. Որքա՞ն անխուսափելի, որքա՞ն բնական և միաժամանակ որքա՞ն ցանկալի էր հայ յեղափոխական շարժումը, եւ

2. Որքա՞ն նպատակայարմար էր նրա գործնական ընթացքը կամ ուրիշ խօսքով՝ նրա ընդունած տակտիկան, անմիջական կուռում:

* * *

Սկսենք առաջին կէտից:

Տաճկական կեանքի ի սպառ անբարոյականացած, անսահման տգէտ ու մոլեռանդ մթնոլորտը կապուած այն ընդհանուր ատելութեան եւ մշտական վտանգի զգացմունքների հետ, որոնք միշտ դեր են խաղացել տիրող տաճիկների եւ հալածեալ քրիստոնեաների յարաբերութիւններում, վազուց դրել էր Թուրքիայի քրիստոնեայ ժողովուրդներին այնպիսի հակակուլտուրական պայմանների մէջ, ուր ամենավայրենի հալածանքներ, անօրինակ հարստահարութիւններ, ստրկական իրաւազրկութիւն, կատարեալ անապահովութիւն, աղքատութիւն, պանդխտութիւն եւայլն դարձել էին մշտնջենական երեւոյթներ նրանց կեանքում: Եւրոպական պետութիւնների աչքածակութիւնը դէպի քայքայուող Թուրքիան լրացընում էր երկրի խառն, անապահով, տագնապալից ներքին կեանքը. եւ ահա տաճկահպատակ քրիստոնեաների համար ստեղծուել էր իրերի մի դրութիւն, որի ճնշման տակ նրանք օրէցօր, ժամ-ժամ բարոյապէս աւելի եւ աւելի պիտի ընկնէին, տնտեսապէս թշուառութեան հասնէին,

մտաւորապէս յետադիմէին, քաղաքականապէս Ջնջման սիստեմի մշտական առարկայ լինէին։

Այդ էր պատճառը, որ տաճկական բռնութեան տակ հեծող Ցունաստանը յուղւում էր դեռ 18րդ դարից սկսած. այդ էր պատճառը, որ Կրետէ, Լիբանան, Սերպիա, Զերնոգորիա, Ռումանիա, Պոսնիա, Հերցեկովինա, Պուլկարիա, կռուելով, ոմանք հարիւր տարուց աւելի, ոմանք պակաս, իրենց մեծաքանակ զոհերի գնով միանգամայն ապացուցեցին, թէ որքան անտանելի էր տաճկական լուծը «խաղաղ» կեանքով ապրելու համար։ Նոյն պատճառն էր, որ դեռ 1774 թուին, ռուսաց կայսրուհի Եկատերինա Բ.ի օրով՝ Քիւչիւք-Քայնարճիի դաշնագիրը դրեց տաճկահպատակ սլաւոնիներին ռուսաց կառավարութեան պաշտպանութեան տակ։ Նոյն այդ պատճառովն էր, որ դեռ 1815 թուին ռուս կառավարութեան մի ծանուցագիր եւրոպական պետութիւններին՝ առաջարկում էր Եւրոպայի ընդհանուր հովանաւորութեան տակ դնել տաճկահպատակ քրիստոնեաներին։ Նոյն այդ պատճառովն էր, որ Անգլիա, Ֆրանսա, Աւստրիա եւ Փրուսիա 1854 Ապրիլ 9/21ին հաւաքական արձանագրութեամբ պահանջում էին «տաճկահպատակ քրիստոնեաների քաղաքական եւ կրօնական իրաւունքների ապահովում» — մի պահանջ, որ քիչ յետոյ, 1856 թուի Մարտ 30ին, Փարիզի դաշնագրում 9րդ յօդուածը դարձաւ, իսկ 1860 թուի Օդոստոսի 3ին իրաւունք տուեց Աւստրիային, Փրուսիային եւ Ռուսաստանին՝ կրկին առանձին արձանագրութեամբ, պարտաւորել Տաճկաստանին՝ «ընդունելու լուրջ վարչական միջոցներ՝ օսմանեան կայսրութեան ամէն դաւանութեան քրիստոնեաների կացութիւնը բարելաւելու համար»։ Եւ այդպէս չարունակ՝ մինչեւ աւստրիական մինիստր կոմս Բէյստի առաջարկութիւնը 1867 թուին, — բոլոր տաճկահպատակ քրիստոնեաներին տալ սահմանադրութիւն, — եւ վերջապէս մինչեւ Պերլինի դաշնագիրը։

Նիւթի հանրածանօթ լինելը ստիպում է մեզ չծանրանալ յատկապէս հայ ժողովրդի նախայեղափոխական «երջանիկ» դրութեան նկարագրութեան վրայ։

Հարիւր հաղարաւորների գաղթումներ, սկսած 18րդ դարից, բռնի գաղթականութիւն ռուսաց սահմանակից նահանգներից դէպի Տաճկաստանի խորքերը (Սերգէյ Գլինկա — «Հայերի գաղթականութիւնները»). հարիւրաւոր գիւղերի ու վանքերի հողերի յափշտակում (1872 եւ 1876 թուի պատրիարքական տեղեկագիրներ). հարիւրաւոր ուրիշ գիւղերի կատարեալ աւերում (Կապոյտ գիրք, 1880 թ.) մասնակի կոտորածներ եւ հայերի ջնջման բացայայտ ծրագիր (Բայազէտ 1877 թ., Զէյթուն ու Քեամիլ փաշա 1879 թ. եւայլն). բազմաթիւ գաւառների բռնի իսլամացում (մանաւանդ Կարինի եւ Տրապիզոնի նա-

հանդներում)· կամաւոր կրօնափոխութիւն դէպի կաթոլիկութիւն ու բողոքականութիւն՝ նիւթական նպաստներ կամ օտար պետութիւնների հովանաւորութիւն ձեռք բերելու ակնկալութեամբ (ամբողջ Թուրքաց Հայաստանը)· պարբերական սով տասնեակ հաղարաւոր զոհերով (1880 թ.) հարիւր հաղարաւոր չերքէզների, տաճիկների, լազերի, քրտերի եւ Թարաքամաների Հայաստան եւ Փոքր Ասիա տեղափոխելը — ահա նախայեղափոխական «երջանիկ» դրութեան մեծաքանակ «բարիքները», ահա այդ դժոխային դրութեան սոսկալի արտայայտութիւնները: Եւ այս բոլորի հետ ընթանում էր հայ ժողովրդի առօրեայ կեանքը — մշտական երկիւղի, անպատուութեան ու անվերջ զրկանքների այդ դժբախտ առարկան:

Բայց տեղ տանք օտար հեղինակների մի քանի ընդհանուր դիտողութիւններին եւս:

«Դեռ 1855 թուին,— *ասում է Պրայս*,— զօր· Սըր Ֆ· Վիլիեմ գրում էր, որ հայկական նահանգները ըստ ամենայնի տառապում են սիստեմական անարգ հարստահարութիւնների տակ, եւ բնորոշում էր թուրք կառավարութիւնը իբրեւ բռնակալութեան մի այնպիսի *մեքենայ, որ իր նմանը չունի* ամբողջ աշխարհում»:

Իրլանդացի դոկտոր Ռայտ, Սուրիայում եւրիցական առաքելութեան մեծաւորը, 1877 *թուին իր հրատարակած մի գրքում ի միջի այլոց ասում է·*

«Տաճիկները աւերմունք են գործում ոչ միայն վայրագ կատաղութեամբ, այլեւ կատարեալ սառնասրտութեամբ եւ միանգամայն համաձայն իրենց իրաւագիտութեան, օրէնսդրութեան ու հաւատին··· թուրք կայսրութեան մէջ հազիւ թէ գտնուի մի գիւղ, որ չունենայ իր զարհուրելի յիշողութիւնները, այնքան զարհուրելի, որ անկարելի է մտածել կամ խօսել նրանց մասին»:

Կոտորածները, գրում է Տիլոն, «երկնքի ողորմութիւն են», համեմատած հայերի «ամէնօրեայ» դժոխային դրութեան հետ»:

«Երդմամբ հաւատացնում ենք ձեզ, — *գրում են խնուսցի հայերի 36 ներկայացուցիչները անգլիական ազգին ուղղած խնդրագրում*, — որ Սասունի մէջ տեղի ունեցած կոտորածը միմիայն մի կաթիլ է հայկական *արեան ովկիանոսում*, որ հետզհետէ եւ լոելեայն թափւում է ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ···»

Կրկին յիշեցնելով, որ Ռոլէն Ժակմէ հրատարակել է իր գիրքը Հայաստանի աղէտներից շատ առաջ, բերում ենք նրանից հետեւեալ տողերը·

«Չի կարելի երեւակայել աւելի սարսափելի դրութիւն, քան թշուառ, ստրկացած, անպատուած եւ կեղեքուած հայ ժողովրդի դրութիւնը... Ամէն տեղ, ամէն քայլափոխում աւերման ու բռնակալութեան ոգին արտայայտւում է հազարաւոր ձեւերով եւ եթէ մեր արեւմտեան նոյնիսկ ամենահամբերատար ժողովուրդներից մէկին վիճակուէր ենթարկուել այդ աղէտներին, թէկուզ միայն մի օրուան ընթացքում, իսկոյն դուրս կը թռչէր նրա կրծքից *զայրոյթի աղաղակ*... եւայլն եւայլն»:

Այսպէս են խօսում նախայեղափոխական «երջանիկ» չրջանի մասին փաստերը, այսպէս է խօսում կեանքը, այսպէս են վկայում Թուրքաց Հայաստանի կեանքին ծանօթ մարդկանց հարիւրից իններորդ ինը:

Բայց ի՞նչ է ասում մեզ այս բոլորը: Միակ եզրակացութիւնը, որ մենք կարող ենք անել, այդ այն է, որ հայկական կեանքը վաղուց եկել, կանգ էր առել մի խոշոր տիլեմայի առաջ.— կամ անպայման բնաջնջում իբրեւ մի ամբողջութիւն, իբրեւ մի ազգութիւն, իբրեւ մի հայրենիքի տէր ժողովուրդ, կամ թէ դիմադրութիւն՝ կեանք, պատիւ, ստացուածք, տուն, հայրենիք, ամէն ինչ բռնաբարող ուժի դէմ: Միջին ուղիների սիրահարները, ինչպէս վայել է իրենց, ի հարկէ, այստեղ էլ գտնում էին մի երրորդ ելք, կարծելով, թէ հայ ժողովուրդը իր կուլտուրական հակումների չնորհիւ յաղթող պիտի հանդիսանայ իրեն չրջապատող տխուր մթնոլորտում, առանց զէնքի դիմելու եւ դրանով պիտի աւետէ արաբաչխարհին մի նոր սկզբունք, որ մարդկային պատմութիւնը իր ամբողջ տարածութեան վրայ միչտ անտես է արել — այն է, որ կարելի է ազատութիւն ձեռք բերել լոկ «քաղաքակրթական խաղաղ պատերազմով»:

Սակայն օրէցօր աւելի եւ աւելի ծանրացող դառն իրականութիւնը *մի կողմից՝ եւ միւս կողմից այդ սոսկալի դրութեան գիտակցութիւնը հայ հասարակութեան այն մասերում, որոնց սթափեցրել էր մեր* մտաւոր շարժումը, *հետզհետէ գալիս էին համոզելու հայերին, որ նրանք լաւ կ՝անեն, եթէ առայժմ հրաժարուեն այդպիսի մի մեծ ծառայութիւնից յօգուտ ընդհանուր մարդկութեան, եւ որ ընդհանրութեան մեծ ծառայութիւններ մատուցանելու համար հարկաւոր է նախ պաչտպանել եւ ապահովել սեփական գոյութիւնը: Եւ երբ դրութիւնը ստանում է այդպիսի սուր կերպարանք, երբ պարզւում է, որ իրերի ընթացքը ինքնըստինքեան դէպի կորուստ է տանում, բնական չէ՞ արդեօք, որ մի ժողովուրդ այդպիսի հանգամանքներում ընտրի այն, թէեւ վտանգաւոր, բայց եւ յուսատու ուղին, որ զոհերի հետ միասին խոստանում է նաեւ որեւէ ապագայ: Առաջին դէպքում անխուսափելի է անպատիւ, տը-*

մարդի, ժողովրդի անհուն ստորնութիւնը ապացուցանող անպայման կորուստ. երկրորդը միայն մի վեհ, մի փայլուն, մի սրբազան ոիսf է պայմանական յաջողութեամբ: Ապահով եւ պատուաւոր կեանքի հզօր բնազդը՝ այն յաւիտենական, հրաշագործ բնազդը, որով ապրում ու գործում են ժողովուրդները, թէեւ շատ թուլացած, բայց բարեբախտաբար դեռ ի սպառ չէր բթացած հայ ժողովրդի որոշ տարրերի մէջ եւ միմիայն այդ բնազդը բաւական էր արդէն մահարեր տիլեմայի դիմաց՝ ինքնապաշտպանութեան բոլոր ղղացմունքները նրանց մէջ լարելու համար: Բայց մենք ունեցանք եւ մի ուրիշ զօրեղ նպաստաւոր հանգամանք, որը վերջապէս պիտի որոշէր, արագացնէր հայութեան ելքը այդ տատանման շրջանից: Այդպիսի մի հանգամանք եղաւ Պերլինի դաշնագիրը իր 61րդ յօդուածով: Եթէ մինչեւ այդ յօդուածը՝ ջնջման հեռանկարից խուսափել ուզենալով, ջլատուած, տկարացած, եւ իր տրխուր անցեալի բաղմաթիւ բացասական հետքերը կրող հայը՝ կարող էր նաեւ վախենալ ոիսfի վրտանդից, — այդ յօդուածով հայութիւնը իրեն արդէն դաշնակից է տեսնում եւրոպական ամբողջ վեց պետութիւններ, եւ յաջողութեան պայմանական յոյսերը ուղղակի հաւատի պիտի փոխարկուէին: «Je m'insurge, donc je suis», գոռում էր Եւրոպան եւ հայերին թիկունք կանգնում: Տատանումը այլեւս անկարելի էր, — եւ ահա ժողովրդի սրտից պայթում է յեղափոխական շարժումը, իր հոսանքի մէջ ընդգրկելով ժողովրդական հերոսների եւ զրական գործիչների մի ամբողջ շղթայ Մայր Երկրում եւ Եւրոպայում:

Հարցնում ենք ուրեմն, բնակա՞ն էր, ցանկալի՞ էր վերջապէս հայկական յեղափոխական շարժումը, թէ ոչ: Արդեօք յեղափոխական հոսանքը ինքը հարատաւ եւ միակ յուսատու զա՞ւկն էր իրական կեանքի, թէ նրա վրայ արուած արհեստական մի պատուաստ:

Եւ ընդհակառակն՝ եթէ կայ մի բան, որի մասին կարելի է ափսոսալ, արդեօք այն չէ՞, որ շատ ուշ ստեղծուեց այդ շարժումը մեր մէջ եւ որ դեռ մինչ օրս էլ մենք շատ թոյլ ենք այդ միակ յուսատու ճանապարհի վրայ: Գոնէ օտարները եւ նոյնիսկ տաճիկ կառավարութիւնը շատ բնորոշ են խօսում այդ մասին:

Մենք արդէն վերը ցոյց տուինք, որ օտար հեղինակներից ոմանք «հայ յեղափոխական գաղափարը» ուղղակի անուանում են «սարսափելի կացութեան հետեւանք»:

Բայց լսենք էլի մի քանիսներին եւ ամենից առաջ՝ հեղինակաւոր թուրք կառավարութեան:

1839 թուին սուլթան Ապտիւլ Մեճիտի ստորագրութեամբ հրատարակուած «Թանզիմաթը» հռչակում էր.

«Ոչ ոf, որքան էլ ի քնէ խաղաղասէր լինի,

չի կարող չդիմել բռնի միջոցների, երբ վտանգ-ում են նրա կեանքն ու պատիւը»:

Հոչակաւոր կանոնիկոս Մակ-Կօլ.

«Ես իսկոյն կը նկարագրեմ հայերի ջնջման այդ դիւային ծրագրի զարգացումը: Իսկ այժմ թոյլ կը տամ ինձ անկեղծօրէն ասել, որ հայերը եթէ որեւէ չնչին յոյս ունէին յաջողութեան վրայ, ոչ միայն իրաւունք պիտի ունենային, այլեւ իրենց *սրբազան պարտականութիւնը* պիտի համարէին *ապստամբել* եւ տապալել այն դժոխային կառավարութիւնը, որ դատապարտում է նրանց՝ մարդկային տարեգրութիւնների մէջ երբեւիցէ պատահած ամենաստոր նացուցիչ, ամենադաժան եւ յուսազուրկ ստրկութեան... Բարձր Դրան նրման աւազակային կառավարութեան զոհերը պարտաւոր չեն ամենեւին հաւատարիմ լինել նրան եւ *իրաւունք ունեն խորտակել* այդ կառավարութիւնը առաջին յարմար դէպքում... Ազգերի ամենամեծ շահը խաղաղութիւնը չէ, որովհետեւ կարելի է խաղաղութիւն վայելել եւ անարգ վատութեան մէջ, ուրանալով ամէն սրբութիւն»...

1880 *թուի Սեպտեմբեր 23ին բրիտանական հիւպատոս* Էլերստ *գրում էր Կարինից կոմս Գրանվիլին.*

«Միմիայն ժողովրդի համբերութեամբ, երկչոտութեամբ եւ նրա զանազան խաւերի մէջ եղած կապերի թուլութեամբ կարելի է բացատրել այն հանգամանքը՝ որ արեւելեան սանճաքները անցեալ տարի (1879) հարկերը բաժանելու միջոցին *չապստամբեցին* կառավարութեան դէմ, ոտքի կանգնելով իբրեւ մէկ մարդ»:

Տաս տարի այս խօսքերից յետոյ, այսինքն 1890 *թուին՝ նոյն տեղից գնդապետ* Զարմայտ *արդէն հաղորդում էր.*

«Վերջին տարիներս Կարինի եւ ուրիշ գաւառներում կազմակերպուող գաղտնի ընկերութիւններն ու կոմիտէները, զէնք ձեռք բերելու դիտաւորութիւններն ու փորձերը, վերջին ժամանակներս Վանում եւ շրջակայքում տեղի ունեցած դէպքերը, այդ ամէնը ցոյց են տալիս, որ իսկապէս գոյութիւն ունի խորին դժգոհութիւն: Եւ իրաւ, տարօրինակ կը լինէր սպասել ուրիշ բան, քան դժգոհութիւն»:

Լսենք եւ հեղինակաւոր Ռոլէն Ժակմէնի կարծիքը այդ մասին.

«Պոսնիան, Հերցեկովինան, Պուլկարիան 1856 թուի դաշնագրում արտօնեալ տեղ չէին բռնում: Այնտեղ նրանք մինչեւ անգամ չեն էլ յիշատակ-

ուած, ինչպէս չեն յիշատակուած Կրետէն եւ Լիբանանը: Ինչո՞ւ ուրեմն Եւրոպան եռանդուն կերպով շահագրգռուեց այդ երկրների քրիստոնեայ ազգաբնակութիւններով դեռ 1878 թուից շատ առաջ եւ ոչ մի պահանջ չներկայացրեց Հայաստանի քրիստոնեաների վերաբերմամբ: Դժբախտաբար, ես ոչ մի բացատրութիւն չեմ գտնում այս տարբեր վերաբերումների համար դէպի զանազան ազգերը, բացի այն, որ հայերը *փոխանակ ապրստամբելու* բաւականացան միայն գանգատներով··· Եթէ տանկական հալածանքները ենթարկուած հայերի մէջ խոր տենչանք են զարթեցնում՝ ստանալ ոչ միայն անձնական ապահովութիւն, այլեւ ընդհանուր ինքնավարութիւն այն հողի վրայ, ուր իշխել են նրանց նախնիքները, եւ դաշնագիրների գծած սահմաններում, — դա ամենեւին արդիւնք չէ սովորական ինտրիկի, այլ մի պատուաբեր երեւոյթ մարդկային բնաւորութեան համար, որ արիանում է աղէտների մէջ եւ չի բաւականանում գոյութեան լոկ նիւթական գոհացումով»···

Վերջապէս 1894 *թուի Փետրուար* 20*ին Ֆրանսական դեսպան* Կամպոն *իր կառավարութեանը տուած մի զեկուցման մէջ՝ ի միջի այլոց ասում է.*

«Իմ անցեալ տարուան զեկուցումները ծանօթացրին Կեսարիայում, Մարզուանում, Անգարայում տեղի ունեցած դէպքերի հետ··· Իր անգրագիտութեամբ Բարձր Դուռը *սրբագործեց* հայկական շարժումը, որ այժմ արդէն ունի իր նահատակները»···

Այդպէս ուրեմն, — եթէ ձեւակերպենք նոյնիսկ վերը յիշած մարդկանց բառերով, — տիրող հանգամանքներում հայկական շարժումը ոչ միայն անխուսափելի *էր, որովհետեւ այդ էր պահանջում «իրերի կացութիւնը», ոչ միայն* իրաւացի *էր, որովհետեւ ուրիշ ազգ պարտաւոր չէ անպատճառ հաշտուել «ամենադաժան ստրկութեան» հետ կամ մնալ «անարգ վատութեան» մէջ, ոչ միայն չատ* հասկանալի *էր, որովհետեւ «տարօրինակ» կը լինէր դրա փոխարէն տեսնել ուրիշ երեւոյթ, ոչ միայն* նպատակայարմար *էր, որովհետեւ հայը «առանց ապստամբելու» չէր կարող իր դրութիւնը ուրիշ կերպ բարւոքել, — այլեւ դեռ* վաղուց սպասելի *էր, որովհետեւ միմիայն «հարկերի բաժանումը բաւական էր հայերին ապըստամբեցնելու համար», այլեւ միանգամայն* պատուաբեր երեւոյթ *էր, որովհետեւ նա ապացուցանում է, թէ հայերի մէջ դեռ չեն մարել «մարդավայել բնաւորութեան» բնազդները, վերջապէս այսօր նա* սրբագործուած *մի դատ է, որովհետեւ ունի իր բազմաթիւ «նահատակները» — դժբախտ ժողովրդի բարօրութեան գաղափարի համար զոհուած նահատակներ···*

IV

Դիմենք այժմ գործնական ընթացքին, որ արտայայտուել է հայ յեղափոխական շարժման մէջ։

Կանգ առնելով ամենախոշոր գծերի վրայ, մենք պիտի յիշենք այստեղ Պոլսում կատարուած ցոյցերը, Սասունի, Վանի եւ Զէյթունի շարժումները, ռուս եւ պարսկական սահմաններից արուած արշաւանքները (Կուկունեան եւ Խանասոր), ապա մի ահագին շարք համարեա ամէն տարի կրկնուող կռիւների, որոնք կապուած են եղել զէնքի փոխադրութեան, հրոսակային խմբերի գործունէութեան կամ կազմակերպչական այլեւայլ գործերի հետ եւ վերջապէս բազմաթիւ տեռորական գործողութիւններ, ուղղուած պաշտօնական անձերի եւ մանաւանդ հայ լրտեսների ու դաւաճանների դէմ։ Ընդհանրացնելով այս յեղափոխական երեւոյթները, մենք կը տեսնենք, որ հայ յեղափոխական կուսակցութիւնները ցոյցեր ու արշաւանքներ են արել, ժողովրդական շարժումներ են առաջ բերել, զէնքի փոխադրութեամբ են զբաղուել, աշխատել են կազմակերպել ժողովուրդը կռուի համար, տեռոր են կատարել։

Ո՞րն է սրանից աւելորդը, վնասակարը, կոբբստաբերը։

Վերը բազմաթիւ օտար հեղինակների հետ

Քրիստափոր, Զաւարեան եւ երիտասարդ գործակիցներ՝ «Դրօշակ»ի խմբագրութեան բակին մէջ։

միասին մենք տեսանք, որ հայկական շարժումը մի բնական, մի շատ հասկանալի եւ միաժամանակ միանգամայն նպատակայարմար երեւոյթ է մեր կեանքում: Եթէ մենք չենք սխալուել այդ եզրակացութեան մէջ, ուրեմն, որոշելով հայկական շարժման էութիւնը եւ նպատակը, մենք կ'ունենանք պատրաստ կրեատերիում(*)՝ դրած հարցումին պատասխանելու համար. անմիտ, պարսաւելի, անպայման բացասական պիտի համարուեն այն ձեռնարկները, որոնք չեն համապատասխանում այդ որոշումից բխող պահանջներին, եւ ընդհակառակն՝ օգտակար, ցանկալի, դրական՝ նրանք, որոնք համապատասխանում են այդ պահանջներին:

Ի՞նչ էր ուրեմն մեր շարժման նպատակը: — Ուրիշ ոչինչ, եթէ ոչ կազմակերպուած ու բռնի ուժով կռուել, բողոքել Տաճկաստանում տիրող սպանիչ կարգերի դէմ, մինչեւ որ վեց պետութիւնների երաշխաւորած միջամտութեամբ այդ կարգերը դէպի լաւը կը փոխուեն:

Ինչպէս տեսնում է ընթերցողը, կազմակերպութիւն, բռնի ուժ, բողոք եւ վերջապէս եւրոպական միջամտութիւն առաջ բերելու նկատումները այս որոշման անհրաժեշտ տարրերն են կազմում: Կանգ առնելով այս տեսակէտի վրայ, մենք կարող ենք վերեւ դրած հարցը՝ թէ «ո՞րն է մեր

(*) Դատանիշ, չափանիշ:

յեղափոխական անցեալում տեղի ունեցած ձեռնարկներից աւելորդը, վնասակարը, կորստաբերը» վերածել այս ձեւի. — ո՞րն է դրանցից զուրկ այս տարրերից, ո՞րն է արդեօք դուրս մնում իբրեւ չափս ընդունած մեր որոշումից:

Բաւական է ամենաթեթեւ մի հայեացք ձգել յիշեալ գործառնութիւնների վրայ եւ մենք կը տեսնենք, որ նրանցից իւրաքանչիւրը ունի մեր որոշման բոլոր տարրերը:

Ցոյցերը, արշաւանքները եւ հրոսակային խմբերը կազմակերպում են կռուող ուժերը, ժողովրդականացնում են բողոքի ճանապարհը, կրթում են ժամանակակից սերունդը, վառ են պահում ժողովրդի դիմադրական տրամադրութիւնը, հարուածում են թշնամու հեղինակութեանը թէ ներսում՝ սեփական հպատակների աչքում, եւ թէ դրսում՝ օտարների առաջ, վնասում են կառավարչական շահերին, դրաղեցնում են եւրոպական հասարակական կարծիքը եւ դիւանատները, այսինքն առաջ են մղում միջամտութեան գործը, առնուազն թոյլ չեն տալիս խնդիրը մոռացութեան մատնելու, թէ իբրեւ միջազգային քաղաքական խնդիր եւ թէ իբրեւ աշխարհիս բոլոր ծայրերում ցրուած հայերիս համար ընդհանուր ազգային դատ:

Ժողովրդային շարժումները, իբրեւ յեղափոխական լայն ձեռնարկներ, իրենց ազդեցութեամբ, ի հարկէ, աւելի նշանաւոր են: Ամէն

տեղ եւ ամէն ժամանակ ապստամբութեան գաղափարը կապուած է եղել այդ տեսակ շարժումների հետ եւ այնքան վճռական դեր են ունեցել դրանք ժողովուրդների պատմական կեանքում, որ ազատութեան անունով սկսուած կռիւների գործնական նպատակն են կազմել միշտ: Պարզ է ուրեմն, որ հայկական շարժումը եւս չէր կարող խուսափել կռուի այդ ամենէն էական տարրից:

Զէնքերի փոխադրութեան, կազմակերպչական հաւար ու մի հոդսերի եւ կատարուած տեռորական գործողութիւնների մասին խօսելն արդէն աւելորդ է, որովհետեւ դրանք անհրաժեշտ միջոցներ են վերոյիշեալ գործառնութիւնների համար եւ յեղափոխական ամէն մի ծրագրում անշուշտ տեղ պիտի բռնեն:

Ահա՝ մի քանի խօսքով՝ մեր քննադատութեան ենթակայ ձեռնարկների դրական կողմերը: Ընթերցողին ենք թողնում լրացնել այս ընդհանուր գծերը կենդանի օրինակներով, որոնք կը պարզեն նրան, թէ որքան յեղափոխական յայտնի ձեռնարկները իրենց ժամանակին մեծ ազդեցութիւն են ունեցել մի կողմից՝ հայ հասարակութեան, հայ ժողովրդի տրամադրութեան վրայ, ներշնչելով նրան ոգեւորութիւն եւ հետաքրքրութիւն դէպի մեր դատը, մեր կռիւը, յեղափոխական կուսակցութիւնները եւայլն եւ միւս կողմից՝ եւրոպական դիւանագիտութեան վրայ, ստիպելով նրան որոշ դէպքերում սեղանի վրայ

դնել մոռացութեան մատնուած հայկական խնդիրը եւ ուրիշ դէպքերում՝ յատուկ խորհրդաժողովներ կազմել այդ խնդիրը արծարծելու համար։

Բայց գուցէ կան յեղափոխական կռուի ուրիշ միջոցներ, որոնք աւելի արդիւնաւէտ կարող էին լինել, քան մեր յիշածները։ Թող ցոյց տան մեզ՝ ովքե՛ր գիտեն այդպիսիք։ Իսկ մենք կարծում ենք, որ մեր յեղափոխական շարժումը, ի միջի այլոց, հենց նրանով էլ արտայայտեց իր կենսունակութիւնը, իր ճկունութիւնը եւ ամենէն աննպաստ պայմաններին յարմարուելու իր ընդունակութիւնները, որ նա կարճ ժամանակամիջոցում ըմբռնեց կռուի բազմազան միջոցները՝ սկսած համեմատաբար խաղաղ բնաւորութիւն ունեցող բողոքներից մինչեւ ուժանակի գործածութիւնը, սկսած անհատական տեռորներից մինչեւ ժողովրդական շարժումները։

Գուցէ, վերջապէս, այս բոլոր միջոցներին դիմելու կարիք չկար. գուցէ պէտք էր հետեւել որեւէ աւելի սահմանափակ ուղղութեան, որպէսզի չվատնելով մեր յեղափոխական ուժերն ու միջոցները բազմատեսակ գործերի վրայ, մենք կենտրոնացնէինք նրանց որոշ խնդիրների շուրջը։ Տեսնենք։

Համաձայն այն նպատակին, որ մենք յատկացրինք հայկական շարժման, յեղափոխական գործունէութեան եղանակը պիտի ի նկատի ունենար, ի միջի այլոց, եւրոպական միջամտութիւն առաջ բերելու բոլոր հնարաւորութիւնները։ Ահա՛ այն պայմանները, որոնք անհրաժեշտ էին դրա համար.— հարկաւոր էր, որ մեր բողոքները տեղի ունենային մեծ պետութիւնների աչքի առաջ. որ այդ բողոքները իրենց խիստ բնաւորութեամբ ընդունակ լինէին արտայայտելու կացութեան ամբողջ ծանրութիւնը. որ դրանք կրէին սիստեմատիկ եւ ոչ թէ պատահական երեւոյթների բնաւորութիւն. որ հայութիւնը երեւար իբրեւ մի ուժ, որին արհամարհել չէ կարելի, որի գոյութիւնը կարող է նպաստաւոր լինել եթէ ոչ մարդկային քաղաքակրթութեան, գոնէ այս կամ այն պետութեան համար եւ որի անհանգիստ, յեղափոխականօրէն բորբոքուած տրամադրութիւնը, ընդհակառակն, միանգամայն վնասակար՝ պետութիւնների շահերին։ Աւելացրէք այս բոլորին եւ այն պահանջները, որոնց պէտք է գոհացում տայ ամէն–մի կազմակերպութիւն, որ ձգտում է որոշ դեր կատարել ընթացիկ կեանքի մէջ, — այն է՝ մսխել իր ուժերն ու միջոցները ըստ կարելւոյն խնայողաբար, գրաւել բոլոր նպաստաւոր տարրերն ու հոսանքները, կանոնաւորել նրանց ընթացքը. եւ դուք կը հասկանաք, որ մեր յեղափոխական անցեալում գործադրուած կռուի միջոցների ոչ մի մասը ոչ պէտք էր եւ ոչ էլ կարելի էր զոհել յօգուտ միւսների։

Ցոյցեր եւ արշաւանքներ կատարելով, յեղա-

փոխականները գործում էին Պոլսում եւ Տաճկաստանի սահմանների վրայ: Պոլսի նշանակութիւնը կռուի գործի մէջ յայտնի է արդէն եւ մենք չենք ծանրանայ այստեղ դրա վրայ: Պոլսում յեղափոխականները ոչ միայն Տաճկաստանի սրտումն էին, այլեւ համաշխարհային նշանակութիւն ունեցող մի կէտում, ամբողջ Եւրոպայի աչքի առաջ, նրա շահերի անմիջական թատերաբեմում. մի ատրճանակի պայթում այնտեղ աւելի է լսելի աշխարհին, քան հարիւրաւոր հրացանների որոտումը երկրի խորքերում: Սահմանների վրայ գործելով, մենք նոյնպէս խուլ անկիւններում չէինք գտնւում, այլ այնպիսի վայրերում, ուր բնականաբար պէտք է շահագրգռէինք առնուազն երկու պետութիւն: Ցուցական այդ երկու տեսակի ձեռնարկները բաւարարութիւն են տալիս նաև տնտեսաբար ու սիստեմատիկ, տեւողական կերպով կռիւը տանելու պայմաններին, որովհետեւ դրանք պահանջում են համեմատաբար աւելի քիչ ուժ եւ միջոցներ, իսկ նախապատրաստութեան համար աւելի քիչ ժամանակ. մի հանգամանք, որ ոչ միայն կարեւոր է առհասարակ գաղտնի ձեռնարկների յաջող իրագործման համար, այլեւ էական նշանակութիւն ունէր այնպիսի օրերում, երբ վստահ լինելով Եւրոպայի օգնութեան վրայ, յեղափոխական կուսակցութիւնները պարտաւոր էին ձգտել ըստ կարելւոյն շուտ բարւոքել տալու ժողովրդի ծանր դրութիւնը: Հասկանալի է նաև,

որ այդ ձեռնարկները չէին հակասում երկրի գործունէութեան պահանջին. ընդհակառակն՝ նպատակ ունենալով թեթեւացնել երկրի մէջ տիրող ծանր պայմանները, դրանով միայն պէտք է դիւրացնէին եւ բնականաբար առանձին զարկ տային երկրի գործունէութեան:

Կան սակայն մարդիկ, որոնք ընդունելով ցուցական գործունէութեան կարեւորութիւնը մեր շարժման սկզբնական շրջաններում, հերքում են յետագայ ցոյցերի նշանակութիւնը: «Քանի որ մեր հարցը հերթական էր, պէտք չէր այս կամ այնինչ ժամանակ վերստին գրգռել թշնամուն» — ասում են դրանք համոզուած չեչտով, կարծես թէ երբ մի հարց հերթական է լինում, այդ արդէն նշանակում է, որ նա այդպէս էլ կը մնայ կամ թէ անպատճառ կը լուծուի յաջողութեամբ: Արդեօք այդ մարդիկ հարցրե՞լ են իրենց երբեւիցէ, թէ ժամանակի ընթացքում, շնորհիւ քաղաքական ուժերի եւ շահերի այս կամ այն դասաւորման, քանի՞-քանի՞ հերթական հարցեր դիւրութեամբ ծալուել մի կողմն են դրուել կամ մինչեւ իսկ մարել են յաւիտեան: Եւ հենց վերջին 20 տարուան աննշան ժամանակամիջոցում մի՞թէ քիչ առիթներ ունեցանք մեր սեփական աչքով տեսնելու, թէ որպիսի անգութ խաղերի մատնուեց մեր դատը: Տեղն է յիշատակել այստեղ հետեւեալ բնորոշ փաստը: Տաճիկ կառավարութեան երեք պատուիրակներ մին միւսի ետեւից Ժընեւ

եկան՝ հենց այդ «աւելորդ» ձեռնարկներից յետոյ, 96, 97 թուականներին, եւ որ գլխաւորն է՝ իրենց առաջարկութիւնների մէջ նրանք միակ պահանջ էին դնում՝ դադարեցնել յեղափոխական գործունէութիւնը Պոլսում, իսկ բուն երկրի մասին ոչ մի պայման, ոչ մի խօսք: Ուրիշ հանգամանք: Կան բոպէներ ժողովուրդների կեանքում, երբ կարելի է հաշտուել ամէն բանի հետ, բայց ոչ լռութեան: Կան վայրկեաններ, երբ լռութիւնը բարոյապէս բնորոշում է մի ամբողջ շարժում, մի ամբողջ ժողովուրդ, եւ այդպիսի վայրկեաններից էին այն ժամանակները, որոնց հետ կապուած են ներկայումս դատափետուող ցոյցերը: Երբ 95 եւ 96 թուականներին արեան մի ամբողջ ծով էր պատել Հայաստանին եւ երբ հայութիւնը, եթէ նա ստրկածին արարածների մի դանդուած չէր, պիտի բռնկուած լինէր վրէժի միակ հասկանալի զգացմունքով, պիտի դառնար վրէժի մի անվերջ աղաղակ, — այդպիսի մի վայրկեանում, ասում ենք, — լռութիւնը պիտի նշանակէր միայն եւ միայն ամբողջ ազգի կատարեալ բարոյական անկումը եւ յեղափոխական դաղափարի, յեղափոխական շարժման կատարեալ սրանկութիւնը: Փառք ուրեմն այն հերոսներին, որոնք ոչ միայն այդ դարշելի լռութիւնը փոթորկեցին ու հայ ժողովրդի ամենէն արդար, ամենէն էական զգացումների թարգմանը եղան, այլեւ միանգամայն ապացուցեցին, որ նոյնիսկ ծանր

օրերում նրանք ընդունակ են հաշուել իրենց քայլերը եւ թշնամուն հարուածելու համար այնպիսի ձեռնարկներ ծրագրել ու իրագործել, որոնք օտար լրագիրներում տեղ-տեղ նոյնիսկ «հանճարեղ» անուան արժանացան:

Սակայն բաւականանալ միմիայն ցուցական ձեռնարկներով, այսինքն միմիայն երկրից դուրս կատարուող արշաւանքներով ու ցոյցերով, նախ՝ անկարելի էր· իրերի դրութիւնը անտանելի էր հենց երկրի մէջ, ճնշումներն ու հալածանքները զգալի էին հենց այնտեղ, ուր ապրում է ժողովուրդը: Եւ բնականաբար երկրում արդէն դիտւում էին յեղափոխական հոսանքներ, արդէն հանդէս էին եկել հոգւով բարձր եւ ազատութեան կըրակով վառուած ուժեր, որոնք պէտք է կատարէին եւ կատարում էին իրենց գործը — ձգտում էին կազմակերպուել եւ կռուել (Ցունոներ, Զաթօ-Շերոներ, Արարոներ): Յեղափոխականների կապը դրանց հետ, հետեւաբար, նոր երեւոյթներ չէր ստեղծում, այլ նպատակ ունէր միայն ամբողջացնել ցրուած ուժերը, կանոնաւորել նրանց ընթացքը եւ այս կամ այն ձեւի իր օգնութեամբ դիւրացնել նրանց գործը· մի դեր, որ յեղափոխականների անհրաժեշտ պարտաւորութիւնների շարքն էր մտնում:

Աւելի եւս: Ցուցական գործունէութեամբ ոչ միայն չէր կարելի, այլեւ պէտք չէր բաւականանալ: Ոչ մի հասարակական շարժում չէ կարող

յարատեւել եւ մանաւանդ յաղթական վախճան ունենալ, եթէ նա ժողովրդականացած չէ ազգի մէջ, նրա ընդարձակ խաւերում։ Այնպիսի մի մեծ խնդիր, ինչպիսին է հալածուող մի ժողովրդի ազատումը ուժեղ բռնակալի ճիրաններից, չէ կարող յաջողութեամբ պսակուել, եթէ նա սահմանափակուի ժողովրդից կտրուած որեւէ հասարակական դասակարգով։ Այդ մէկ։ Երկրորդ՝ ոչ մի ազատութիւն զին չէ կարող ունենալ ժողովրդի համար եւ չէ կարող հետեւաբար պահպանուել, եթէ ինքը ժողովուրդը չէ դիտակցում ազատութեան պահանջը եւ չէ մասնակցում նրա անունով յայտարարուած կռուին. օդից ընկած ազատութիւնից՝ անկիտակից ժողովուրդը չէ օգտւում եւ հեշտութեամբ կորցնում է այն առաջին պատահած դէպքում։ Երրորդ՝ ոչ մի ժողովուրդ չէ կարող իր անվերջ հեծեծանքներով իրական օգնութիւն սպասել արտաքին աշխարհից. կռուի որոտումները, նուիրական գաղափարով սրբագործուած ռազմի աղաղակներն են, որ արտայայտում են նրա կենսունակութիւնը, նրա հոգեկան արժանիքները. դրանք են, որ ներշնչում են յարգանք դէպի մի ազգ եւ երաշխաւորում են նրա համար թէ համակրութիւն եւ թէ ինքնուրոյն ապրելու բարոյական իրաւունք։ Չորրորդ՝ սոսկ ցուցական գործունէութիւնը կարող էր ընդունել արտաքին աշխարհի կողմից իբրեւ միայն մէկ խմբի, երիտասարդութեան մի որոշ մասի գործ,

որ կապ չունէր ժողովրդի հետ, եւ այդպիսով կարող էր ջնջել հայկական բողոքի ամբողջ նշանակութիւնը։ Թուրք կառավարութեան կամ եւրոպական շահերին վնասելու գործը միտք է ստանում այն ժամանակ միայն, երբ նայում են յեղափոխականների վրայ իբրեւ ժողովրդային տրամադրութեան արտայայտիչների վրայ. հակառակ դէպքում՝ վնասուողները, «հայկական հարց» կոչուածը մի կողմ թողնելով, կարող են իրենց նպատակ դնել՝ համերաշխ ուժերով վերջ դնելու իրենց հանդստութիւնն ու շահերը ձեռնահարող մի «վնասակար տարրի»։ Այն ինչ՝ երբ Պոլսում պայթող յեղափոխական ձեռնարկի հետ միաժամանակ երկրի մէջ նկատւում է ժողովրդի յուզուած տրամադրութիւնը, այն ժամանակ առաջին երեւոյթը ընդունում է միայն իբրեւ երկրորդի արձագանգ, եւ բնականաբար «վնասակար տարրի» գաղափարը տեղի է տալիս «հայկական դատի» խնդրին.— մի հանգամանք, ուր արդէն սուլթանը եւ Եւրոպան, յայտնի պատճառներով, չեն կարող համերաշխ լինել, չեն կարող միանալ։

Բայց մենք զգում ենք, որ այս հոգի վրայ կանգնելով, չենք կարող գոհացում տալ մեր հակառակորդներին։ Զգում ենք, որ այս ամէնի դէմ նրանք կարող են առարկել. «Մենք սկզբունքով հակառակ չենք այդ բոլորին։ Ընդհանուր առմամբ դրանք անհրաժեշտ են, անխուսափելի են,

զուցէ նոյնիսկ նպատակայարմար են, բայց... բայց ամէն բան իր տեղն ունի, ամէն բան էլ իր չափը պիտի ունենայ։ Պէտք չէ մոռանալ, որ այսօր փոխանակ առաջ գնալու, տեսնում ենք մեր ետեւում հարիւր հազար զոհեր եւ ընդհանուր յուսահատութիւն... Ահա թէ ինչու մենք կարծում ենք, որ հայ յեղափոխական անցեալում շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին, որ յեղափոխական կուսակցութիւնները յանպատրաստից հանդէս եկան, որ նախ քան գործնական քայլերի դիմելը, պէտք էր ժողովուրդը կազմակերպել եւ առհասարակ երիտասարդական յախուռն զգացումների փոխարէն՝ գործի մէջ պէտք էր ղեկավարուել սառն դատողութեամբ»։

Ամենաղառն կսկիծով եւ վրէժխնդրութեան կրակով լցուած՝ մենք խոնարհւում ենք այն անհամար կորուստների առաջ, որ ունեցաւ մեր տարաբախտ հայրենիքը եւ որոնք այս առարկութիւնների ծուծն են կազմում։ Սակայն թոյլ կը տանք մեզ նկատել, որ մեր դժգոյն հակայեղափոխականները կամ եսամոլ իմաստակները չեն, որ պէտք է այսօր ժողովրդասիրութեան եւ հայրենասիրութեան դասեր կարդան յեղափոխականներին՝ հայութեան ամենաղպայուն տարրին, որ իր կեանքը զրեց նրա դատի յաջողութեան համար։ Հակառակորդների այս «խրատները» յիշեցընում են մեզ Շէքսպիրի այն հեգնութիւնը, որ

արտասանում է հմայիչ Համլէթ իր անհաւատարիմ մօր հասցէին.

Պէտք է նոյնիսկ առաքինութիւնը
Ներում աղերսէ զարշ մոլութիւնից,
Այո, եւ խոնարհուի, պաղատանք անէ
Եւ հրաման խնդրէ բարիք գործելու...

Հեշտ է, այո, շատ հեշտ, պատմական բարդ, պատասխանատու, յաճախ աննախատեսելի դէպքերը տեղի ունենալուց յետոյ, «քննադատի» դերի մէջ մտնել եւ սրտացաւի ծիրանի հագած՝ անվերջ կրկնել թէ «այս այսպէս պիտի չլինէր» կամ «այն՝ այնպէս»։ Ամենասահմանափակ մարդն անգամ այդ դէպքում կարող է այնքան երեւակայութիւն ունենալ, որ կատարուած իրողութիւնը զարդարէ որեւէ փոփոխութիւնով կամ մի նոր գծով, եւ զինուած այդ տեսակէտով՝ դառնայ պախարակէ եղածը։ Հաղարաւոր մարդիկ, որոնք մասնակցել են Ֆրանսական Յեղափոխութեանը կամ դրել են նրա մասին, ժամանակին պնդում էին, որ եթէ այս կամ այն բանը այնպէս չլինէր, ինչպէս եղաւ, աւելի լաւ կը լինէր, յեղափոխութիւնը աւելի խաղաղ ելք կը ստանար, եւայլն, եւայլն։ Եւ եթէ մարդիկ զերծ չեն մնացել այդ տեսակ տարտամ խորհրդածութիւններից մի այնպիսի յեղափոխութեան վերաբերմամբ, որի բարիքները ծաւալուեցին ամբողջ աշխարհի վրայ, զարմանալու ոչինչ չկայ, ի հարկէ, որ

հայկական արիւնալից չարժման մասին խօսողները, այն էլ հայ խօսողները, կարող են աւելի ընդարձակ ասպարէզ ունենալ պատժական հաղարաւոր կարկատաններ առաջարկելու համար...

Սակայն մեր հակառակորդների ձեռքից այդ վերջին զէնքն էլ խլելու յուսով, մենք կանգ կ'առնենք բերած առարկութիւնների վրայ եւս, չնայած դրանց անսահման անորոշութեան:

V

Ցեղափոխական գործնական ընթացքը քննադատելիս՝ պէտք է իսկապէս յեղափոխական ճանաչուած ձեռնարկները դնահատուեն կոտորածներից դուրս. այսինքն այն եղանակով, որով մենք քննեցինք այդ ընթացքը նախորդ գլխում: Ուրիշ կերպ վարուել՝ կը նշանակէր պարզապէս հերքել շատ ակներեւ ճշմարտութիւններ եւ ի վերջոյ՝ նոյնիսկ մեր չարժման իրաւունքը: Սակայն այդպէս չէ նայում իրերին ամբոխային տրամաբանութիւնը. նա կարելի է համարում դընել իր ասպետների բերանում այնպիսի խօսքեր, որ մենք բերինք քիչ առաջ, այն է՝ «Ցեղափոխական անցեալում շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին, չկար անհրաժեշտ նախապատրաստութիւն եւ ժողովրդի կազմակերպութիւն, չկար գործի մէջ սառը դատողութիւն»:

Ի՞նչ ասել է՝ «շատ բան չէր համապատասխանում ժամանակի քաղաքական հանգամանքներին»:

Երբ 1878ին Խրիմեան վերադարձաւ Պերլինի վեհաժողովից՝ նա ասում էր իրեն դիմողներին մօտաւորապէս հետեւեալը.

«Հայերս ոչինչ չստացանք: Այնտեղ ապուրը ուտում էին երկաթէ դգալներով, իսկ մենք ունէինք միայն թղթէ դգալ»:

Այսպէս էր խօսում Խրիմեանի բերանով Պերլին գացած պատգամաւորութիւնը. այս խօսքերի մէջ էին ամփոփւում այն տպաւորութիւնները, որ ստացել էր հայ պատգամաւորութիւնը Պերլինում եւ Եւրոպայի առաջնակարգ քաղաքագէտների հետ շփուելուց յետոյ Պէտք է կռուել — ահա այդ խօսքերի իմաստը: Մի տարի յետոյ 1879 թուի Յունիսի 12ին Պոլսի անգլիական դեսպան Լայարտ հեռագրում էր նախարար Սալզպերիին.

«Եթէ Բարձրագոյն Դուռը չզգուշանայ, եթէ նա չգործէ հեռատեսութեամբ ու խոհեմութեամբ, Ասիայում մի դեղեցիկ օր կը ծագի հայկական խնդիր, ինչպէս որ Եւրոպայում ծագեց պուլկարական խնդիրը, որ պատճառ եղաւ վերջին պատերազմին»...

Եւ դէնը՝ այդ երկար հեռագրի բովանդակութիւնից երեւում է, որ յիշեալ «դեղեցիկ օրը» կը

դայ այն ժամանակ, երբ կ'արտայայտուի երկրում հայկական դատի առթիւ որեւէ շարժում:

1880 թուի Յունիսի 11ին վեց մեծ պետութիւնների մի համանման յուշագիր՝ ուղղուած արտաքին գործերի նախարար Ապետին փաշային՝ վերջանում էր այս խօսքերով.

«Պարտք ենք համարում ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն լուրջ պատասխանատուութեան վրայ, որ իր վրայ է առնում Բարձրագոյն Դուռը, ուշացնելով այն միջոցների իրագործումը (61րդ յօդուածի պահանջները), որ պետութիւնները անհրաժեշտ են սեպում ինչպէս տաճկական կայսրութեան, այնպէս եւ ամբողջ Եւրոպայի շահերի համար»:

Ներկայացնենք: «Կապոյտ գրքերից» պատահական կերպով վերցրած այս կտորները ցոյց են տալիս, որ պետութիւնները ամէն կերպ աշխատում էին հայկական որեւէ շարժման տեղիք չտալ, գտնելով որ դա սպառնում էր պուլկարական հարց դառնալ՝ եւ առաջ բերել այնպիսի միջամտութիւններ յօդուտ հայերի, որոնք կարող էին նոյնիսկ պատերազմ յարուցանել: Եւ երեւի այդ տեսակ վտանգներից խուսափելու համար էր, որ այնուհետեւ համարեա ամբողջ 80ական թուականների ընթացքում եւրոպական պետութիւնները նպաստեցին Թուրքիային՝ հայկական հարցը մոռացութեան մատնելու:

Հարցնում ենք ուրեմն. յեղափոխականների ընթացքը համապատասխանո՞ւմ էր «քաղաքական հանգամանքներին», թէ՞ ոչ: Ի՞նչ կարող էր մեզ համար աւելի ձեռնտու լինել, քան մեր հարցի պուլկարական հարց դառնալը եւայլն: Եւ մեր բերած վկայութիւնները չե՞ն ապացուցանում արդեօք, որ միմիայն յեղափոխական շարժման հարուածները պիտի ստիպէին հերթական խընդիր դարձնել մեր բազմաչարչար դատը: Եւ որպէսզի չընկնենք որեւէ սխալանքի մէջ, թողնենք որ այս հարցերին պատասխանէ «Ժամանակի» յայտնի քաղաքագէտներից մէկը: 1890ին, այսինքն հայկական հարցի համարեա տասնամեայ մոռացութիւնից յետոյ՝ աւստրիացի նախարար Կալնոկի, խօսելով հայոց պահանջների մասին, բացարձակապէս յայտարարում էր.

«Եւրոպա չկայ, եւ մինչեւ որ հայկական հողը չշաղախի արիւնով, թող գիտենան հայերը, որ ոչինչ չեն ստանայ»:

Ի՞նչ էին նշանակում այս խօսքերը, եթէ ոչ՝ Եւրոպա չկայ, բայց նա կը լինի, երբ հայերը բացարձակ կռուի ճանապարհը կ'ընտրեն իրենց պահանջներն իրագործելու համար»:

Եթէ յիշում է ընթերցողը, Ռոլէն Ժակմէն եւս 1889ին վերլուծելով եւրոպական դիւանագիտութեան ընթացքը հայկական հարցում, գալիս

էր այն եղրակացութեան, որ Եւրոպան անտարբեր դտնուեց դէպի հայերը, որովհետեւ հայերը չէին ապստամբուել:

Կրկնում ենք ուրեմն.— համապատասխանո՞ւմ էր յեղափոխականների բռնած դիրքը «ժամանակի քաղաքական պահանջներին», թէ՞ ոչ: Խնդիրը այդպիսով՝ քաղաքական պայմաններն արհամարհելու մէջ չէր, — սովորական մեղադրանք յեղափոխականների հասցէին, — այլ այդ քաղաքականութեան վրայ ազդելու միջոցներում»:

Թող չասեն մեզ, թէ այն, ինչ նպատակայարմար էր, օրինակ, այս ինչ թուականին, կարող էր վնասակար լինել յետագայ թուականներին եւն.: Հասարակական մի հոսանք, որ հող ունի կեանքի մէջ, չէ կարող չառաջանալ, իսկ մի անգամ առաջանալով՝ նա չէ կարող չզարդանալ կամ թէ չեղուել իր ընթացքից, ինչպէս ջուրը բնական պայմաններում չէ կարող չհոսել, երբ նրա առջեւ բացւում է ճանապարհ: Գործածելով Լասսալի խօսքերը, դա «երկաթէ անհրաժեշտութիւն» է, որ պայմանաւորւում է որոշ հասարակական ուժերի փոխադարձ յարաբերութիւններով: Երկուսից մէկը ուրեմն.— կամ յեղափոխական շարժումը համապատասխանում էր ժամանակի «քաղաքական պահանջներին», կամ ոչ: Եւ եթէ համապատասխանում էր, ուրեմն՝ յեղափոխական ձեռնարկները սիստեմատիկաբար պէտք է չա-



Քրիստափոր Միքայէլեան

*ռունակուէին, քանի դեռ չէր ապահովուած Եւ-
րոպայի իրական միջամտութիւնը։ Այո՛, այդ էր
պահանջում ժողովրդի դրութիւնը, այդ էին մեզ
թելադրում եւ ուրիշ ազգերի օրինակները։ Եւ
երբ մեզ ասում են, որ յեղափոխական ձեռնարկ-
ները եղան կոտորածների առիթ կամ պատճառ,
մենք չենք հաւատում դրան, այլ՝ արեւելեան
հարցին ծանօթ հեղինակներից շատերի հետ միա-
սին՝ մնում ենք այն համոզման, որ դա հետե-
ւանք էր որքան զարհուրելի, այնքան եւ անմիտ,
որքան դժբախտ, այնքան եւ անճոռնի, անբնա-
կան քաղաքական խաղերի — խաղեր, որոնց բա-
ցառիկ այլանդակութիւնը հասկանալու համար՝
պէտք է ի նկատի ունենալ այն սոսկալի, հրէշա-
ւոր անհեթեթութիւնները, որոնք ուղեկից եղան
երեւոյթին։*

*Մի կողմ թողնելով հեռաւոր անցեալը, յի-
շենք, որ ռուս-տաճկական պատերազմից յետոյ
Ռուսաստանը, այս կամ այն միտումներով, միշտ
պաշտպանում էր հայկական խնդիրը։ Նոյն կա-
ռավարութիւնը, 1894ի Սասունի Մասնաժողովում
ունէր իր ներկայացուցիչը։ Դրանից յետոյ նա
մասնակցում էր բարենորոգումների ծրագրի մը-
չակման։ Աւելի բնական ոչինչ չէր կարելի երե-
ւակայել, քան այն, որ նոյն կառավարութիւնը,
թէկուզ միայն ինքզինքը յարգելով, անէր այնու-
հետեւ հետեւեալ քայլը եւս՝ պահանջէր բարենո-
րոգումների գործադրութիւնը։ Այսպէս էր նա-*

յում փաստին ամբողջ աշխարհը. այդպէս վերաբերուեց Մայիսեան ծրագրին ե՛ւ ամբողջ հայութիւնը: Բայց ահա այլանդակութիւնը. այս բոլորի հետ միաժամանակ Լոփանովի «ռուս» երեւակայութեան մէջ սկսում է օրէցօր աւելի եւ աւելի նուաճումներ անել այնպիսի մի անհեթեթութիւն՝ թէ հայկական բարենորոգումների խնդիրը «կարող է ստեղծել սահմանակից մի նոր Պուլկարիա Ռուսաստանի համար»: Ինչո՞ւ.— որովհետեւ հայերի վիճակը պէտք է փոքր ինչ բարեփոխուի, այսինքն՝ նրանք պիտի դրուին այնպիսի պայմաններում, որ նուազ անպատուուեն, նուազ թալանուեն ու կոտորուեն, կարծես՝ ռուսական բոլոր սահմաններում տաճկահայերից լաւ ապրող եւ քիւրտերից ու Թուրքերից չմորթուող, չթալանուող փոքրիկ ազգութիւնները մի-մի Պուլկարիաներ են Ռուսաստանի համար, կամ կարծես՝ սուլթան Համիտի ստորագրած բարեփոխումները աւելի ընդարձակ էին, քան սուլթան Մեճիտի Հատտի-Հիմայունում խոստացած կարգերը, որոնց գործադրութիւնը երբեք ոչ մի կառավարութիւն այնքան խստութեամբ չէր պահանջել Թուրքիայից, ինչպէս 1856 թուականից սկըսած այն պահանջում էր Ռուսաստանը:

Նայենք եւ Ալպիոնին: Այն Սալզպըրին, որ 1879ին տեսնելով, որ Պերլինի դաշնագրի կէտերը մեծ մասամբ իրագործուած են, — բացի Անգլիայի «առանձին երաշխաւորութեան տակ» ա-

ռած Փոքր-Ասիայի վերաբերուող յօդուածը, — հարկաւոր սեպեց Զմիւռնիայի ծոցում մինչեւ իսկ ծովային ցոյց անել Թուրքիայի դէմ, այդ նո՛յն Սալզպըրին 1896ին իր կառավարութեան բացարձակ դաւաճանութիւնը արդարացնելու համար՝ ապացուցանում էր, թէ «Տաւրոսի լեռները անմատչելի են անգլիական նաւատորմի համար»: Ո՞վ, քան լորտ Սալզպըրին, աւելի լաւ գիտէ, որ աշխարհիս երեսին չկայ ոչ մի ուրիշ պետութիւն, որի ծովային սահմանները պաշարելը, կամ գրաւելը, մի խօսքով, որին վնասելը այնքան դիւրին լինէր, ինչպէս Թուրքիային, որ ոչ մի նաւատորմ չունի: Թող չասեն մեզ, որ Ռուսաստանի ընդդիմութիւնը պատերազմի վտանգն էր սպառնում Անգլիային: 1895ի Օգոստոս 28ին Պետերբուրգի անգլիական դեսպանից եւ նոյն Օգոստոսի 29ին Պոլսոյ դեսպանից ստացուած հեռագիրները հաղորդում էին անգլիական կառավարութեան, որ Լոփանովը իր կողմից հնարաւոր զիջումների շարքն է դասում նաեւ «համաձայնութիւնը՝ թողնել Անգլիային եւ Տաճկաստանին ճակատ առ ճակատ»(*): Այս անլուր անհեթեթութիւնների տիպարն է ներկայացնում լորտ Ռոզպերի: Այդ թեթեւամիտ, բայց ջղային եսամոլութեամբ բռնուած լորտը՝ Կլատսթոնի Լիվերպուլում յօդուտ հայերի արտասանած ճառից

(*) Տես Turkey, № 1, 1896:

յետոյ՝ դուրս է գալիս Նոյեմբեր ամսին Էտինպուրկում խօսելու եւ բացարձակ դաւաճանութեան այնպիսի մի քայլ է անում, որ անսպասելի էր ոչ միայն կողմնակի դիտողների, այլեւ նոյնիսկ իր ամենամօտ ու ամենաթափանցող քաղաքագէտ-բարեկամների համար, նա հրաժարւում է անգլիական ազատամիտ կուսակցութեան ղեկավարի դերից, պատճառաբանելով, որ Կլատսթոնը եւ ազատամիտ կուսակցութիւնը պահանջելով պահպանողական կառավարութիւնից որեւէ վճռական քայլ անել ի նպաստ հայերի, իբր թէ սխալ ընթացք են բռնում: Բայց լորտի դաւաճանութիւնը չէ վերջանում Կլատսթոնով, իր բոլոր կուսակիցներով ու հայերով: Լորտը միեւնոյն ճառի մէջ դաւաճանում է եւ ինքն իրեն: Այդ ճառից ընդամէնը 8 ամիս առաջ, այն է 1896 Մարտի 3ին, իր մի ուրիշ ճառով նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից շատ անգամ աւելին, քան այդ արեց Կլատսթոն իր վերին աստիճանի զգոյշ ճառի մէջ: Նա պահանջում էր անգլիական կառավարութիւնից, թէկուզ հենց առանց միւս պետութիւնների համաձայնութեան, մենակ գործի դիմել յօգուտ հայերի եւ նոյնիսկ պարզ ակնարկում էր, որ այդ առանձին գործողութիւնը կարող է արտայայտել որեւէ տաճկական նաւահանգիստի գրաւումով(*):

(*) «Սուլթան եւ պետութիւններ», Մակ Կոլի:

Անգլո-ռուսական հակամարտութիւն՝ թունաւորուած հրէշաւոր կասկածների ուրուականներով՝ ահա այն սոսկալի հողը, ուր մեր բախտը որոշելու հրաւիրուած «քաղաքագէտները» կորցրին ոչ միայն իրենց խիղճն ու ամօթը, որ չեն էլ ուզում ունենալ, այլեւ իրենց խելքն ու դատելու ընդունակութիւնները: Տեսէք ինչ էր գրում Պոլսոյ անգլիական դեսպանը իր կառավարութեան 1879 թուին.

«Պուլկարական միեւնոյն ինտրիկները այժմ կատարւում են Փոքր Ասիայում թէ՛ այն նպատակով, որ վերականգնեն հայկական ազգութիւնը, եւ թէ՛ նրա համար, որ ստեղծեն իրերի այնպիսի մի դրութիւն, որ սարսափի մի աղաղակ յարուցանէր ամբողջ քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ եւ եւրոպական միջամտութիւն առաջ բերէր: Ես մի քանի անգամ նախազգուշացրել եմ տանիկ մինիստրներին, որ եթէ նրանք չշտապեն ի կատար ածել Պերլինի դաշնագրի որոշումը հայերի մասին... այն ժամանակ նրանք կը տեսնեն թայց արդէն շատ ուշ, որ սուլթանը կը գրկուի մի քանի գաւառներից»:

Ո՞վ է «պուլկարական ինտրիկներ» սարքողը, — ռուսը. ո՞վ է ուզում «եւրոպական միջամտութիւն առաջ բերել», — ռուսը. ո՞վ պէտք է «մի քանի գաւառներից զրկէ սուլթանին», — ռուսը:

Այդպէս է մտածում անգլիացին, այդպէս է հասկանում իրականութիւնը անգլիական «փորձուած» դիւանագէտը։ Միեւնոյն ժամանակ հարցրէք ռուսին. ո՞վ է Տաճկաստանում չարունակ «ինտրիկներ» լարում՝ Ռուսաստանի դէմ, — Անգլիան. ո՞վ է անդադար հրաւիրում պետութիւնների «միջամտել» հայկական հարցում, — Անգլիան, որ ուզում է Ռուսաստանի դէմ պատնէշ կանգնել Փոքր-Ասիայում. ո՞վ է խրախուսում հայ յեղափոխական շարժումը, — Անգլիան, որ նպատակ ունի դրանով ձեռք բերել Տաճկաստանում իր կորցրած աղդեցութիւնը — այդպէս կը պատասխանէ ձեզ ռուսը, այդպէս կ'ասէ ձեզ ռուսական «հեռատես» դիւանագէտը։

Եկէ՛ք ու նախատեսէ՛ք։ Եկէ՛ք ու գործունէութեան ծրագիր մշակեցէք ոչ թէ մարդկային ամբողջ պատմութեան մէջ ուսումնասիրուած սկզբունքներն ի նկատի առնելով, այլ այն այլանդակ, անբնական, ոչ մի հետեւողականութեան չենթարկուող քաղաքական կասկածների ցատկոտումները, որոնք ամէն րոպէ կարող են տեղի ունենալ մի ամենալիրը քաղաքագէտի գլխում, մի քաղաքական դեւդեկի երեւակայութեան մէջ կամ մի տխմար «չինովնիկի» հաշիւներում — մի «չինովնիկի», որ նոր պաշտօնի անցած՝ բռնուած է նոր բան հնարելու տենչով եւ անպատճառ իր նախորդներից չնախատեսուած վրտանգներ է ուզում հնարել պետութեան համար...

Եկէք ու յարմարուեցէք քաղաքական «բոպէների» պահանջներին։ Եւ ե՞րբ ու որի՞ն յարմարուէին յեղափոխականները — ռուսի՞ն թէ անգլիացուն, ա՞յն Սալզպերիին, որ խօսում էր Տաւրոսի անմատչելիութեան մասին, թէ այն Սալզպերիին, որ 1896 թուի Սեպտեմբերին սպառնում էր սուլթանին, թէ «եթէ իր կայսրութեան յոռի վարչութիւնը չարունակուի, նա կը զրկուի իր գահից» (*). ա՛յն Լոփանովի՞ն յարմարուէին, որ գոյութիւն ունէր 1895 թուի առաջին կիսում, թէ՞ այն Լոփանովին, որ պատկերացաւ մեր առջեւ միեւնոյն թուի երկրորդ կիսում. ա՞յն Ռոզպերիին յարմարուէին, որ Մարտ ամսին էր խօսում, թէ՞ այն միւս Ռոզպերիին, որ զառանցում էր նոյն տարուան Նոյեմբերին։ Կա՞ր նոյնիսկ յարմարուելու կարելիութիւն կամ գոնէ կարելիութեան ստուեր անգամ։

Եւ թող ոչ ոք չկարծէ, թէ մեր յեղափոխական մոլեռանդութիւնն է, որ ստիպում է մեզ Եւրոպայի պատասխանատուութեանը ձգել հայկական կոտորածները։ Հազարաւոր հրատարակութիւնների մէջ, հազարաւոր ամպիոններից, երկրագնդի հազարաւոր անկիւններում ամբողջ մարդկութեան մտածող ու զդացող մասը եւս ու-

(*) Ed. Driault: «La Question d'Orient», եր. 258։

բիչ կերպ չդնահատեց այն զարհուրելի հովանաւորութիւնը, *որ* 61*րդ յօդուածով արին հայերիս եւրոպական պետութիւնները իրենց այլասերուած ու նախատեսելու ընդունակութիւնից զուրկ դիւանագէտներով։*

Թո՛ղ դրոշմէ ուրեմն պատմութիւնը ժամանակակից Եւրոպայի ճակատին հրէշաւոր դաւաճանութեան յաւիտենական արատը, որից սակայն միշտ ազատ կը մնայ հայ երիտասարդութեան այն փոքրամասնութիւնը, որ ընտրեց կռուի փշոտ դաշտը՝ տոգորուած իր ծնող ժողովրդի բարեկեցութեան գաղափարով, պատրաստ միշտ զոհուելու սուրբ հայրենիքին...

Սակայն, — ասում են ամբոխային տրամաբանութեան ամէն կարգի ներկայացուցիչները, — բոլոր քաղաքական խաղերի եւ անյաջողութիւնների առաջը կարելի էր առնել, եթէ յեղափոխական կազմակերպութիւնները՝ մանր «խլրտումների» փոխարէն՝ աշխատէին նախօրօք լաւ պատրաստել, լաւ կազմակերպել *ժողովուրդը։*

Պէտք չկայ ի հարկէ ծանրանալու այստեղ այն խնդրի վրայ, որ «նախապատրաստուելու» ելնելով կարելոյն լայն ծաւալով «կազմակերպուելու» պահանջը բոլոր գործող յեղափոխականներին յտէալն է եղել եւ կը լինի միշտ։ *Կռուի դաշտը նետուելիս՝ ջանալ ըստ կարելոյն մեծ ուժ ունենալ համախմբուած — դա այնքան բնական, այնքան տարրական եւ նոյնիսկ այնքան* banal(*) *մի պահանջ է, որ միմիայն կրէտինները(**) կարող են տարակուսել, թէ յեղափոխականները կարող էին արհամարհել այդ պահանջը։ Բայց եթէ այդպիսի կրէտիններ կան մեր մէջ, թող նրանք ստուգեն մեր կարծիքը ամրաստանուող յեղափոխականների ծրագիրներում, թերթերում, պաշտօնական մարմինների կամ անհատ գործիչների կեանքում եւայլն։ Եւ եթէ դրանից յետոյ էլ դեռ ապացոյցները պակասեն, թող դիմեն վերջապէս հայութեան այն մեծագոյն մասին, որ մի տեղ միանգամայն անտարբեր դտնուեց դէպի ընդհանուր ազգային խնդիրները, միւս տեղ քաղաքացիական արիութիւն չունեցաւ նպաստելու մեր շարժման, երրորդ տեղ հակայեղափոխական յայտնուեց, չորրորդ տեղ հարկ դտաւ մինչեւ իսկ իր յատուկ* սոֆտաներին *կտուրները բարձրացրնել՝ գործի կողմնակից յեղափոխականների դէմ* սալաւաթ *կանչելու համար։ Հայութեան այդ մեծագոյն մասը անշուշտ կը հաստատէ, որ արդարեւ, եթէ գործի յեղափոխականները «քչով» հանդէս եկան, դա, յամենայն դէպս, չէ կարող բացատրուել նրանով, որ այդ յեղափոխականները «չատը» չէին ուզում կամ «չատը» ունենալու համար* որեւէ ջանք էին խնայում։ *Այդ հեղինակաւոր ցուցմունքով էլ հարցը ինքնին կը փակուի՝*

(*) Հասարակ։ (**) Crétin։

միանգամ ընդմիշտ պարզելով, որ այն, ինչ բացարձակ տեսակէտից մեզ թւում է քիչ, համեմատական տեսակէտից եղել է ուժերի այն maximum-ը (ամենաչատը), որ՝ որոշ ժամանակում եւ որոշ տեղի հանգամանքներում՝ կարելի է համախմբել յեղափոխական գործի շուրջը:

Զենք ուզում երկարօրէն ծանրանալ եւ այն մասին, որ յեղափոխական ձեռնարկները ոչ միայն չէին հակասում նախապատրաստութեան պահանջին, այլեւ նրանք անխուսափելի միջոցներ էին այդ պահանջին գոհացում տալու: Մենք միայն կ'ամփոփենք այստեղ զանազան առիթներով այդ մասին «Դրօշակ»ում յայտնած մեր կարծիքները:

«Եթէ մարդկային անցեալի նախակարապետները իրենց գաղափարներն առաջ մղելու համար սպասէին, որ նախապէս ամէն ոք իրենց հետ համաձայնէր, մեր քաղաքակրթութիւնը դեռ եւս կը լինէր քարի շրջանում», ասել է մի հրապարակախօս՝ մեզ թողնելով մտաբերել այն բոլոր խաչերը, խարոյկները, կախաղանները, կիյոթինները, բանտերը, մի խօսքով՝ արեան ու անհամար տանջանքների այն հսկայական հնոցները, որոնց միջից անցել են յեղափոխիչ գաղափարները: Ինչպէս երեխայի համար անհրաժեշտ է սիրող մայրը, այնպէս էլ յեղափոխական գաղափարի աճման համար միշտ անհրաժեշտ են եղել բանտերի խոնաւ օրօրոցները, երկաթէ չղթաների բաղմալեզու նանիները եւ կարմիր դահիճների մահաբեր զուրգուրանքները: Ուրիշ ելք չկայ նոր գաղափարների յաղթանակի համար, կամ այլ խօսքով՝ չկայ ուրիշ միջոց յեղափոխական գործը նախապատրաստելու համար: Այո՛, չկայ այս աշխարհում աւելի կրթիչ օրինակ, քան գործերի կենդանի օրինակն է. չկայ աշխարհում ոչ մի լսարան, ուր կարելի լինէր ժողովել այնքան ունկընդիրներ, որքան ունենում է գործի առպարէզը նետուած յեղափոխական քարոզիչը. չկայ ոչ մի ձայն աշխարհումս աւելի հեռու, աւելի մեծ տարածութեան վրայ լսուող, քան գործերի գոռումգոչիւնն է. չկայ ոչ մի լեզու, որով կարելի լինէր խօսել ամբողջ մարդկութեան առաջ հասկանալի խօսքերով, բացի գործերի լեզուից:

Եւ իրաւ: Ո՞վ աւելի մեծ համարձակութիւն, աւելի մեծ բարոյական իրաւունք կ'ունենար անձնուիրութեան հրաւիրել ժողովրդի բոլոր կենսունակ տարրերին, քան ինքը՝ առաջինը արեան դաշտ նետուող յեղափոխականը: Ո՞վ արդեօք, ի՞նչ մարդ, ի՞նչ քարոզիչ կամ քարոզներ կարող էին Պոլսից մինչեւ Վան, Ռուսաստանից մինչեւ Ամերիկա ցնցել հայութիւնը՝ բոլորի սրտին միեւնոյն դարկը հաղորդելով, բոլորի առջեւ պարզ ամփոփելով մեր ընդհանուր ազգային իղձերը, քան այդ անում էին յեղափոխական ձեռնարկները: Ո՞ր գրողը արդեօք, ո՞ր լեզուագէտը, ո՞ր հարուստը, ո՞ր հռետորը կարող էր հայկա-

կան պահանջների մասին այնքան հրատարակութիւնների մէջ, այնքան լեզուներով, այնքան գրել, այնքան տպագրել, այնքան սրտեր ու մրքեր յուզել, որքան գրել, տպագրել, ղգալ ու մրտածել էր տալիս հայ ժողովրդի ծանր, անձնական դժոխային կացութեան թարգմանը, — յեղափոխական բողոքը: Ո՞ւր են վերջապէս, — հրոսակային կամ տեռորական, զինատար կամ փարթիզանական խմբերի կռիւներից դուրս, — այն դահլիճները, այն զօրանոցները, ուր հայը պիտի վարժուէր արեան գործի մէջ եւ յեղափոխական բանակներ «պատրաստէր» կամ «կազմակերպէր»:

Դժուար չէ, ի հարկէ, գերադրական ածականների մի ամբողջ բեռ շալակած, նկարագրել միամիտների առաջ «լուռ ու մունջ նախապատրաստութիւնների» ֆանտաստիկական հեռանկարը՝ անպայման յաղթանակով պսակուած, եւ յետոյ զէնք դարձնել այդ զառանցանքները նոյն նախապատրաստութեան գործին ամբողջ հոգուով նուիրուածների դէմ: Բայց «le superlatif est le cachet des sots» (գերադրական ձեւը յիմարների կնիքն է), վաղուց ասել է Մեսերնիխ, եւ մեզ թոյլ կը տրուի, ի հարկէ, եթէ ոչ Մեսերնիխից աւելի հեռու գնալ, դէթ համաձայնուել նրա հետ: Հասկանանք վերջապէս, որ անմտութիւն է պահանջել մարդկանցից մի բան, որ անկարելի է իրագործել: Ի՞նչպէս պատրաստուել «տարինների ընթացքում լռութեան մէջ»: Պէ՞տք է, որ երկիր մտնեն մարդիկ. պէ՞տք է, որ դրանք տեսնուեն, խօսեն, համոզեն, բանակցեն կարեւոր անձանց եւ տեղերի հետ. պէ՞տք է գրագրութիւն ունենան. պէ՞տք է զէնք տարածեն, ստանան, գնեն, պահպանեն, տեղափոխեն. պէ՞տք է զէնքի եւ նրա գործածութեանը ծանօթացնեն մարդկանց, թէ՞ ոչ: Փորձեցէք միայն փուռ խօսքերից կենդանարար գործի անցնել. փորձեցէք միայն չատ կարճ ժամանակ, — այո, թէկուզ ամենակարճ ժամանակ, — «նախապատրաստութեամբ» զբաղուել, եւ դուք կը տեսնէք, որ լռութիւնը ձեր գործում չուտով կը խանգարուի: Թշնամին ոչ ձեզնից թոյլ է, ոչ էլ աւելի վատ կազմակերպուած: Ուր որ գնաք, նրա ցանցերը, նրա սահմանափակումները, նրա պաշտօնական եւ ոչ պաշտօնական գործակալները կանգնելու են ձեր առջեւ դէմ յանդիման, եւ այսօր չէ էգուց՝ դուք պիտի քոնուէք գործի վրայ: Ահա թէ ինչու «լռութիւն» քարոզողները նրանք են մեծ մասամբ, որոնք ոչ մի առնչութիւն չունեն գործնական յեղափոխութեան հետ: Ահա թէ ինչու հսկայական «նախապատրաստութեան» քարոզների հետ նրանք դատապարտուած են «քաղաքակրթական» զարգացման մաշուած երգերը կրկնելու, տեղը եկած ժամանակ հնչեցնելու նաեւ «համբերութեան», «հաւատարմութեան», կամ «տեսական

յեղափոխութեան» քարոզները։ Մի թշնամի, — որ ունի զարաւոր կազմակերպութիւն, որ իր ամբողջ քայքայման հետ դեռ ընդունակ է կանոնաւոր պատերազմներ մղել եւ երբեմն յաղթել իր հակառակորդներին, — հեշտ բան չէ այդ թշնամուն այնքան երկար ժամանակ խաբուած պահել, որչափ կը պահանջուի նրա ուժը հակակշռող ուժ կազմակերպելու համար երկրի մէջ։ Այդ ձգտումներում դուք յաջողութիւն չէք կարող ունենալ եւ հետեւաբար՝ թշնամուն սիստեմատիկաբար խաբել ձգտելով՝ դուք սիստեմատիկաբար խաբած կը լինէք միայն ձեր բարեկամներին ու ընկերներին, որոնք միամտաբար հաւատալով ձեզ՝ թէ դուք կարող էք եւ պէտք է խաբէք թշնամուն, մի դեղեցիկ օր կը տեսնեն, որ միայն իրենք են ձեզնից խաբուել — աւելի ոչինչ։

Այդպիսի փոխադարձ յարաբերութիւններ, ի հարկէ, միանգամայն վայել յարաբերութիւններ են «սալաւաթ» պոռացող սոֆթաների եւ իրենց բարեկամների միջեւ, եւ մենք դրա դէմ ոչինչ չունենք ասելու. բայց այդ «սալաւաթների» իսկական արժէքը վերջապէս հասկանալու համար մենք մի բոպէ մի կողմ կը թողնենք մեր հայեացքները գործի վրայ եւ կը կանգնենք մեր «քընաղատների» տեսակէտի վրայ։ Հակառակ տրամաբանական ու ընկերաբանական ամէն օրէնքի՝ համաձայնուենք մի բոպէ, որ հնարաւոր էր լռութեան մէջ պատրաստուել եւ այնպէս հրապարակ դուրս գալ։ Ենթադրենք, որ — թէկուզ դիւթական գաւազանի մի հարուածով — յեղափոխականները գործի դիմէին՝ բաւական լայն չափերով կազմակերպուած ժողովրդի հետ։ Մի՞թէ մենք կարող կը լինէինք հաստատապէս ասել, որ այդ դէպքում մենք արդէն ապահոված կը լինէինք մեր աղատութեան գործը։ Ո՞ւր է ուժերի այն minimum-ը (ամենաքիչ չափը), որ պահանջւում է գործ սկսելու համար։ Վերջին յոյն-տաճկական պատերազմի ժամանակ Յունաստանը, իբրեւ անկախ երկիր, իր նախարարներով, իր զինուորական խորհուրդներով, սեփական խորհուրդներով, սեփական հողի վրայ, իր աղատ զօրանոցներում ժողոված, կրթած եւ կազմակերպած 60–70 հազար զօրք դուրս բերեց Տաճկաստանի դէմ եւ էլի յաղթուեց։ Չէ՞ր կարող արդեօք մի այդպիսի դժբախտութիւն մեզ հետ եւս պատահել, թէկուզ կռուի դաշտ դուրս եկած լինէինք «մեծ պատրաստութիւններով»։ Մեզ կարող են իրաւամբ նկատել, ի հարկէ, որ գաղափարով ոգեւորուած մի յեղափոխականը արժէ ամենապակասը տասը այնպիսի պաշտօնական կռուողներ, ինչպիսին է զինուորը, այն էլ յունական զինուորը, եւ ուրեմն օրինակը համոզեցուցիչ չէ։ Դիմենք ուրիշ օրինակների։ Պուլկարները ապստամբել են 1828, 1837, 1841, 1862, 1867, 1868, 1872 եւ 1876 թուերին. աղատուել են 1878ին. ուրեմն շարժումը տեւել է 50 տարի, ունենալով 44 տար-

ուան ընթացքում անընդհատ անյաջողութիւն։ Ցոյները ապստամբուել են 1770, 1798, 1801, 1812, 1820–1829 թուերին. ապատութիւն գտան 1829–1830 թուին, այսինքն 60 տարուց յետոյ, շատ անգամ տեղիք տալով զարհուրելի կոտորածների եւ ամբողջ Պելոպոնէսի ու Մորէայի կատարեալ աւերման։ Մի՞թէ պուլկարները եւ մանաւանդ յոյները միշտ «անպատրաստ» են կըռուի դուրս եկել, որ տասնեակ տարիների ընթացքում միմիայն սոսկալի ձախորդութիւններ են ունեցել։ Այսօրուան ազատ Կրետէն, որ իր կռիւը սկսեց դեռ Ցունաստանի հետ միասին, ապըստամբուել է աւելի քան տասն անգամ՝ պաշտպանելով իր դատը ամբողջ 128 տարի։ Սերպերը կռուել են 40 տարու չափ եւ նախ քան աղատուիլը՝ պարտութիւններ են կրել շատ անգամ։ Ռումանական շարժումը, նոյնպէս արիւնով ներկուած, տեւել է ոչ պակաս 100 տարուց։ Պոսնիա եւ Հերցեկովինա կռուել են 1830 թուից մինչեւ 1870ը։ Իրլանտան 600 տարի է չէ ընկճուում իր աղատութեան տենչանքների մէջ, չնայած իր միլիոնաւոր զոհերին։ Դեռ երէկ մարտնչող, հերոսական Քուպան միմիայն մեր դարում երեք խոշոր ապստամբութիւններ է ունեցել՝ միմիայն վերջին ապստամբութեան ժամանակ 200 հազար զոհ տալով։ Իտալական յեղափոխութիւնը 60 տարի պահանջեց յաղթանակը տանելու համար։ Հարցնում ենք. մի՞թէ սրանք բոլորն էլ ամէն

անգամ «անպատրաստ» են պատմական բեմ դուրս եկել, որ չեն կարողացել մի անգամից իրենց ազատութիւնը ապահովել...

* * *

Ընթերցողը տեսնում է ուրեմն, որ «լուրջ» նախապատրաստութեան պահանջները, — որքան էլ չեչտակի ձեւերով կրկնեն նրանց հայ դպիրներն ու դպրիկները, — իսկապէս զուրկ են ԼԸՐՋՈՒԹԵԱՆ որեւէ յատկութիւնից եւ ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ այդ պահանջները, բայց եթէ այն մտքով միայն, որ «յեղափոխական կռիւը այնպէս պիտի մղուէր, որ արդէն անպայման յաղթանակած լինէր»։ Բայց եթէ պատմական երեւոյթները պէտք է քննուեն ոչ թէ իրենց ժամանակի եւ տեղի հետ սերտ կապուած պայմաններում, այլ ցանկութիւնների տեսակէտից, ո՞ւր կարող են վերջանալ այս տեսակ գանգատների սահմանները։ Երեւակայեցէք մի բոպէ, որ մենք այնքան բախտաւոր լինէինք, որ մինչեւ օրս մի միայն յեղափոխական շարքերից լինէինք զոհեր տուած, բայց եւ այնպէս՝ դեռ եւս ապարդիւն, չէ՞ր կարելի միթէ այդ դէպքում եւս ցանկութիւնների հարուստ աշխարհից պոկել բաղձանքների մի նոր փունջ եւ կրկին դատափետել յեղափոխականներին, որ դրանք, — չնորհիւ իրենց «անպատրաստութեան», «սառն դատողութեան»

բացակայութեան, «քաղաքական անփորձութեան» եւայլն, — միայն ծծում են սերնդի ամենալաւ ուժերը եւ վատնում ահագին միջոցներ առանց որեւէ «արդիւնքի»: Ենթադրենք այնուհետեւ, որ յեղափոխականներին յաջողուած լինէր որոշ զոհերով այս կամ այն բարեփոխումները ձեռք բերել Հայաստանում, մի՞թէ դժուար կը լինէր այստեղ էլ մեղադրել նրանց, որ — չնորհիւ իրենց «անպատրաստութեան» եւայլն — չկարողացան գործը այնպէս տանել, որ զոհեր քիչ տային կամ միեւնոյն զոհերով աւելի մեծ փոփոխութիւններ ձեռք բերէին: Չէ՞ր կարելի միթէ մի փոքր էլ դէնը դնալ եւ հիմնուելով նոյն «անպատրաստութեան», «սառն դատողութեան» բացակայութեան, «քաղաքական փորձառութեան» վրայ՝ պահանջել մինչեւ իսկ, որ ամենեւին զոհ չտային, այլ այնպէս՝ միմիայն քաղաքական յաջող խաղերի եւ մեծամեծ կապերի միջոցով՝ ուղղակի առաջ քրչէին եւրոպական միջամտութեան գործը եւ ապահովէին հայկական հարցի նպաստաւոր լուծումը: Եւ այդպէս չարունակելով՝ չէ՞ր կարելի միթէ հասցնել վերջապէս Գամառ-Քաթիպայի «Հայի բաղձանք»ին.

Ա՛խ, ինչպէս կ'ուզեմ տեսնել մեր հային
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ,
Ամէն հայի տուն-դրախտ երկնային...
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ գոհ...

Ա՛խ, ինչպէս կ'ուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատուած թշնամու ձեռքէն,
Հայի երկիրը-հայի սեփական...
Լոկ այդ չբաժանէր ինձ իմ կոպէկէն»...

Բայց, — բարեբախտաբար թէ դժբախտաբար, չգիտենք, — բաղձանքները չեն, որ ընթացք են տալիս կեանքին: Ռուսերէն մի առած ասում է, որ «դժոխքի ճանապարհն էլ բարի ցանկութիւններով է սփռուած», բայց եւ այնպէս մենք գիտենք, որ այդ ճանապարհը առհասարակ հրապուրիչ չէ մարդկանց համար: Սակայն, ընթերցող, ոչ դարմանք եւ ոչ էլ դայրանք: Ամբոխային տրամաբանութեան մատնուած բոլոր դլուխների ընդհանուր ճակատագիրն է այդ — մի ճակատագիր, որ միշտ իր անդթութեան դաղաթնակէտին է հասնում մանաւանդ մեծ ձախորդութիւնների դէպքերում: Դա մարդկային ամբողջ պատմութեան մէջ դիտուած մի ընդհանուր երեւոյթ է, որ չեշտում են բոլոր ուղղութիւնների ընկերարանները:

«Ամենազարգացած հասարակութիւնների մէջ, — ասում է, օրինակ, Վորմս իր «Organisme et Société» աշխատութեան մէջ, — հանրային դժբախտութիւնների միջոցին, մինչեւ իսկ միմիայն երեւակայական դժբախտութիւններից ծնուած երկիւղի ազդեցութեան տակ, երբեմն վերածնւում են հին ժամանակների ամենասարսափելի, յաճախ ամենաբարբարոս սովորութիւնները»:

Ուրիշ խօսքով եւ մեր նիւթին յարմարեցնելով՝ դա նշանակում է, որ ընդհանուր ազգային դժբախտութեան ժամանակ՝ մարդկային կորուստների, մարդկային կոտորածների հետ անմիջապէս կապւում են նաեւ մտքերի անխնայ կոտորածներ: Ահա թէ ինչու հասկանալի է, որ յաջողութեան օրերում դժգոհ «խոհեմների» թիւը ոչ այնքան մեծ կը լինէր եւ ոչ էլ այդ «խելօքները» կը կարողանային այնքան ունկնդիրներ գտնել, որքան այժմ: Ցաջողութեան օրերում ընդհանուր յոյսերի պայծառ ալիքները իրենց բուռն հոսանքի մէջ կ'առնէին այսօրուան նոյնիսկ հոգեպէս սնանկ դժգոհներին, եւ դրանք այն ժամանակ ոչ մի առիթ չէին բաց թողնի՝ նոյն կտուրների վրայից, որտեղից այսօր արշաւանքներ են քարոզում գործի յեղափոխականների դէմ, պոռալ արար-աշխարհին, որ նրանք միշտ էլ հաւանել ու օգնել են ամէն կարգի յեղափոխական ձեռնարկներին, որ միշտ էլ համոզուած յեղափոխականների շարքումն են եղել, որ նոյնիսկ առանց իրենց մասնակցութեան ոչ մի յաջողութիւն ձեռք բերուած չէր լինի եւայլն, եւայլն: Բայց ներկայ սեւ օրերում դրանք, — «խելօքներին» յատուկ տրամաբանութեամբ, նաեւ «հոտառութեամբ», — յարմարւում են միջավայրին եւ ստուարացնում «քննադատների» շարքերը՝ մինչեւ որ վաղը միւս օր երբ պատմական անիւը որեւէ ձեւով կը թեքուի յօդուտ հայութեան, կրկին նրանք յախուռն հոսանքով կը շտապեն ամենակատաղի յեղափոխականների աթոռները գրաւել, մոռանալով եւ նոյնիսկ հերքելով, որ հենց այն րոպէին՝ երբ պատմական անիւը թեքւում էր, նրանք դեռ եւս քափ ու քրտինք էին թափում՝ ամբոխի առաջ իրենց «քննադատութիւններին» աւելի եւ աւելի համոզիչ ձեւ տալու...

* * *

Ամփոփենք մեր կարծիքները:

Ասել՝ թէ յեղափոխականները նախ քան գործնական քայլերի դիմելը՝ պէտք է վաղօրօք լաւ «կազմակերպուէին» եւայլն — դա միեւնոյն է թէ ասել, որ գործը պէտք է լաւ տանուէր: Պարզ է, որ այդ տեսակ «խորհուրդները» ոչ ոքի համար արժէք չեն կարող ունենալ: Գործը, յեղափոխական գործը, լաւ տանելը մեր իտէալն է արդէն. բայց ի՞նչպէս պիտի տանուէր այդ գործը կամ ի՞նչպէս պիտի տանուի, որ լաւ լինի, որ լաւ կազմակերպուած լինենք եւայլն, — ահա՛ ամբողջ հարցը, որի դիմաց իրար խառնւում, իրար հակասում, իրար ոչնչացնում են մեր «խոհեմների» խորհուրդները, մեր «սոֆտա-դպիրների» սալաւաթները, մեր «քննադատող» դատարկ կարասների՝ ներդաշնակութիւնից զուրկ, անմիտ ու միապաղաղ ձայները:

«Պատրաստութեան» կամ «վաղաժամութեան»

անմիտ ողբերի մէջ չէ կայանում մեր շարժման յաջողութիւնը (որովհետեւ իսկապէս երբ յեղափոխական նախաձեռնութեան մէջ մի բան կատարւում է կամ կարելի է կատարել, դա ինքնըստինքեան արդէն նշանակում է, որ «ժամը» հասել է), այլ կռուի յարատեւութեան մէջ: Մեր դատը վաղուց է հայերիս համար սոսկալի մի վէրքի նշանակութիւն ստացել: Շնորհիւ Թուրք կառավարութեան կատարեալ կուրութեան՝ նա նոյն վէրքի նշանակութիւնն է ստացել Թուրքիայի համար եւս: Թէ մենք եւ Թէ Թուրքիան ընտրել ենք այդ վէրքի դէմ վիրաբուժական միջոց. մենք դիմել ենք յեղափոխութեան, Թուրքիան՝ մեզ կոտորելու միջոցին: Մեզ մնում է ուրեմն երկուսից մէկը.— կամ սեփական ձեռքով Թաղել մեր դատը, կամ Թէ շարունակել մեր կռիւը այնքան, որ նա՝ Թուրքերի դէմ մինչեւ այժմ ուղղուած դժգոհութիւնների, պաշտօնական բողոքների եւ Թղթի սպառնալիքների չրջանը անցնելով, վերջապէս մի վերջ դառնայ նաեւ այն ազգութիւնների ու պետութիւնների համար, որոնք կապ ունեն Թուրքիայի եւ մեր հարցի հետ: Այն օրը, երբ դրանք եւս կը համոզուին, որ այդ վէրքի դէմ պէտք է դիմել վիրաբուժութեան, մեր դատը ապահովուած կը լինի. այդ օրը կը լինի ե՛ւ մեր յաջողութեան օրը:

Զմռռանանք, որ մեր մօտիկ անցեալը, — որքան եւ ծանր լինի դա մեզ՝ ժամանակակիցներիս համար, — պատմութեան մէջ շատ աննշան չըրջան պիտի համարուի, որպէսզի կարելի լինի նրանից որեւէ համարձակ եզրակացութիւնների յանգել: Մի Թոյլ, անդէն, ցիրուցան, բաւականաչափ անհատական եւ ռազմական բնաղդներով աղքատ ժողովրդի ազատագրական շարժումը այնպիսի մի հասարակական երեւոյթ չէ, որ իր առաջին բողբոջները ձգելուն պէս՝ հասունութեան հասնէր: Այդպիսի մի յաջողութիւն, ինչպէս վերեւը տեսանք, չեն ունեցել նոյնիսկ մեզանից աւելի նպաստաւոր պայմաններում գտնուող ազգերը.— ո՞ւր մնաց նոյնը պահանջել ընդամէնը տասը տարուան հասակ ունեցող մանուկ հայ յեղափոխութիւնից:

Այո՛, անցեալի կորուստները ճնշում, ճմլում են մեր սրտերն ու մտքերը, բայց չնմանուենք Թուղիդիտէսի այն հերոսին, որ կռուի միջոցին փոխանակ իր հակառակորդի հարուածներին դիմադրելու, փոխանակ աշխատելու նրա մարմնի ամենազգայուն կէտերին հարուածներ տեղալու, ձեռքերը սեղմում էր մարմնի այն տեղերին, ուր ընկնում էին հակառակորդի հարուածները: Կասկած չկայ, որ այդպիսի մի ընթացք մեզ կը տանէր միայն դէպի անպայման կորուստ, այն ինչ՝ յարատեւ կռիւը դեռ շատ բան կարող է խոստանալ մեզ: Եւ ո՞վ գիտէ՝ Թէ ինչ գոյնով պիտի լուսաբանուեն այսօրուան մեր կորուստները 50–100 տարուց յետոյ, երբ դրանք կը կապուեն հետեւո-

ղականութեամբ՝ մեր կեանքում տեղի ունենալիք յետագայ երեւոյթների հետ։ Ո՞ր ազգը արդեօք, — երբեմն ստրուկ, իսկ այժմ ազատ, — չէ մոռացել իր կրած զարհուրելի կորուստները։ Ո՞րը արդեօք դրանցից կը փոխէր այսօրուան իր ազատութիւնը նախկին վիճակի հետ եւ անցեալ կեանքի այնպիսի մի ընթացքի հետ, ուր ոչ մի զոհողութիւն, ոչ մի աւերում չլինէր կատարուած։ «Զկայ մարդկութեան համար աւելի դեղեցիկ յոյս, քան մի ճնշուած ազգի յարութիւն առնելը» — ստիպուած է եղել խոստովանել Նոյնիսկ այնպիսի մի հրէշ, որպիսին էր Տիզրայէլի։

Յարատեւ կռիւ, — յաճախ եւ երկար ժամանակ գուցէ անյաջող՝ չնայած երբեմն Նոյնիսկ իր լայն ծաւալին, — ահա՛ թէ ուր է մեր փրկութեան բանալին։ Պահպանե՛նք, շարունակե՛նք կռիւը, որպէս զի լայնանայ, ընդարձակուի, եւ ընդարձակուելով՝ յարատեւի։— ահա՛ դէպի մեր նպատակը տանող միակ ճանապարհը։ Չչեղուե՛նք այդ ճանապարհից, որ պատճառների եւ հետեւանքների կապակցութեամբ ունի պատմութեան մէջ հաստատուած օրէնքի ուժ. չչեղուե՛նք այդ միակ ճանապարհից, որ սփռուած է յուսատու ապագայի գրաւիչ ծաղիկներով...

1900

Քրիստափոր Միքայէլեան եւ Ռուբինա Արէշեան

ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԻՔ

I

Մենք թոյլ էինք անցեալ յեղափոխական կրուի ընթացքում, մենք զօրեղ չենք եւ այժմ։ Զանազան կարգի, զանազան բնագղների հայեր, ընդունելով միեւնոյն երեւոյթը իբր փաստ, տարբեր բացատրութիւններ են տալիս դրան։

«Ամբոխային տրամաբանութիւն» վերնագիրը կրող յօդուածների մէջ մենք արդէն խօսել ենք այդ բացատրութիւններից մի քանիսի մասին։ Նոյն յօդուածներում ցոյց ենք տուել նաեւ երկու տեսակի պատճառներ, որոնք կարող են որոշ չափով լուսաբանել մեր ներկայ թուլութիւնը։

Բայց այս երկու պայմաններից դուրս՝ կան եւ ուրիշ պատճառներ, որոնք նոյնպէս ի նկատի պէտք է առնուեն ներկայ հարցը աւելի լաւ լուսաբանելու համար։ Դրանցից մէկը, որի վրայ այժմ մանաւանդ մենք մտադիր ենք կանգ առնել, դա միջավայրի անհրաժեշտ խնդիրն է, որի շնորհիւ ամէն-մի հոսանք միշտ իր արտայայտութիւններում այլափոխւում, այս կամ այն ուժը,

այս կամ այն զոյնն է ստանում։ Համամարդկային ընդհանուր օրէնքները անկարող են դեռ բացատրել բոլոր այն երեւոյթները, որոնք տեղի ունեցան կամ դժբախտաբար տեղի չունեցան մեր շարժման մէջ։ Այդ նպատակին հասնելու համար մենք պէտք է վերցնենք նաեւ հայկական այն ուրոյն մթնոլորտը, զուտ ազգային մեր այն նկարագիրը, որի պայմաններում պէտք է դարգանար մեր շարժումը։

Չկայ մարդկային պատմութեան մէջ չրջան, որ նախապատրաստուած չլինէր նախորդ չրջանում կամ չրջաններում։ Լաւը կամ վատը յայտնի ժամանակում, մանաւանդ երբ դրանք արտայայտում են աչքի ընկնող, խոշոր ծաւալներով, անշուշտ ունեն նախորդ անցեալում իրենց որոշ արմատները, եւ որքան լաւը, դրականը պէտք է նկատուի անհրաժեշտ արդիւնք–վարձատրութիւն արժանաւոր անցեալի, նոյնքան էլ վատը, բացասականը պէտք է համարուի բնական արդիւնք–պատիժ յանցաւոր անցեալի։ Այդպէս, օրինակ, միապետական ռեժիմի սահմանափակում կամ կատարեալ կործանում, ստրուկների ազատութիւն, ընտրողական սկզբունք, ընդհանուր ժողովրդական ձայնատուութիւն, դիտութիւնների ծաղկում եւ այլ բարերեր քաղաքակրթական երեւոյթները պատրաստուել են երկար ժամանակների ընթացքում։ Նոյնպէս եւ բացասականները· հռոմէական կայսրութիւնը վերջացաւ 475 թուին,

բայց ամենքին յայտնի է, որ նրա անկումը արդէն փաստ էր Թէոդորոսի օրերից, իսկ այդ օրերը իրենց ծնունդն առին դեռ քրիստոնէութեան առաջին տարիներում՝ Կալիգուլաների եւ Ներոնների հետ։ Բիւզանդիոնը ընկաւ 1453 թուին, Կոստանդին Պալէօլոգի օրով, բայց ով չգիտէ, որ այս կայսրութիւնը արդէն իր կեանքի կէսից թեքւում էր շարունակ դէպի անկում։ Ֆրանսական միապետութիւնը խորտակուեց Լուդովիկոս ԺԶ·ի օրով, բայց մենք գիտենք, որ Լուդովիկոսը անձամբ ոչ մի մեղք չունէր նախկին ռեժիմի վատութեան մէջ եւ նոյնիսկ, իբրեւ անձնաւորութիւն, ինչպէս եւ Կոստանդին Պալէօլոգը, վատ մարդ չէր։

Չունե՞նք եւ մենք մեր անցեալում այնպիսի գործոններ, որոնք կարող էին մեծ նշանակութիւն ունենալ այսօրուան մեր թուլութեան, այսօրուան մեր դժբախտութեան փաստում։

«Հայ հեղինակի պարտականութիւնն է, — ասում էր Ստեփանոս Նազարեանցը 1860 թուին, — այսօր ցուցանել անաչառապէս, թէ հայոց ներկայ, այժմեան դրութիւնը չէ մի պատահական բան, մի անիրաւ ընթացք բախտի կողմից դէպի Հայկի որդիքը, այլ մի հարկաւոր հետեւանք նոցա թոյլ եւ աննշան պատմական կեանքի, նոցա անքաղաքագէտ կառավարութեան···, նոցա կործանիչ անմիաբանութեան···, անմիտ,

մասնաւոր անձնասիրութեան այնպիսի միջոցներում, երբ հայրենիքը պահպանելու համար պիտոյ է լռէին եւ պապանձէին առանձնական ախտերը, եւ հայրենիքի պահպանութիւն պիտոյ է լինէր միակ օրէնստու առաջնորդը եւ միակ նպատակը իւրաքանչիւր մասնաւորի առանձնապէս եւ ամենեցուն ընդհանրապէս: Ուր հարկաւոր է եղել միաբանութեամբ գործ դնելու թշնամու դէմ քաղաքական առաքինութիւններ, հայերը՝ անձնական շահը վերադասելով ընդհանուրից, կործանուել են ինքեանք իւրեանց մէջ··· Եթէ կան ազգի հոգու մէջ մի քանի կայծեր կենդանութեան, թող ազգի *բարեմիտքը*, ձեռք ու սիրտ տուած միմեանց, *զարթեցնեն ու բորբոքեն դրանց (կայծերը)*· ապա թէ ոչ, անտարակոյս է, որ շատակեր կռռնոսը կ'ուտէ եւ կը մաշէ մեզ իբրեւ անպիտանացած որդիք ժամանակի»:

Եւ սկսեցին «ազգի բարեմիտքը զարթեցնել եւ բորբոքել ազգի հոգու մէջ եղած կենդանութեան կայծերը»: *Այդ «բարեմիտներն» էին՝ ինքը Նազարեանց, Միքայէլ Նալբանդեանց, Գամառ-Քաթիպա, Բաֆֆի, Արծրունի, — մեր վերջին երկու սերունդի ամենախոշոր աստղերը: Սակայն, ինչպէս* հրեղէն խօսքերի *այդ տիտանները իրենց գործունէութեան շրջանում երբեք չմոռացան այն միջավայրը, որի հետ գործ ունէին, նոյնպէս եւ նրանց հարազատ յաջորդ՝* հրեղէն գործերի *հեղինակ յեղափոխական երիտասարդութիւնը՝ պէտք չէ անտես առնէ այն որոշ պակասութիւնները, որոնց կնիքը կրում է մեր տըխուր անցեալը*:

1862 *թուին՝ նոյն Նազարեանցը գրում էր*·

«Մեր հայերը ասիական բռնակալութեան տակ, — ինչպէս նոյն պայմանների մէջ սովոր է պատահել նոյն բանը ամենայն ազգերի, — ուսել են միմիայն խորամանկութիւն եւ խարդախութիւն··· երբեք մտաբերել չեն դոքա թէ միաբանութեամբ կարողացած կը լինէին իւրեանց հասարակաց թշուառութիւնը թեթեւացնել: Այսպէս յառաջացել է մեր մէջ այն առանձնութեան հոգին, այն անսէր բարքը, այն կոպիտ անձնապաշտութիւնը, որ չէ թողում հայերի մէջ գոյանալու մի ընկերական բան, մի հասարակօգուտ ձեռնարկութիւն:

«Լեւոնի Վշտի» *հեղինակ Սմբատ Շահազիզեանը՝ բերելով Նազարեանցի այս խօսքերը իր «Հրապարակախօս Զայն»ի մէջ (երես 218), աւելացնում է իր կողմից*·

«Եթէ մինին զարկում են, միւսը փոխանակ օգնական լինելու իւր ընկերներին, փախչում է»··· Երեւի, մեր ազգը, երկար տարուբերուելով ասիական լծի տակ, կորցրել է եւ իր գեղե-

ցիկ յատկութիւններից շատերը· հայոց ազգի որդիքը, սկզբում հանդիսացած հերոսական քաջութեամբ եւ հայրենասիրական օրինակներով, այնքան նեղութիւն են քաշել օտարից, որ այժմ այլեւս չեն կարող արծարծել իրենց սրտում առաջի աշխոյժը ու արիականութիւնը: Այդ անբնական դրութիւնը, որի մէջ գտնւում է հայը, յառաջ է բերել նրա համար եւ շատ չարայաջող հանգամանքներ, որպիսի են, մտերմաբար ծառայել օտարին, օտարի առաջ երկչոտ նապաստակ դառնալ, իսկ իւր խեղճ եղբօր համար հայակերպ գազան· օտարինը պաշտպանել եւ իւրը կործանել: Եթէ այդ տեսակ դատողութիւնը միայն իմ գրչի պտուղը լինէր, ես վերջ ի վերջոյ կը փոշմանէի եւ կը ճղէի գրած տողերս· բայց տարաբախտաբար բոլոր ազգագէտ հեղինակները նոյն բանն են վկայում եւ սարսափելի իրողութիւններով իրենց ասածը հաստատում»:

Բաֆֆին, ի հարկէ անկախ Նազարեանցի չեշտած «կայծերից», — նոյնիսկ «Կայծեր» էլ անուանեց իր հռչակաւոր պրուածքներից մէկը, բայց ահա ինչ ենք կարդում այդ վէպի 323–325 երեսներում.

«Տխուր է մեր անցեալը, եւ մեր ներկայ կեանքը անցեալի շարունակութիւնն է: Ես շատ տեղեր եմ մանեկել, շատ երկիրներ եմ տեսել, բայց ոչ մի ազգ չեմ տեսել, որ հայի նման լինէր··· Որտեղ երկու տուն հայեր կան, նրանց մէջ չորս կուսակցութիւն կայ: Անմիաբանութիւնը վաղեմի ժամանակներից մեր ազգի կեանքի մէջ այն ուտող, մաշող ցեղն է եղել, որ ժառանգաբար անցել է մեզ, եւ որ սպառել է ազգային մարմինը: Մեր պատմութեան մէջ կարող էք տեսնել հազարաւոր օրինակներ, մանաւանդ այն դարերում, երբ պարսիկները, յոյները, արաբացիները, սելջուքները եւ մոնգոլական զանազան ցեղեր կրակով եւ արիւնով ոչնչացնում էին Հայաստանը··· Թուրքերի մէջ արդէն առած է դարձել ասել՝ «կեաւուրների գլուխները չեն միանայ», որ կը նշանակէ, թէ հայերի մէջ միաբանութիւն չէ կարող կազմուել: Ցաւալի է մի այդպիսի կարծիք, եւ աւելի ցաւալի է, որ նա ուղիղ է··· Հայը ոխերիմ է՝ մատնիչ է, վրէժխնդիր է այն անարգանքի դէմ, որ նա կրում է մի այլ հայից: Բայց եթէ նոյն անարգանքը նա ստանում է տանիկից, քուրտից, մի խօսքով՝ օտարից, նա ամենայն խոնարհութեամբ համբերում է»:

Գամառ-Քաթիպայի, — այդ հայկական Ադամանտոս Կորայիսի, — խոշոր ամբաստանութիւնները հայերի հասարակական ախտերի մասին ոչ միայն ծանօթ են բոլորին, այլեւ յաճախ մեր «ազգասիրութեան» բոպէներին երգւում են առանց խղճահարութեան:

Գրիգոր Արծրունու հայեացքները հայի ցեղական յատկութիւնների վրայ նոյնպէս յայտնի են ամենքին։ Մենք բերենք այդ հայեացքների մի ամենամեղմ նմուշը, որ կարդում ենք նրա «Տաճկահայերի տնտեսական դրութիւնը» *գրքոյկի մէջ։*

«Հայը ունի եւ խոշոր պակասութիւններ իր մեծ արժանաւորութիւնների հետ միասին — անմիաբանութիւն, անհաշտ ոգի, ոխ, նախանձ, բայց դրանք բոլորն էլ դարեւոր ստրկութեան հետեւանք են մահմետական տիրապետութեան տակ։ Ազատութիւնը չէ կարելի սովորել ստրկութեան մէջ։ միայն ազատութիւնն է վարժեցնում ազատութեան»։

«Հայերի առաքինութիւնները *խաղաղ* ժամանակի առաքինութիւններ են, իսկ ախտերը հետեւանք՝ այն ենչման, որին նրանք ենթակայ են». — *ասել է Պայրոնը, կարծես ուզենալով չեչտել, որ հայերը զուրկ են* անխաղաղ *օրերում պահանջուող առաքինութիւններից։*

Այս վերջին միտքը աւելի որոշ կերպով արտայայտուած ենք գտնում երկու գրքոյկներում, որոնք պատկանում են մէկը՝ հրէատեաց եւ իսլամատեաց մի ֆրանսացու, Կիմոն *անունով, իսկ միւսը ֆրանսական մի սպայի՝ կոմս* Շոլէ *անունով։*

Կիմոնը իր «La pathologie de l'Islam» *գրքի* 205 *երեսում ասում է.*

«Այսօր երկար շրջանի այն ենչումներից յետոյ, որոնց ենթակայ են եղել հայերը, այն ծանր ստրկական տանջանքներից յետոյ, որոնց նրանք բռնադատուած են եղել, հայերի հին յատկութիւններից մի քանիսը կորչել, ոչնչացել, անհետացել են։ Օրինակ, նրանց համար օտար են՝ ռազմական զգացում, պատերազմական հակումներ, մարտական ոգի, զինավարժութեան սովորութիւն, յարձակման բնազդ, յաղթութեան բերկրանք։ Նրանք կորցրել են, — ինչ որ շատ վըտանգաւոր է, — նոյնիսկ ինքնապաշտպանութեան զգացմունքը»։

Շոլէն «Arménie, Kurdistan et Mésopotamie» *իր ճանապարհորդական նկատողութիւններում յաճախ վիրաւորիչ լեզուով է խօսում հայերի մասին, եւ մենք կը բաւականանք մի քաղուածքով միայն (երես* 86)։ *Ցիչելով, որ նեստորականները, սուրիացիք եւ Լիբանանի մարոնիտները՝ աւելի սակաւաթիւ լինելով, կէս-անկախութիւն են ձեռք բերել, Շոլէն չարունակում է.*

«Հայերը աւելի բազմաթիւ են, աւելի հարուստ, աւելի նեցուկներ ունին, բայց չեն հասել··· ոչ մի բանի։ Նրանց պակասում է պատե-

բազմական ոգին, ապստամբական զգացմունքը, որ կարող էին պահպանել նրանց»:

* * *

Հայ յեղափոխական շարժումը իր գիտակցական զոհերով, իր հերոսական կռիւներով, իր նահատակներով, ի հարկէ մաքրեց հայի ճակատից մի խոշոր մասը այն սարսափելի անարգանքի, զոր դրոշմել էր նրա վրայ բարոյապէս մաշող, քայքայող, անողորմ պատմական անցեալը: Այդ ճիշդ է եւ դրա մասին այլեւս խօսք չէ կարող լինել: Բայց արդարադատ լինելու համար չմոռանանք նաեւ, որ վերոյիշեալ հեղինակները, չեչտելով հայի ցեղական կորստաբեր պակասութիւնները, չեն մոռանում նաեւ նրա արժանաւորութիւնները.— նրա կուլտուրական հակումները, նրա մարտաւոր ընդունակութիւնները եւ տոկունութիւնը, որոնց շնորհիւ՝ դարերի ընթացքում մի բռնակալից միւսի ճանկը ընկնելով, տանելով իր վրայ յոյների եւ պարսիկների փոխադարձ կռիւների ամբողջ ծանրութիւնը, յօշոտուելով հռոմայեցիներից, արաբներից, թաթարներից եւ տաճիկներից, — հայ ժողովուրդը այնուամենայնիւ կարողացել է պահպանել իր ազգային ինքնուրոյնութիւնը: Ինչ վերաբերում է յատկապէս հայ հեղինակներին՝ չէ՞ որ թէկուզ միայն հենց իրենց՝ այդ հեղինակների գոյութիւնը, նրանց մաքուր գործունէութիւնը, նրանց բարոյական բարձր գիտակցութիւնը, նրանց հրաբխային հոգիները արդէն մի-մի խոշոր ապացոյցներ էին, որ հայութիւնը դեռ եւս բոլորովին ընկած չէ: Չէ՞ որ եթէ նրանք արժանի չհամարէին հայ ժողովուրդը մի աւելի լաւ դրութեան, եթէ չպաշտէին այդ ազգը իրենց սրտի խորքում եւ որ գլխաւորն է, չհաւատային հայութեան լաւագոյն ապագային, նրանք չէին էլ այրուի-տանջուի նրա ցաւերով, չէին էլ տալ իրենց ամբողջ հոգին այդ ժողովրդի վերածնման գործին, չէին էլ ամենայն ժամ հրաւիրի՝ «քոռ այսօր — ինչպէս ասում էր Նազարեանցը — մեր ազգիւ եղբայրքը, իւրեանց անձնական ախտերը վեհանձնութեամբ զոհ բերելով հայրենիքի սուրբ սեղանի վրայ, դառնան մի կամք, մի հոգի, մի սիրտ հայկական աւերակ տունը չինելու համար»:

Նոյն դրութեան մէջ պէտք է զգան իրենց ներկայումս եւ հայ յեղափոխականները, որոնց գործը այսօր դժուարացնում է սաստկապէս ոչ միայն ահարկու թշնամին, որի օրերը սակայն հաշուած են, ոչ նոյնիսկ քաղաքական դաւաճան հանգամանքները, որոնք տեւական չեն կարող լինել, — այլ պակասութիւնը, թուլութիւնը այն ազգային ճիգերի, որոնք հարկաւոր են «հայկական աւերակ տունը չինելու համար»: Չմոռանանք, որ այն օրից, երբ «Հիւսիսափայլը» հնչեցնում էր հայերի ականջին միութեան իր կոչը,

շատ ժամանակ անցաւ եւ թէեւ հայութեան հաւաքական դիտակցութիւնը յառաջդիմեց ու ծաւալուեց, բայց դրա համեմատ՝ անողոք պայմանների չնորհիւ՝ չատացան, խստացան նաեւ մեր օրերի պահանջները...

Եւ երբ սառնարիւնութեամբ դիտում էք դուք՝ թէ ինչ է ներկայացնում ընդհանուր առմամբ հայկական կեանքը մի այնպիսի կրիտիկական բոպէում, ուր մեզ կոտորում են չտեսնուած ու չլսուած չափերով, երբ տեսնում էք, քանի-քանի՛ գործեր, — նոյնիսկ անպայման ապահով իրենց անմիջական արդիւնքների տեսակէտից, — չեն ձեռնարկուել եւ չեն ձեռնարկւում այսպիսի մի ճգնաժամում միմիայն միջոցների կամ մարդկանց պակասութեան պատճառով, երբ միաժամանակ նկատում էք, թէ որքան վնասակար, այլանդակ, քայքայիչ երեւոյթներ են տեղի ունեցել եւ ունենում են չուրջներդ. երբ վերջապէս պատկերացնում էք ձեր աչքի առաջ այն պարզ ճանապարհները, որոնց վրայ մի քանի իրար յաջորդող բուռն ջանքեր գուցէ բաւական լինէին մեր ապագան յաւիտեան ապահովելու համար, — այն ժամանակ կամայ-ակամայ անդրադառնում էք անիծեալ մեր անցեալին, որի պատուաստած սեւ արիւնը անկասկած դեռ ամբողջովին չէ կորցրել իր աւերիչ ուժը մեր երակներում:

II

Առաջ բերելով հայկական միջավայրի, *ազգային մեր առանձնայատկութիւնների խնդիրը, մենք չենք դնում մի մետաֆիզիքական հարց: Եթէ հիմնովին մերժենք անպամ* ցեղական *ուրոյն, հիմնական տարբերութիւնների մասին գոյութիւն ունեցող յայտնի տեսութիւնները* (*Մոնթեսքիո, Կիզո, Թէն, Ռենան եւայլն*), *յամենայն դէպս պէտք է ընդունել առնուազն, որ կայ առանձնայատկութիւնների մի որոշ* զանգուած, *որ այս կամ այն ազգութիւնը ստանում է երկար ժամանակ միեւնոյն պայմանների ազդեցութեան ենթարկուելով եւ այդ առանձնայատկութիւնները, — ժառանգական օրէնքի համեմատ, — սերունդից սերունդ փոխադրելով: Երկրի աշխարհագրութիւն, կլիմայ, միջազգային դրութիւն, կառավարութեան ձեւ, օրէնքներ, պատմական անցեալ իր դժբախտութիւններով, յիշողութիւններով եւ փորձերով, դրականութիւն, լեզու, կրօն, եւայլն, — ահա այն պայմանները, որ կարող են կրթել մի ժողովրդի մէջ այս կամ այն հակումները, որոնք իրենց տեսակով կամ չափով չեն կրկնւում ուրիշ ժողովուրդների մէջ:*

Ահա ինչպէս է «յառաջացել մեր մէջ այն առանձնութեան *հոգին, այն* անսէր *բարքը, այն կոպիտ* անձնապաշտութիւնը, *որ չէ թողնում հա-*

յերի մէջ գոյանալու մի ընկերական գործ, մի հասարակօգուտ հիմնարկութիւն»: Ահա ինչպէս են զարգացել մեր մէջ այն բնազդները, որոնց համեմատ՝ «ուր հարկաւոր է եղել միաբանութեամբ գործ դնելու թշնամու դէմ քաղաքական առաքինութիւններ, հայերը՝ անձնական շահը դերադասելով ընդհանուրից, կործանուել են իրենք իրենց մէջ»:

Թողնենք մօտիկ անցեալը: Թողնենք այն զարմանալի տեսարանները, երբ Պերլինի դաշնագրից յետոյ հայ մտաւորականութիւնը, ընդհանրապէս վերցրած, առանց տեղիցը շարժուելու, առանց մատը մատին խփելու՝ Եւրոպայից բացարձակապէս պահանջում էր «հայկական անկախութիւն» (տես 1878–79 թուերի պարբերական հրատարակութիւնները), ո՛չ աւել, ո՛չ պակաս, իսկ հայ բուրժուազիան, հաւատարիմ իր մշտական սկզբունքներին, նորոյթի հարցի չափ անգամ կարեւորութիւն չէր տալիս այնպիսի մի հսկայական խնդրի, ինչպէս էր հայկական դատը: Դիմենք վերջին տասնամեակին միայն, երբ հայ–թրքական յարաբերութիւնները արդէն ստացան ամենասուր կերպարանք, կեանքի եւ մահու խնդիր ստեղծեցին մեզի համար եւ առաջ բերին մի տագնապալից, մի բացառիկ, մի անօրինակ ծանրագոյն վիճակ: Ի՞նչ կարող է աւելի պարզ լինել քան այն, որ բացառիկ դրութիւնը պահանջում էր նաեւ բացառիկ եռանդ, բացառիկ գործունէութիւն, բացառիկ ճիգեր: Բայց ո՞վ հետեւեց այդ պահանջին՝ բացի մտաւորական կամ զուտ ժողովրդական երիտասարդութեան համեմատաբար մի աննշան փոքրամասնութիւնից:

* * *

Ահա մի քանի գծեր:

Հազարաւոր անհատներ կարելի է գտնել հայերի մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարող էր ամբողջ նահանգներ զինել Տաճկահայաստանի մէջ: Դուրս եկա՞ւ գոնէ մէկը: 1895 թուին, պատմում է Մակ Կօլը («Սուլթան եւ Պետութիւններ») հայկական կոտորածների տպաւորութեան տակ.

«Մի անգլիացի, իր քաղաքական համոզմունքներով պահպանողական, յայտարարեց, որ եթէ մեծ պետութիւնները, իրենց մեծազօր սկզբունքներով, արիութիւն չունեն սուլթանի ոճրագործ կատաղութիւնը սանձահարելու, ուրեմն Հայաստանում դիւանագիտութիւնը առնուազն կարող է փոխարինուել ինքնայօժար ջանքերով, ինչպէս այդ եղաւ յունական անկախութեան կռուի ժամանակ, եւ իր կողմից նա առաջարկեց 5000 ֆ. ստ. (25,000 ֆրանկ), որ զէնք գնուի անօգնական քրիստոնեաներին բաժանելու համար Տաճկաստանի այն տեղերում, որտեղ մատչելի են ծովի կողմից»:

Իսկ մե՞նք, հայե՞ր... Բաւական է յիշել, որ ամենախոշոր գումարը, որ ամբողջ հայութեան մէջ մի հատիկ մարդ նուիրել է դէնքի գործին, այդ եղել է ընդամէնը 25·000 ֆրանկի չափ մի ծախս... Բայց միաժամանակ քանի՛-քանի՛ անձնուէր եւ փորձուած գործիչներ, քանի՛-քանի՛ գաւառներ կորան, հալուեցին միմիայն եւ մի միայն տարիների ընթացքում եւ ամենաբարեյաջող հանգամանքներում դէ՛նք, դէ՛նք ու դէ՛նք սպասելու եւ վերջ ի վերջոյ չստանալու պատճառով...

Հպարտաւոր նիւթապէս ապահով հայեր Հնդկաստան, Անգլիա, Ամերիկա, Ափրիկէ, Ջհանամ են գնում ով գիտէ ինչ գժոխային միջոցներով՝ իրենց ունեցածը աւելացնելու համար, բայց եւ ոչ մէկը չգտնուեց, որ այսպիսի մի անսովոր պատմական դժբախտութեան օրերում տեղիցը շարժուէր հասարակօգուտ որեւէ ձեռնարկի համար: Եւ այս ոչ միայն հին սերունդի ներկայացուցիչների մէջ, այլեւ երիտասարդ դրամատէրերի շրջանում, որոնք ունեն ե՛ւ ուսում, ե՛ւ զարգացում ու երբ սկսում են խօսել հասարակական գործունէութեան եւ ժողովրդի շահերին ծառայելու անհրաժեշտութեան վրայ, Կլատսթոններ ու Լասսալներ պէտք է դերեկմաններից կանչուեն նրանց հետ մրցելու համար...

Քաղաքակիրթ աշխարհում էլ ժողովուրդ չմնաց, որ այս կամ այն չափով արձագանգ չտար հայկական թշուառ վիճակին: 1894 թուականից սկսած՝ անգլիացիք, ֆրանսացիք, հոլանտացիք, ամերիկացիք, զուիցերիացիք, նոյնիսկ գերմանացիք հայերին օգնութեան ձեռք մեկնեցին, երկրի մէջ հայ ժողովրդին գրամ, հաց եւ երկրագործական անասուններ բաժանելու կամ որբացած մանուկներին խնամելու եւ կրթութիւն տալու համար: Իսկ ի՞նչ արին իրենք հայերը: Մենք ունենք հպարտաւոր հայեր, որոնցից իւրաքանչիւրը կարող էր նոյնքան մարդ կերակրել, նոյնքան որբանոցներ հիմնել, որքան այդ արուեց մի քանի ազգերից ժողովուած գրամներով. բայց դուրս եկա՞ւ այդպիսի մէկը: Ցայտնի է, որ միակ մի Ջանչեան, ծպզումով միայն հայ, իսկ կրթութեամբ կէս վրացի, կէս ռուս, իր անձնական աշխատանքով աւելին արեց հայ մանուկների համար, քան մեր «ազգասէր» հարուստները:

Ո՞վ չէ յիշում 1890–91 թուականների ազմուկը հայ մտաւորականութեան մէջ՝ Տաճկաստանում թէ Տաճկաստանից դուրս, կանանց թէ տղամարդկանց, երիտասարդների թէ հասակաւորների մէջ: Իսկ ո՞ւր են դրանք 1891–92ից սկսած: Արժան գնով ազատութիւն ձեռք բերելու յոյսերով հարբած՝ դրանք մօտեցան յեղափոխական գործին, կարծես վախենալով, որ էգուց-միւս օրը յանկարծ առանց իրենց անմեղ ազմուկին էլ Հայաստանը ինքնաբերաբար կը հռչակուի եւ յետոյ այդ հանդիսաւոր օրը իրենք կը մնան առանց

դափնիների։ Բայց հենց որ իրականութիւնը պարզեց, որ գործը անորոշ ժամանակով՝ բացի զոհողութիւններից, ոչ մի տեսակ դափնիներ չէ կարող խոստանալ ոչ ոքի, դրանք չքացան, ինչպէս քամու մի շնչով ստեղծուած ալիք։ Դիցուք թէ հասարակ կամ մտաւորական ամբոխի մէջ դա ընդհանրապէս հասկանալի մի երեւոյթ է։ Բայց ո՞ւր մնացին նաեւ երբեմն յեղափոխական կենտրոններում բազմելու համար գլուխ պատառող մեր պարոնները. ո՞ւր են երբեմն գլխաւոր վարիչ անդամների մեծագոյն մասը. ո՞ւր են դիչեր ցերեկ դրանց շուրջը պտտող «համոզուած» յեղափոխականները. ո՞ւր են յեղափոխական ամբողջ շարժման տօն տալու յաւակնութիւնը տածող կամ իրենցից հարիւր անգամ աւելի զոհողութեան ընդունակ տարրերի գլխին «անձնանուիրութեան» եւ «նոր արշալոյսների» մասին ճառող կարմիր դրօշակակիրները։ Հաւատարիմ իրենց «խելօք» հայրերին, նրանք իրենց համար այժմ նոյնպէս աւելի ձեռնտու պայմանների եւ հասարակական դիրքի են ձգտում, ինչպէս ձեռնտու կերպով այն ժամանակ կարող էին յեղափոխութիւնով զբաղուել...

Նոյն 1890–91 թուականներին էր, որ ռուսահայ եւ տաճկահայ մտաւորականութիւնը իրար հետ մրցում էին հայ ժողովրդի ազատագրութեան նուիրուելու փառաւոր խոստումներով։ Իսկ յետո՞յ... Յետոյ տաճկահայ մտաւորականի իտէալը դարձաւ ամբողջ երկրագունդը՝ մինչեւ տոլարների հայրենիք Ամերիկան, իսկ ռուսահայինը՝ Բագու, ուր մարդիկ երբեք դէպի վերը, դէպի բարձրը, դէպի իրենցից հեռուն չեն նայում, այլ միշտ դէպի ներքեւ, դէպի երկրի տակը, դէպի ղժոխային այն խաւարը, ուր 150–200 սաժէնի խորութեան անդունդներում թաղնուում է նաւթջրի կախարդիչ փայլը... Ընդհանուր դրութիւնը ծանր է. Տաճկաստանում կոտորում են, Ռուսաստանում հալածում. — եւ ահա հայ մտաւորականը հաւատարիմ իր մօր կաթի հետ ծծած ստրկական բնազդներին, զգում է իրեն ինչպէս մի ժանտախտի օրերում «ազատուի՛ր, ով կարող է». «փախի՛ր՝ ով ոտքեր ունի», — եւ փախչում են՝ ոտի տակ տալով բոլոր այն տարրական պարտաւորութիւնները, որ ծանրանում են նրանց վրայ այսպիսի մի ղժուար պատմական րոպէում։

Ամբողջ իննսնական թուականներում հայ ուսանողների թիւը, մանաւանդ Եւրոպայում, աճում է։ Նահատակուած յեղափոխականների ընկերները անգամ դրանց անունով վրէժ չեն կոչում, այլ այդ նահատակների հետ իրենց ունեցած մօտիկութիւնը պատուանդան են շինում նրանց յիշատակը յարգողների առաջ, որպէսզի իրենց համար թոշակ գտնեն եւ Եւրոպա գան՝ այստեղ «գեղեցկի եւ բարւոյ» իրենց ճաշակները նրբացնելու համար... Ուսման դէմ ի հարկէ մենք

ոչինչ չունենք։ Բայց երբ մենք յիշում ենք, որ գիտութեան եւ արուեստին, որ հասարակական բարոյականութեան եւ գրականութեան ոչ մի ազգ այնքան հանճարներ չէ տուել, որքան հրէական ազգը, որ սակայն՝ ամենքից արհամարհուած՝ այսօր ծեծւում եւ արտաքսւում է աշխարհիս բոլոր անկիւններում, երբ ի նկատի ենք առնում, թէ ինչ սիրով են մեր վաչխառու հայերը, որոնք երկիր իրենց որդոց բազավխանա էին ուղարկում, այսօր ամէն զոհողութիւններով ուսման տալիս զրանց, երբ մի փոքր էլ մօտիկից նայելով այդ ուսանողներին՝ տեսնում ենք, թէ որքան մեծ տոկոսը զրանցից զանազան կարգի բմիճներից, թթուատներից եւայլն միայն վկայականների զբաղեր են որսում իրենցից աւելի փափուկ ապրողների հետ յաջող մրցելու համար, — այն ժամանակ ակամայ սկսում ենք կասկածել՝ թէ արդեօք ներկայ ճգնաժամում այդ ամէնը համապատասխանո՞ւմ է մեր ժողովրդական պահանջներին...

Եւրոպայում այնպիսի յայտնի անձնաւորութիւններ, ինչպէս Ռիչիոտտի Կարիպալի, Ամիլկար Զիպրիանի, Ֆրանսիս տը Փրեսանսէ, Ժերոնիչար, Ժորժ Ֆաւոն եւ Ուրբէն Գոյիէ, ինչպէս յայտնի է ընթերցողներին, «Դրօշակ»ի խմբագրութեան դիմումներին պատասխանեցին հրապարակաւ, հենց «Դրօշակ»ի մէջ, արտայայտելով իրենց բոլոր համակրութիւնը դէպի մեր կուիը

եւ տալով իրենց անունները մեր ձեռքը,— նրանց համար անյայտ անձնաւորութիւնների ձեռքը, — իսկ հարիւրաւոր հայ պատանիներ, որոնց բերանին դեռ չէ ցամաքել իրենց մօր կաթը, այնքան խելօք, այնքան շրջահայեաց, այնքան բարձր են այդ բոլոր անձնաւորութիւններից, որ իրենց համար, նոյնիսկ նեղ շրջաններում, անպատուաբեր են համարում յեղափոխութեան կամ որեւէ յեղափոխական կազմակերպութեան համակիր անուանել եւ անել այն բոլորը, ինչ կարող են։

Իսկ ժողովո՞ւրդը։ Կոմս Շոլէն անունով Ֆրանսացի զինուորականը՝ Հայաստանում գործած իր մի ճանապարհորդութիւնից յետոյ՝ 1892 թուին գրում էր.

«...Եւ երբոր հայկական գիւղերում, ուր թագաւորում էր ամենասեւ թշուառութիւն, մեզ հարցնում էին հայերին՝ թէ ի՞նչ են նրանք մըտածում անել, նրանք՝ փոխանակ մոնչալով իրենց զէնքերի վրայ ցոյց տալու, փոխանակ մտածելու, որ կարելի է նրանք կարող կը լինէին մի օր բոլորը միասին ոտքի կանգնել քրտերի դէմ, որոնք նրանց տանջում են, եւ ձեռք բերել, եթէ հարկաւոր լինի՝ իրենց արեան գնով, իրենց ցաւերին մի հանգստութիւն, ինչպէս նաեւ մի որոշ ազատութիւն, նրանք պատասխանում էին սարսափած եւ անհամարձակ, որ Աստուած իրենց թողել է, որ այլեւս որեւէ յոյս չունեն, որ սա-

կայն եթէ շարունակեն իրենց հետ այսպէս վարուել, իրենք մի օր կը գաղթեն Ռուսաստան՝ այնտեղ աւելի լաւ կեանք եւ որեւէ հանգստութիւն գտնելու համար»:

1897 թուին մի ուրիշ ֆրանսացի, պ. Կիմոն, գրում էր.

«Դիտուած է, ի զարմանս ամբողջ աշխարհի, որ վերջին կոտորածների ժամանակ՝ Պոլսում եւ Հայաստանում որեւէ բանի անպէտք ջահիլ թուրքերը յարձակւում էին յաղթանդամ հայերի վրայ, որոնք՝ եթէ ընդունակ լինէին իրենց ձեռքերը գործածելու, բռունցքի մի հարուածով կարող էին լուերի նման ջախջախել իրենց վրայ եկող թշուառականներին: Այդ հայերը տեսնելով ֆիւրտերին, նրանց ոտքի տակն էին ընկնում, ծածկում էին երեսները եւ թոյլ էին տալիս զըլուխները կտրել կամ պատռել իրենց գանկերը»:

Իսկ Ուրբէն Գոյիէն «Դրօշակ»ի մէջ (1900 Օգոստոս) գրած իր յօդուածում ասում է.

«Հայերը իրենցից 300 հազար հոգի կորցրին՝ պարանոցները դանակի տակ դնելով: Եւրոպան դղրդեցնող ի՞նչ սեաւոր պատերազմներ կարող էին մղել՝ հրացանները ձեռքերին, տասնապատիկ աւելի ածան գնով»...

Հարիւր հազարաւոր նահատակներ, այդքան էլ գաղթականներ եւ կրօնափոխ եղած հայեր, ի հարկէ, եթէ դուրս բերէին թշնամու դէմ իրենց մի տասներորդ մասը անգամ, գուցէ քարով ու կացիններով էլ կարողանային «հսկաւոր պատերազմներ մղել» եւ, «դղրդեցնելով ամբողջ Եւրոպան», աւելի քիչ զոհեր տային... Բայց դարեւոր ստրկութեան եւ հալածանքի յաւիտենական գերի հայ ժողովուրդը, որին ամբողջ պատմութիւնը զերազանցապէս միայն մէջք ծռել էր սովորեցրել, ընդունա՞կ էր «ինքնապաշտպանութեան» ուրիշ ձեւերի, քան ամենակրաւորականները...

* * *

Ահա ուրեմն, ի միջի այլ պայմանների, որպիսի ներքին, վերին աստիճանի աննպաստ հանգամանքներում պիտի զարգանար հայկական խընդիրը եւ նրա արտայայտութիւն՝ հայ յեղափոխական շարժումը:

Մենք ի հարկէ կարող ենք, ինչքան թելադրում է մեզ մեր անձնապաշտ արիւնը, մեղադրել յեղափոխականներին, որ նրանք 10 տարուան ընթացքում չկարողացան հիմնայատակ անել տաճկական պետութիւնը եւ նրա աւերակների վրայ պարզել հայկական ազատութեան դրօշակը: Մենք կարող ենք, ի հարկէ, նոյն մեր

անմնապաշտ արեանը հետեւելով, անիծել երկրագնդիս բոլոր քաղաքակիրթ ազգերին էլ, որ այն ժամանակ, երբ մենք անասնական թէ սրիկայական, վաշխառուական թէ սարկական ժըպիտներով վերաբերուեցինք դէպի օրաւուր մեր առաջը դնուող խնդիրները, նրանք, — այդ ժողովուրդները, — ղլխապատառ ոտի տակ չտուին իրենց բոլոր շահերը եւ հայկական կռուի դաշտը չդրաւեցին... Այո, կարող ենք այդ էլ անել, ուրիշ շատ բաներ էլ անել, բայց ե՞րբ պիտի քաղաքացիական համարձակութիւն ունենանք մի փոքր էլ մեզ վրայ անդրադառնալու եւ մեր բարոյական պակասութիւններին, մեր վատառողջ բնազդներին, մեր ազգային ախտերին՝ «պատմական այդ չարիքին» եւ՝ որոշ տեղ տալու մեր կրած տառապանքների ու մեր ներկայ ծանր կացութեան մէջ...

III

Ազգային մեր առանձնայատկութիւնների պայմանը, — բացի իր տեսական նշանակութիւնից, որով, ի միջի այլ պատճառների, լուսաբանւում է հայ յեղափոխական շարժման ներկայ դրութիւնը, — կարեւորութիւն է ստանում եւ որոշ գործնական տեսակէտերից:

Այդ խնդիրը պէտք է պարզեն իրենց համար բոլոր մեր ընկերները, որպէսզի ամէնօրեայ այն բազմաթիւ խոչընդոտները, որ նրանք պատահում են իրենց գործունէութեան ընթացքում, չնսեմացնեն նրանց աչքում յեղափոխական գաղափարի կամ յեղափոխական տակտիկի նպատակայարմարութիւնը եւ այդպիսով չթուլացնեն նրանց հաւատն ու եռանդը:

Դա պէտք է պարզեն իրենց համար մեր բոլոր գաղափարակիցները, որովհետեւ ներկայ ծանրագոյն պատմական շրջանը ունի հայութեան բարոյական ու ռազմական բնազդներին աւելի եւս վնասելու բոլոր թունաւոր յատկութիւնները:

Դա պէտք է իմանան յեղափոխական կռուի բոլոր համակիր տարրերը, որովհետեւ չկայ լաւագոյն աւազան մեր պատմական կեղտերից մաքրուելու համար՝ քան զոհի եւ անձնուիրութեան այն ուղին, որի վրայ կանգնած են իրենք, ինչպէս եւ չկայ աւելի դրական միջոց չարիքը իր արմատում խեղդելու համար՝ քան կարող են լինել ազատ կեանքի նոր, փրկարար պայմանները, այսինքն յեղափոխական կռուի նպատակը:

Պարզենք մի քանի խօսքերով այս կէտերը:

Ահա հայ յեղափոխականի դէմ առ դէմ կանգնած է մի ուրիշ հայ, որն անտարբեր է դէպի առաջինին այրող հոգսերը: Ահա միւսը, որ չէ ապակցում նրան, պատճառաբանելով, որ ծանօթ չէ նրա կազմակերպութեան ընթացքին: Ահա մի

երրորդը, որ իր բռնած դիրքը բացատրում է յեղափոխական հայեացքների տարբերութեամբ։ Ահա մի չորրորդը, որ հակառակ է նրան իր «հիմնական համոզմունքներով»... Շատ բարեմիտ պէտք է լինէինք, ընդունելով, որ այդ բոլոր դէպքերը ունեն իրենց աւելի կամ պակաս չափով բանաւոր պատճառները։

Եւ իրաւ։ Եթէ մարդիկ իրենց անտարբերութիւնը արդարացնելու համար բերաններն են առնում՝ «ի՞նչ կարող եմ անել» այն ժամանակ, երբ բնաւ փորձ չեն արել իմանալու՝ թէ ի՞նչ կարելի է առհասարակ անել կամ երբեք նոյնիսկ ամենատարրական պարտականութիւնները յիշեցնող խորհուրդների չեն հետեւել, եթէ մարդիկ իրենց բռնած դիրքը բացատրում են նրանով, որ «ձեր գործերի հետ ծանօթ չեն» այն ժամանակ, երբ ոչ մի քայլ չեն արել եւ չեն էլ ուզում անել այդ գործերի հետ ծանօթանալու համար. եթէ մարդիկ հակառակում են ձեզ՝ պնդելով, որ «ձեր ընթացքը նրանք նպատակայարմար չեն համարում» այն ժամանակ, երբ դաղափար չունեն կռուի ձեր եղանակի վրայ եւ յաճախ չեն էլ կարող ունենալ, որովհետեւ նախ՝ ժամանակի ընթացքում փոխւում է կռուի ձեր տակտիկը եւ երկրորդ՝ միշտ նա մնում է ներքին դաղտնիք. եթէ մարդիկ ուզում են ձեզ հաւատացնել՝ թէ իրենք «ուրիշ համոզմունքներ են դաւանում» այն ժամանակ, երբ կամ ոչինչ չեն անում ոչ մի տեսակ համոզմունքների համաձայն կամ յանուն «վերագոյն չահերի» միայն թունաւորում են հասարակական կարծիքը և կամ օր ու գիշեր օդը թնդացընում յանուն բանուորական «յաւելեալ աշխատանքի», բայց մնում են ստոյիկեան սառնասիրտներ մի ամբողջ ժողովրդի «յաւելեալ արեան» դիմաց. եթէ մարդիկ խելագարների յատուկ ապշութեամբ չարունակ հերքում են ուրիշների բացայայտ արժանաւորութիւններն այն ժամանակ, երբ իրանք ամենայանդուգն լրբութեամբ անպայման յարգանք են պահանջում դէպի իրենց ակներեւ ախտերը, չառլաթանութիւնները եւ ամբարտաւան, տգեղ մտքի եսամոլ ցատկոտումներն անդամ, — մենք, թո՛ղ ներուի այդ մեղ, չենք կարող այս դէպքերից եւ ոչ մէկում զդալ մեղ՝ ուշադրութեան արժանի հակառակորդների դիմաց։ Այն ընդհանուր, համամարդկային բնաւորութիւն կրող պատճառներից դուրս, որոնք առհասարակ աղգերի կեանքում պայմանաւորում են որոշ չափի անտարբերութիւն եւ ձեռնպահութիւն դէպի հասարակական գործերը կամ բացատրում են իրար հակասող, իրար հետ մրցող հասարակական հոսանքները, — այստեղ, մեր կեանքում, եւ մանաւանդ ներկայ ճգնաժամի օրերում, կենդանի զգացմունքներով աղքատ, բայց կենտրոնախոյս, ինքնապաշտ բնաղդներով հարուստ հայի հոգեկան կազմն է, որ յաճախ հանդէս է գալիս իր վատ կողմերով։ Եւ հասկանա-

լի է, եթէ մեր պատմութիւնը զգալի չափերով դուրկ է եղել բարոյական առողջ ընդդիմներ կրթելու, անձնական դիտումների առաջ կանգ չառնելու, միաբանութեամբ ընդհանուր պէտքերին հետեւելու, կռուից չվախենալու, դէնքը գնահատելու վարժութիւններից, շատ բնական է, որ յեղափոխական շարժումը չէր կարող ո՛չ ըստ քանակի եւ ո՛չ էլ ըստ որակի այնպիսի հոգ գրտնել մեր մէջ, որպիսին կարող էր լինել մի ուրիշ ժողովրդի մէջ, որի պատմութիւնը, — միւս հաւասար պայմաններում, — այդպիսի վարժութիւնների համար նրան ասպարէզ էր տուել: Ահա ինչու յիշեալ դէպքերի ամենամեծ մասում կարելի է տեսնել ինչ ուզում էք, բայց ոչ որեւէ ապացոյց յեղափոխական դաղափարի կամ յեղափոխական միջոցների աննպատակայարմարութեան:

Ի՞նչպէս վարուել այդ կարգի բաղմագան հակառակորդների հետ — դա անհատական խնդիր է ի հարկէ: Մէկը կարող է արտայայտել արդար վրդովմունք, երբ տեսնում է, որ մարդիկ, — ըստ Վոլթերի, — «օգտւում են մտքից միայն նրա համար, որ արդարացնեն իրենց անարդարութիւնները, եւ գործ են ածում խօսքեր միայն նրա համար, որ ծածկեն իրենց մտքերը»: Միւսը կարող է բաւականանալ սոսկ արհամարհանքով, որովհետեւ կան դէպքեր, երբ անարժան հակառակորդների հետ լուրջ խօսելը միայն անպատուութիւն է բերում ձեր դաւանած դաղափարին: Երբորդը կարող է նոյնիսկ ներողամիտ լինել՝ ի նկատի ունենալով, որ մարդիկ շատ յաճախ կարող են իրենք էլ չիմանալ՝ թէ իրենց եւ ձեր մէջ նկատուող դանազանութիւնները բիւում են ոչ թէ պարզ դիտակցութիւնից կամ բարեխիղճ վերաբերմունքից դէպի ձեզ, այլ այն կոյր բրնազդներից, որոնց արմատները շատ հեռու են թաղուած, որպէսզի նրանց անկիտակից դոհերը կարողանան հասկանալ իրենց թշուառութիւնը: Բայց մի բան, որ պէտք է անկասկած արտայայտուի բոլոր դէպքերում եւ բոլոր ընկերների մէջ, դա վերջ ի վերջոյ այն արիութիւնն է, որով նրանք երբեք պէտք չէ ազդուեն այդպիսի երեւոյթներից, որովհետեւ դրանց մէջ չկայ ոչ մի բանաւոր հիմք մեզ ողեւորող դաւանանքի դէմ: Մենք մնում ենք փոքրամասնութիւն, բայց այդ փոքրամասնութիւնը չէ, որ պիտի ենթարկուի անտարբերների, ձեռնպահների եւ ամէն կարգի ճիգուիթների, իմաստակների կամ չառաթանների բաղմութեանը: «Այս կամ այն ընթացքը, որին հետեւում են (որոշ հասարակական պայմաններում ի հարկէ, աւելացնենք մեր կողմից) մի բանի, բայց միշտ աւելի եռանդուն մարդիկ, դառնում է ընդհանուր կարգ, ընդհանուր սովորութիւն՝ շնորհիւ այն հանգամանքի, որ ուրիշներն էլ ընտելանում են նոյն ընթացքին: Առաջընթաց մարդկանց օրինակին հետեւելով՝

կազմում է վերջապէս ընդհանուր համոզմունք, որ բոլորեքեան էլ անհրաժեշտաբար պէտք է ընթանան այնպէս եւ ոչ ուրիշ կերպ», — ասում է յայտնի փրոֆեսոր Սերգէեւիչ իր դասախօսութիւններում ռուսաց իրաւունքի մասին։ Մեզ վարանումներ չեն հարկաւոր, այլ հաւատ, մեզ խօսքեր չեն հարկաւոր, այլ գործեր, մեզ թերահաւատութիւն չէ հարկաւոր, այլ եռանդ, մեզ տատանումներ չեն հարկաւոր, այլ վճռողականութիւն եւ յանդգնութիւն։ Կրկնենք անմահ Տանթոնի խօսքերը. «Il nous faut de l'audace, et encore de l'audace, et toujours de l'audace !» (մեզ հարկաւոր է յանդգնութիւն, կրկին յանդգնութիւն եւ միշտ յանդգնութիւն)։

Բաւական է, որ հայ ժողովրդի աղատութեան գաղափարը նուիրական է, որ յեղափոխական կռիւը թելադրւում, բխում է ինքնըստինքեան այն սոսկալի իրականութիւնից, որի հրէշաւոր ծանրութիւնը այս կամ այն չափով զգացել եւ զգում է ամէն մի հայ մարդ։ Հետեւողներ եւ զինակիցներ, համամիտներ եւ գաղափարակիցներ, համակիրներ եւ ամէն կարգի ընկերներ անշուշտ կ'ունենանք, անշուշտ կը գտնենք։

* * *

Այո՛, թողնենք մեռելներին թաղեն իրենց մեռելները եւ ամենայն արթնութեամբ առաջ տանենք մեր արդար կռիւը։ Զմոռանանք երբեք, որ եթէ հայը իր տխուր անցեալում ժառանգել է շատ բացասական յատկութիւններ, ապա այսօր նա արդէն այն բացառիկ դրութիւններից մէկումն է, երբ շարիքը կարող է զարգանալ չտեսնուած չափերով եւ վերջապէս հարուածել մեր ազգային ամբողջ մարմինը, եթէ թուլանայ մեր դատի համար բողոքող ձայնը։ Երկրում, ուր այսօր յարաբերութիւնները այնքան սրուել են թշնամու հետ, որ հայը ապահով չէ կեանքի ամենատարրական պահանջներում եւ իւրաքանչիւր րոպէ կարող է անպատուուել, թալանուել, մորթուել կամ սովամահ լինել, կռուից հեռու մնացող ժողովրդի մասը ստիպուած է իր գոյութիւնը պահպանելու համար դիմել ամենասպանիչ միջոցների, — գաղթականութեան կամ դժոխային հանգամանքներին յարմարուելու ամենաստորնացուցիչ ձեւերի։ Ընկնելով օտար երկիրներ, առանց տեղական պայմաններին ծանօթ լինելու, առանց տեղական լեզուները իմանալու, զուրկ որեւէ նպաստաւոր միջավայրից, հայ գաղթականը հարկադրւում է ամբողջ խելքը լարել դժուար պայմաններում իր ապրուստը ապահովելու համար։ Եւ այդտեղ ամէն միջոց սրբագործում է նպատակի առաջ, որովհետեւ սկզբունքները կարող են վիճելի լինել եւ յամենայն դէպս առանց դրանց կարելի է ապրել, իսկ առանց հացի՝ ոչ։ Երեւակայեցէք ուրեմն խղճի այն ճկունութիւնը, սրտի եւ հոգու

այն այլանդակութիւնները, որ այդպիսի պայմաններում օրէցօր պիտի զարգանան գպթական հայ տարրի մէջ։ Իսկ երկրում մնացողնե՞րը։ Հայը պիտի ապրի այնտեղ, ուր ամէն ինչ կազմակերպուած է միայն նրան հարստահարելու, ուտելու, մորթելու, ջնջելու համար։ Անկարող, այս կամ այն պատճառներով, ուժին հաւասար կամ դերակշռող ուժով դիմադրել, նրա ձեռքի տակ մնում են միայն ինքնապաշտպանութեան ամենակրաւորական ձեւերը, եւ ի հարկէ արդարէն նա սայթաքում է «պատմական շարքի» թեք մակերեւոյթով։ Կրօնափոխութիւն, որ Տաճկաստանում հոմանիշ է ազգուրացութեան, ամէն սրբութիւնների ոտնակոխում, խարդախութիւն, կեղծիք, անվերջ ստորութիւններ — բնականաբար հաւատոյ հանդանակ են դառնում երկրում եւ ապականում ժողովրդի ոգին, բթացնում նրա մէջ անձնական արժանապատուութեան, ազնուութեան, վեհանձնութեան, արդար դայրոյթի եւ համարձակ վրէժխնդրութեան ամէն-մի կենդանի զգացմունքը։ Բացարձակ եւ անդարձ այլասերում, զարշելի հակումների մի «հրէական» խառնուածք, մի այլանդակ, մի հրէշաւոր տիպ, որի առաջ միայն զզուանք պիտի զգայ ամէն մի օրինաւոր արարած, — ահա այն սոսկալի հեռանկարը, որ այսօր սպառնում է մեր ազգութեան դուցէ աւելի՝ քան երբեւիցէ։ Եւ մենք, որ այնքան խորապէս զգում ենք պատմութիւնից ժառանգած մեր ազգային թերութիւնները, մենք, որ այսօր բողոքում ենք դրանց դէմ բարձրաձայն, — մենք չենք ի հարկէ, որ պիտի անտարբեր լինենք դէպի մեր ազգային բարոյական նկարագրին աւելի եւս սպառնացող ժամանակակից մեծ վտանգը։

* * *

Սակայն, ի՞նչ միջոց կարող է ներկայ պայմաններում լինել աւելի նպատակայարմար այդ բարոյական այլասերման դէմ կռուելու համար, քան յեղափոխական ուղին, որ մի կողմից պահանջում ու վառ է պահում սերնդի մէջ անձնականը հասարակականին ենթարկելու ամենամեծ առաքինութիւնը եւ միւս կողմից՝ ձգտում է մի ապագայի, ուր կարիք պիտի չլինի այն պակասութիւնների, որոնք անհրաժեշտ են դառնում այժմ իրրեւ գոյութեան համար նպաստաւոր առաւելութիւններ։ Այո՛, յեղափոխական դժուար կռիւն է, որի ընթացքում թշնամու դէմ կուրծքը կրծքին դիմադրաւող, իր կեանքը հայրենիքի սեղանին զոհող հայը անձնուիրութեան սուրբ կրակով տաքացնում է ժամանակակից ամող սերնդի սիրտը եւ ժողովրդի ամենաթանկագին այդ մասի մէջ կենդանի պահում ազգային ոգու պայծառ հակումները։ Դա, այդ կռիւն է նաեւ, որ նպատակ ունենալով տապալել Տաճկահայաստանում

տիրող կործանիչ կարգերը, պիտի բերէ մարդավայել կեանքի համար պահանջուող այն մաքուր մթնոլորտը, որի մէջ միայն կարող են ճոխ կերպով ծաղկել ժողովրդի դրական հակումները: Բարոյախօսական քարոզները չեն, որ կարող են բարձրացնել մի ժողովուրդ: «Սոված մարդը ականջ չունի», ասում է առածը: Հայը Տաճկաստանում այսօր աւելի է դժբախտ՝ քան մի սովեալ, եւ եթէ նա կարող է փրկուել, դա կը լինի միմիայն այդ անսահման դժբախտի աղաղակներին արձագանգ տուող կենդանի օրինակների կախարդիչ ուժով եւ որ գլխաւորն է՝ չնորհիւ այն նոր կարգերի, որոնք կը տան նրան ե՛ւ հաց, ե՛ւ ականջ, ե՛ւ ուրիշ շատ բաներ էլ, որոնցում նրա պահանջները այսօր այնքան օրհասական են:

«Սփենսրը, — ասում է ամերիկացի ընկերաբան Ուորտը, — որոնելով այն պատճառները, որոնք պայմանաւորում են ցեղերի համեմատական ճշմարտասիրութիւնը, գալիս է այն եզրակացութեան, որ բռնակալ կառավարութեան գոյութիւնը կամ բացակայութիւնը առաջացնում է կեղծիքի կամ ճշմարտասիրութեան գերակշռութիւն», եւ այնուհետեւ բաւական համոզիչ կերպով բացատրում է, որ խաբեբայութիւնը բնական հետեւանք է երկիւղի եւ հարստահարութիւնների... «Ոչ մի կասկած չկայ, որ ազատութիւնը ներշնչում է անկեղծութիւն, ինչպէս եւ ուրիշ առնական յատկութիւններ, իսկ ստրկութիւնը եւ բռնակալութիւնը սովորաբար անբարոյականացնում են... Խաբեբայութեան բոլոր տեսակներին մարդիկ դիմում են իբրեւ վտանգից պաշտպանուելու մի գործիքի»...

Եւ մենք կը գտնուենք մեր բարոյական հակումների մէջ, կը խեղդենք իր արմատում՝ մեզ վրայ այնչափ թանգ նստած եւ այսօր ահաւոր չափերով մեզ սպառնացող բարոյական ապականութեան մեծ չարիքը, երբ կարիք չենք ունենալ անվերջ «վտանգներից պաշտպանուելու գործիքին», երբ յախուռն եւ անդարձ վճռողականութեամբ օր առաջ կը հասնենք մեր շարժման նպատակին:

1901

Քրիստափոր Միքայէլեան,
Ռուբինա Արէշեան եւ Ռուբինայի քոյրը

ՄԻՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԵՐԻ ՀԵՏ

Ներկայ խնդրի մասին խօսելու մեղ առիթ է տալիս «Դրօշակ»ի մէջ (1900 Սեպտեմբեր) տպագրած՝ Տամատ Մահմուտ փաշայի նամակը, որ հայերին ուղղած մի ընդհանուր կոչ է՝ միանալու Թուրքերի հետ: Մենք յարմար ենք համարում այդ նամակի առիթով յայտնել մեր կարծիքները նաեւ ընդհանրապէս բոլոր Թուրք հակա-սուլթանական կամ՝ աւելի ճիշդն ասած՝ հակահամիտական տարրերի մասին, որովհետեւ՝ չնայելով այն բոլոր տարբերութիւններին եւ երբեմն նոյնիսկ փոխադարձ թշնամական յարաբերութիւններին, որ դիտւում են դրանց մէջ, այդ տարրերը բոլորն էլ, վերջին ժամանակներս, մեծ համերաշխութիւն են արտայայտում, երբ հարցը դալիս է հայերի հետ միանալու խնդրին:

Կար ժամանակ, որ մենք էինք Թուրքերին անդադար միացած կռուի հրաւիրում եւ դարմանում նրանց անտարբերութեան վրայ դէպի Տաճկաստանի ընդհանուր ողբալի վիճակը: Կար ժամանակ, որ մենք էինք նրանց բացատրում մարդկային ամենալայն դաղափարներով ներշնչուած մեր ծրագիրը, որպէս զի նրանք աներկիւղ մօտենան, հասկանան մեղ եւ աջակցեն ընդհանուր

գործին։ *Կար վերջապէս ժամանակ, որ ամէն անդամ, երբ մեր կոչերին արձագանգ տուող որեւէ անկեղծ ձայն էինք լսում մեր թուրք հայրենակիցների բանակից, մենք ամբողջ յօդուածներ էինք նուիրում «Դրօշակ»ում՝ այդ առիթներով մեր հրճուանքը արտայայտելու համար։ Իսկ այժմ... այժմ դերերը փոխուել են. այժմ «միութեան» հրաւէրները անդադրում կերպով տեղում են թուրքերի կողմից, եւ մենք ենք, որ՝ չնայելով մեր ամենաբուռն համակրանքի դէպի սկզբունքը, այսօր տարաբախտաբար ստիպուած ենք անվճռողական դիրքի մէջ մնալ։*

Պատճառը պարզ է։ Ձայները այնտեղից չեն լսուում, որտեղից մենք վաղուց ի վեր չարունակ սպասում ենք, եւ այն դիւթիչ ձայները չեն դրանք, որոնք ուժեր են կաղդուրում, սրտեր են վառում, եղբայր եղբօրը ճանաչեցնում... Ինչպէս միութեան գաղափարը, — այն գաղափարը, որ դեռ 10 տարի առաջ Դաշնակցութիւնը ընտրել է իբրեւ հիմնական կէտ իր ծրագրում, — պահանջեց այսքան տարիներ Երիտասարդ Թուրքերի շրջաններում եւս համակրութիւն գտնելու համար, երեւի նոյնպէս տարիներ կը պահանջէն՝ մինչեւ որ կ'իրագործուի այդ միութիւնը՝ ազգով տարբեր, բայց միեւնոյն թշնամու դէմ կռուող տարբերի մէջ։

«Միանա՛նք» — զեղեցիկ միտք. բայց ո՞ւմ հետ եւ ի՞նչպէս։

Հայ յեղափոխականները վաղուց են հրապարակի վրայ եւ վարում են արդէն այն կռիւը, որի անունով մեզ հրաւիրում են միանալ։ Իսկ ո՞ւր են թուրք-կռուողները... Մինչեւ այժմ մենք տեսանք անհատներ, խմբեր, թղթի փրոփականտայով պարապողներ, բայց չտեսանք գործով կռուողներ, գործի փրոփականտիստներ։ Կորուած բուն տաճիկ ժողովրդից եւ յենուած սակաւաթիւ թուրք մտաւորականութեան մի աննշան մասի վրայ, Երիտասարդ Թուրքերը մնում են դեռ եւս «յեղափոխութիւնը ի վերուստ» հասկացող քաղաքաղէտներ, թոյլ, անկազմ եւ հետեւաբար դեռ եւս անգործ, խօսքի մարդիկ...

Խօսելու համար միանա՞նք։

Եւ երանի թէ գոնէ խօսքի փրոփականը տանէին դրանք այն ճշմարիտ ուղղութեամբ, որ համապատասխանում է տաճիկ ժողովրդի ժամանակակից կուլտուրական պահանջներին։ Թերթեցէք Երիտասարդ Թուրքերի հրատարակութիւնները, եւ դուք չէք գտնի նրանց մէջ ոչ մի կռիւ տաճկական կեանքի այն ներքին կաչկանդիչ գործօնների դէմ, որ մենք՝ հայ ժողովրդի կեանքում չենք խնայել երբեք եւ հարուածել ենք ոչ պակաս քան արտաքին թշնամուն։ — «Մեր պատմութիւնը եւրոպականից բարձր է, մեր հաւատահամբերութիւնը աւելի» — *գրում է մէկը։* «Ձկայ Տաճկաստանում ոչ մի չարիք, որ աւելի մեծ չափերով զոյութիւն չունենար լուսաւորուած կոչուող

Եւրոպայում» — *լրբաբար կրկնում է անդադար միւսը*(*)։ *Միակ չարիքը սուլթան Համիտի անձնաւորութիւնն է եւ քառորդ դարուան ամբողջ տագնապը՝ միայն նրա քմահաճոյքների արդիւնք։ Զլինի Համիտը, եւ Տաճկաստանը կը դառնայ օ-*

(*) Օրինակի համար յիշենք այստեղ թէկուզ միմիայն ապագայ սուլթանական սենեկապետացուների բոյն՝ «Մեշվերէթ» լրագրի Սեպտեմբեր ամսուան համարի երկու յօդուածները — «*Ինչո՞ւ*» եւ «*Մեղաւոր են թէ՞ ոչ*»։ Այդ յօդուածներից առաջինում լրագիրը, իրեն յատուկ երկդիմի, ճիզուիթական ձեւերով, զայրանում է այն բողոքի դէմ, որ բարձրացնում են եւրոպացիք ու եւրոպական լրագիրները Սպաղանֆի կոտորածի առիթով եւ արդարացնում է իրողութիւնը հարցնելով՝ ինչո՞ւ Անգլիա եւ Ֆրանսա կարող են Ափրիկէում սպանութիւններ անել, իսկ ֆիւրտը կամ տաճիկը իրենց երկրներում չեն կարող իրենց հասկացած ձեւով դատաստան կապել հայ աւազակների հետ։ Երկրորդ յօդուածում «Մեշվերէթ»ը կրակ է թափում եւրոպացոց վրայ, որոնք բողոքեցին թէ Տիարպեքիրի հերոս Էնիս փաշայի Հալէպ նահանգապետ նշանակելու դէմ եւ թէ Պիթլիսի զինուորական հրամանատար Ալի փաշայի դէմ, որ հեղինակ եղաւ Սպաղանֆի եւ ուրիշ գիւղերի կոտորածին։

«*Սուլթանի եւ մանաւանդ ներքին գործոց նախարարի պարտքն է՝ պաշտպանել իր պաշտօնեաների պատիւը եւ օրինաւոր վարմունքը*», — թելադրում է լրագիրը եւ շարունակում։— «*Սպաղանքի դէպքը տեղի ունեցաւ այն ժամանակ, երբ գերմանական կայսրը հրամայում էր Զինաստան գնացող իր զինուորներին ոչ մի գթութիւն ցոյց չտալ դէպի նրանց, որոնք կը դիմադրեն զէնքով։ Եթէ Վիլհելմի այս խօսքերը ուղղուած լինէին Ալի փաշային, նա իր հերոսական գործերի համար վարձատրութիւն կը ստանար*»։

ինակելի երկիր, — ահա ինչ են միաբերան կրկնում բոլոր Երիտասարդ Թուրքերը, ահա զանազան ձեւերով համեմած ինչ հոգեւոր սնունդ են մատակարարում նրանք իրենց ժողովրդին, ընկճելով նրա անսահման տպիտութեան առաջ, խոնարհուելով նրա կոյր աւանդութիւնների, կրօնական եւ այլ սպանիչ նախապաշարումների դիմաց ու կամայ-ակամայ չոյելով նրա հակակուլտուրական հակումները...

Սրանց հետ միանա՞նք։

Անկասկած, հենց այդ նախնական աշխարհահայեացքով է բացատրւում եւ այն երեւոյթը, որ Երիտասարդ Թուրքերը, մեծից սկսած մինչեւ փոքրը, հայկական հարցի վերաբերմամբ միշտ ներշնչուած են միեւնոյն ոգով, այսինքն՝ հայկական հարցի համար, իբրեւ միջազգային խնդրի համար, ոչ մի արդարացուցիչ հանգամանք չտեսնելու հակումներով, հայերի կրած սարսափները նրանց թշուառ վիճակին փոխանելու պատրաստականութեամբ, հայկական կոտորածները անուղղակի ձեւերով արդարացնելու տրամադրութիւններով եւ վերջապէս մի այնպիսի պահանջկոտութեամբ դէպի մեզ, որ կարծես թուրք ժողովուրդն է մեծապէս վնասուել հայերից եւ վերջիններս են, որ դեռ մի բան պարտական են նրան։ Սա արդէն չարիքի վիտակցութիւն չէ, սա մեր սպասած թարմ, դաղափարական հոսանքը չէ, սա «առանց խորութեան կրօնի եւ ազգի» խնդիրներ դնող եւ

այդ խնդիրներով տանջուող գործիչների ընթացք չէ, այլ միմիայն թուլացող տաճկական պետութեան քաղաքական արտաքին դիրքը պահպանելու ճիգեր, ճիգեր՝ որոնք իրրեւ թէ անպատճառ պահանջում են հայկական եւ ուրիշ հարցերի կատարեալ չէղոքացումը Տաճկաստանում: Ահա սրանք, այս մարդիկն են, որ այսօր միութեան ձեռք են մեկնում մեզ: Եւ եթէ մենք միշտ պատրաստ ենք ընդունել այնպիսի ձեռքեր, որոնք ընդունակ կը լինեն հայերին դիմելիս զգալ իրենց պատմական հրէշաւոր յանցանքը, ամաչել և սոսկալի այն անօրինակ ոճիրի դիմաց, որ կատարուեց հայերիս վերաբերմամբ իրենց դժոխք երկրում եւ իրենց ժողովրդի աչքի առաջ, եթէ մենք պատրաստ ենք ձեռք մեկնելու այնպիսի թուրքերին, որոնք ամէն րոպէ կը դիտակցեն հայ ժողովրդի անօրինակ դժբախտութիւնը եւ քաղաքացիական համարձակութիւն կ'ունենան թէկուզ արար–աշխարհի առաջ եւ ամէն հանդամանքներում բարձրաձայն գոչելու՝ թէ այնպիսի մի սատանայական կառավարութեան դէմ, ինչպիսին տաճկականն է, հայերը իրաւունք ունէին եւ ունեն ինչ միջոցների էլ ասես դիմելու, — ապա այդ դիտակցութիւնից եւ քաղաքացիական այդ զգացմունքից դուրկ ձեռք մեկնողների դիմաց մենք կարող ենք միայն բացականչել՝

Ի՞նչպէս ընդունել այս ձեռքերը, որ ուզում են միայն մեր ձայները խեղդել...

Եւ յետոյ: Երիտասարդ Թուրքերը կարո՞ղ են ցոյց տալ մի խումբ, որ ընդունակ լինէր մեզ հաւատ ներշնչել դէպի իր բարոյականը նոյնիսկ այն փոքրիկ գործերում, ուր մենք միշտ կարող էինք համերաշխաբար ընթանալ: Քանի–քանի՛ չանտաժիստներ տեսանք մենք ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր կուսակցութիւնների, բոլոր խմբերի մէջ: Անուններ չտանք· դրանք չատ լաւ յայտնի են մանաւանդ իրենց՝ Թուրքերին: Միակ հայը, Անմեղեան անունով, որ ոտով–գլխով յարել էր «Մեշուերէթ»ի խմբակին, նա էլ իր կարճատեւ թղթեայ գործունէութիւնը «Մեշուերէթ»ի մթնոլորտում վերջացրեց կաշառուելով սուլթանից եւ վերադարձաւ Պոլիս պաշտօնի: Ծանր է խոստովանել, որ «երիտասարդ Թրքութիւն» այժմ ապրուստ ճարելու, անձնական ասպարէզ ստեղծելու մի հոմանիշ է դարձել Եւրոպայում: Չկան համոզուած մարդիկ, չկան անձնուրաց գործիչներ, չկան բարոյական մաքուր բնաւորների տիպարներ, որոնց հետ միայն կարելի է կապուել յեղափոխական կռուի տատասկոտ ճանապարհին...

Ո՞ւմ հետ միանանք:

Իսկ ո՞րն է այն ծրագիրը, որ պէտք է համախմբէ տաճկահպատակ բոլոր նեղուող, բոլոր դժգոհ ու բողոքող տարրերին· ի՞նչ պէտք է ընդունուի բոլորիս համար պարտաւորեցուցիչ նը-

պատակ եւ որո՞նք են այն միջոցները, որ պէտք է հասցնեն մեզ մեր նպատակին։

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը», — որի անունից միայն ի հարկէ մենք իրաւունք ունենք խօսելու, — ընդհանրացնելով Տաճկահայաստանի վերաբերեալ իր ծրագիրը, կարող է առաջարկել համայն Տաճկաստանի համար մի կազմակերպութիւն, որ, — միւս հաւասար պայմաններում, — անշուշտ ընդունակ է միացնել բոլորին։ Դա ֆեդերատիվ (դաշնակցային) ռամկավարական կազմակերպութիւնն է, որի համաձայն տաճկահպատակ բոլոր ժողովուրդները կազմում են մի անխախտ ամբողջութիւն, բայց իւրաքանչիւրը իր ներքին, տեղական ինքնավարութեամբ։ Երիտասարդ Թուրքերը դրա տեղ դնում են Միտհաթ փաշայի սահմանադրութիւնը՝ կարծելով, որ դա միանգամայն բաւարարութիւն կը տայ բոլոր տարրերի կուլտուրական պահանջներին։

Մենք ի հարկէ այն տեսակ մտածողներից չենք, որոնք դանդաղութիւն չեն դնում սահմանադրական եւ միապետական կարգերի մէջ։ Ոչ. մենք ընդունում ենք առաջինի բոլոր բարեբեր առաւելութիւնները երկրորդի դիմաց։ Բայց Տաճկաստանին հարկաւոր են not meausures, but men (ոչ թէ միջոցներ, այլ մարդիկ), ասել են Տաճկաստանը ճանաչող մարդիկ, եւ Հատտի-Շերիֆ-Գիւլխանէն 1839 թուին, տաճիկ կառավարութեան արած «ընդհանուր բարենորոգումների» անվերջ խոստումները 1844 ու 1850 թուերին, Հատտի-Հիւմայունը 1856 թուին եւ Սահմանադրութիւնը 1876 թուին, իբրեւ կենդանի օրինակներ՝ դալիս են հաստատելու այդ հայեացքը։ Ահա, ամբողջ մի դարի ընթացքում բոլոր վերանորոգիչ փորձերը անցան Տաճկաստանի պատմութեան էջերով իբրեւ մեռած խօսքեր, իբրեւ կեանքի չվերածուելու համար ստեղծուած անբնական օրէնքներ, որովհետեւ Տաճկաստանը կուլտուրական կեանքի համար անապատ է, որովհետեւ նրա ժողովուրդը դեռ եւս տգէտ է, իսկ տաճկական հիշող բիւրոկրատ-մտաւորականութեան եւ հոգեւորականութեան մէջ տիրում է արեւելեան սպանիչ մթնոլորտը։ Ահա ինչու մեր Թուրք հայրենակիցները մեզ որեւէ յոյս ներշնչելու համար պէտք է մօտենան մեզի, թողնելով «ընդհանուր բարենորոգումների» հին երգերը, որոնք վաղուց արդէն խլացնում են մեր ականջները եւ որոնք սակայն մարդավայել կեանքի ձգտող տաճկահպատակ ժողովուրդներին մինչեւ այսօր ուրիշ ոչինչ չեն տուել բացի սիստեմատիկ կոտորածներից։

Համաձայն վերոյիշեալ not meausures, but men բանաձեւին, Տաճկաստանում այն ժամանակ կը լինի որեւէ իրական փոփոխութիւն, երբ երկրում կը կազմուի մի համերաշխ բաղաքակիրթ ուժ, որ ընդունակ լինէր այս կամ այն կարգերը հաստատելու եւ պահպանելու։ Ընդունելով ֆե-

տերաթիվ պետական կազմակերպութեան նպատակը միայն՝ կարելի է ներկայումս կազմել մի այդպիսի ուժ։ Այսօր կենդանի փաստեր են՝ հայկական, մակեդոնական, ալպանական, յունական, արաբական եւ ձեր շարժումները։ Պարզենք բոլորի առաջ Օթոմանեան Դաշնակցութեան եղրայրական դրօշակը. խրախուսենք այդ շարժումները բոլոր կարելի միջոցներով, անկեղծ գործակցութեամբ փոխադարձ վստահութիւն ներշնչենք, որ իւրաքանչիւր ժողովրդի էական պահանջները գոհացում կը ստանան. տենդային ջանքերով պատռենք եւ ձեր ժողովրդի դիտակցութիւնը պատող խաւարը, — եւ մեզ կը յաջողուի համախմբել բոլոր տաճկահպատակ ժողովուրդների առաջադէմ, օրինապահ եւ ազնիւ տարրերը, որոնք՝ միասին վերցրած՝ և՛ւ կը տան երկրին այն ուժը, որի կարիքը զգացում է։ Եւ եթէ վերջապէս դուք հաւատում էք սահմանադրութեան բարեբեր հետեւանքներին, թողէք նախ՝ ընդհանուր նպատակի առաջ միանան, ի մի ձուլուեն բոլոր տարրերը, իսկ նրանից յետոյ կեանքի ընթացքը, ժամանակի պահանջները ինքնըստինքեան ցոյց կը տան՝ թէ որքան անհրաժեշտ է մինչեւ Օթոմանեան Դաշնակցութեան հաստատուելը՝ ընդունել իրրեւ իջեւան, իրրեւ անցողական մի շրջան, ձեր փայփայած սահմանադրութիւնը։ Բայց դուք, Երիտասարդ Թուրքերդ, հակառակ էք դրան, եւ մէկ

սուլթանին խփելով՝ պատրաստ էք մեզ էլ չինայել։

Ի՞նչպէս հետեւենք ձեզ...

Գալով միջոցների խնդրին, այստեղ եւս դրութիւնը անորոշ է։ «Օսմանլին» միակ խումբն է, որ յայտարարել է իրեն յեղափոխական, իսկ «Երիտասարդ Թուրքեր» են իրենց անուանում բոլոր բողոքողները, բոլոր դժգոհները։ «Մեչերէթ»ը իրեն «կարգի եւ յառաջադիմութեան» կողմնակից համարելով՝ հանում է իր ծրագրից յեղափոխական միջոցները։ Տամատ-Մահմուտ փաշան պարզ չի խօսում այն ձեւերի մասին, որոնցով կարելի է «ջնջել հայրենիքը կեղեքող բռնակալութիւնը» եւ՝ եթէ ներելի լինէր ենթադրութիւնների մէջ մտնել, միայն կարող էինք ասել, որ յամենայն դէպս նա «յառաջադիմութեան» կուսակցութիւնից շատ աւելի է յառաջադէմ։

Ո՞ր միջոցների վրայ պէտք է կայանայ միութիւնը։

Հայրենակիցնե՛ր, մենք խօսեցինք ամենայն անկեղծութեամբ, այնպէս, ինչպէս խօսում ենք ինքներս մեզ հետ եւ ինչպէս վայել է լուրջ հարցերի դիմաց։ Եթէ տեղ-տեղ մենք ստիպուած եղանք խիստ լեզու բանեցնել, դա բացատրւում է ոչ թէ մեր կոչտութեամբ, այլ միակ ցանկութեամբ՝ չթողնել ոչ ներկայի եւ ոչ ապագայի համար մութ, անորոշ կէտեր։ Իսկ մի անգամ էլ ձեր

առաջ մեր տրամադրությունները չեչտելու համար՝ աւելացնում ենք և՛ հետեւեալը.

Թուրքե՛ր, մենք չենք ձգտում ոչ հայ թագաւորութեան վերականգման, ոչ թէկուզ 100 մարդուց միայն բաղկացած ռեւէ ազգութեան սպառնող գերիշխանութեան, ոչ էլ անպատճառ ձեր պետութիւնից անջատուելուն: Մեր դրութիւնը պարզ է. ինչպէս ձեզ վիճակուած է գործել ձեր ժողովրդի մէջ, նոյնպէս էլ մեզ համար աւելի յարմար է մեր ժողովրդի պէտքերին հետեւել: Եթէ մենք այսօր կոչում ենք բարձրաձայն՝ «Կեցցէ՛ հայկական չարժումը», «Կեցցէ՛ հայ յեղափոխութիւնը», դա չի նշանակում, որ մենք միշտ պատրաստ չենք նոյն ոգեւորութեամբ նաեւ կոչելու՝ «Կեցցէ՛ ընդհանուր օթոմանեան յեղափոխութիւնը», «Կեցցէ՛ ընդհանուր օթոմանեան անկախութիւնը»: «Աշխատաւոր դասակարգերը իրենց բնական եւ բազմակողմանի զարգացման համար կարիք ունեն իրենց ազգերի անկախութեան ոչ պակաս, քան ընդհանուր ձայնտուութեան, կապակցութիւնների եւ մամուլի ազատութեան». «Միջազգայնութիւնը չէ հերքում ազգայնութիւնը, այլ նշանակում է միայն ազգերի ազատութիւն եւ հաւասարութիւն», ասում է յայտնի կաուցկին: «Միջազգայնութիւնը նոյնքան հակառակ չէ ազգայնութեան, որքան ընկերվարութիւնը՝ անհատականութեան, այսինքն անհատի զարգացման». «առանձին ազգերի անհատականութիւնը մարդկութեան համար նոյնն է, ինչ որ հասարակութեան համար անձնաւորութիւնների անհատականութիւնը», — պնդում է Լիփկնեխտ, եւ մենք, ինչպէս տեսնում էք, չենք հակասում եւ պիտի չհակասենք միջազգայնութեան գաղափարին:

Այո՛, լինելով հայեր, գործելով հայերի մէջ, մենք մնում ենք մարդիկ եւ չենք կարող ուրիշներին պակասը ցանկանալ, քան ուզում ենք մեզ համար: Ուրիշի հաշուով ապրողների կամ նրանց իրաւունքների սահմանափակման վրայ իրենց իրաւունքները հիմնողների վատութիւնը եթէ մենք չիմանայինք, սուլթանների տիրապետութիւնը միայն բաւական կը լինէր դրանում մեզ համոզելու համար: Տուէք մեզ որեւէ հաւաստիք, որ միանալով ձեր հետ՝ դրանով մենք չենք ապահովի միայն ձեր հանգստութիւնը՝ թէ հայկական հարցը յաջողաբար խեղդեցիք եւ որ այդ հարցից այլեւս վտանգ չկայ օսմանեան գերիշխանութեան եւ նրա վաղեմի աշխարհակալ փառքին, այլ դրանով ձեռք կը բերենք թուրք մտաւորականութեան մի արժանահաւատ ուժը, որ կարող է բարեփոխել մեր ժողովրդի դրութիւնը, — եւ մենք յեղափոխականին վայել աւիւնով կը վազենք ձեր շարքերը ամրապնդելու:

Բայց ե՞րբ կը լինի այդ...

1900

ՀԱՅ - ՔՐՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետիր խանի որդի Ապտիւլռահման բէյի կոչը քրտերին, որ տպագրւում է «Դրօշակ»ի ներկայ համարում(*), թելադրում է մեզ մի քանի խորհրդածութիւններ հայ-քրտական յարաբերութիւնների մասին:

Քիւրտ-հայկական համերաշխութեան հարցը նոր երեւոյթ չէ մեր կեանքում: Ներսէս Վարժապետեանի, Մկրտիչ Խրիմեանի հայեացքները եւ նրանց որոշ գործնական քայլերը այդ սահմաններում՝ յայտնի են շատերին: Բաֆֆիի մշտական քարոզները, Սրուանձտեանի կարծիքները եւ դրա հետ շատ ուրիշների երբեմն մոլեռանդ հաւատը, երբեմն բաւականաչափ հիմնաւորուած համոզումները՝ վաղուց են շրջում մեր հասարակութեան մէջ: Վերջապէս, անցեալ տասնամեակում

(*) 1901, № 4:

քրտերի հետ դաշնակցելու նպատակով հայ յեղափոխականների տեղ-տեղ արած փորձերը՝ նոյնպէս արդէն դուրս են գաղտնիքի չրջանից։

Մենք ոչ միայն տրամադիր չենք ժխտելու անցեալից արդէն մեզ ժառանգուած այդ ուղղութիւնը, այլեւ պատրաստ ենք այսօր ընդունելու, — եթէ կամենում էք, — այդ ուղղութեան յաղթանակի մի նոր արտայայտութիւն։ Այն ինչ մինչեւ այժմ քրտերի հետ համերաշխութիւն հաստատելու միտքը յղացուել եւ հետաքրքրութեան առարկայ է եղել միայն հայերի մէջ, վերջին տարիներում տեղի ունեցած մի քանի փաստեր — օրինակ, 1898 թուի «Դրօշակ»ի № 6ում ու 1900 թուի № մէկում տպած յօդուածները,— ինչպէս նաեւ Ապտիւլռահման բէյի ներկայ կոչը, ցոյց են տալիս, որ նոյն միտքը հող է գտել եւ արդէն կեանքի վերածուելու ճիգեր է անում նաեւ քիւրտ մտաւորականների մէջ։ Միեւնոյն դաղափարի վրայ աշխատողները ուրեմն երեւան են գալիս երկու կողմից՝ փոխանակ մի կողմի, եւ ինքըստինքեան հաւանական է դառնում այն ենթադրութիւնը, որ այսուհետեւ հայ-քրտական համերաշխութեան խնդիրը կարող է զարգանալ համեմատաբար աւելի նպաստաւոր, աւելի յաջող պայմաններում։

Սակայն՝ չնայելով երեւոյթի բոլոր ուրախալի բնաւորութեան, մենք չենք կարող ծածկել մեզանից, որ քրտա-հայկական դաշնակցութեան

խնդիրը ամէն անգամ, երբ նա հրապարակ է գալիս, մեզ դնում է մի դրութեան մէջ, որ ֆրանսական ժողովուրդը բնորոշում է իր մի առածով, այն է՝ «parler de la corde dans la maison d'un pendu» (խօսել պարանի մասին մի կախուածի տան մէջ)։

Եւ իսկապէս, եթէ հարցնելու լինենք մեզ՝ թէ ո՞ւմնից է հայ ժողովուրդը, — գոնէ 19րդ դարի քսանական թուականներից, — օրէ օր, ամսէ ամիս, տարէց տարի աւելի տուժել, այնչափ տուժել, որչափ նա չէ տուժել անմիջապէս ոչ մի ուրիշ ազգութիւնից, դժուար թէ գտնուի մէկը, որ չպատասխանէր՝ քրտից։ Եւ ահա այդ մշտական մեր թշնամու, մշտական մեր աւերողի, մորթողի, անպատուողի, տանջողի, մեր հայրենիքից մեզ ցիրուցան անողի, մեր արիւնը ծծողի, մի խօսքով հայութիւնը կախ տուող այդ պարանի մասին է, որ մենք հայերս պէտք է խօսենք-լսենք։ Դրութիւնը աւելի քան անողորմ է, եւ ի հարկէ պահանջւում է ամենայն զգուշութիւն խնդիրը ըստ կարելւոյն սառնասրտութեամբ լուսաբանելու համար։

Միանգամայն անհրաժեշտ է պարզել, որտե՞ղ են այն պայմանները, այն պատճառները, որ հիմնաւորում են քիւրտ-հայկական հակառակութիւնները, եւ կարելի՞ է արդեօք դրանց առաջն առնել եւ ի՞նչ միջոցներով։

Ապրելով լեռներում եւ սարահարթներում,

ուր երկրի բնական հարստութիւնները եւ կիսաթափառական-խաշնարած կենցաղին յատուկ սահմանափակ արդիւնաբերութիւնը չեն պայմանաւորում քրտերի համար ապահով կեանք, նրանք ներկայանում են դոյութեան կուում իբրեւ թոյլ տարր: Կաթ, պանիր, միս, բուրդ, քրտի գործըւածքներ եւ քիչ քանակութեամբ հաց, — ահա այն մթերքները, որ արդիւնաբերում են քրտերը: Արհեստի բազմազան արտադրութիւններ, բրինձ, աղ, շատ յաճախ հաց, մրգեր եւայլն, — այսինքն մի չարք առաջնակարգ կենսական պիտոյքներ, — նրանք պէտք է ստանան դրսից, ուրիշ ժողովուրդներից, եւ դրա համար նրանք չունեն ուրիշ միջոց քան կողոպուտ եւ սպանութիւններ, որոնք տարիների ընթացքում դարձել են «քրտական արդիւնաբերութեան» մի անհրաժեշտ, համարեա մի «բնական» մաս: Իր զարգացման շաւղում քիւրտը հազիւ է բարձրացել մինչեւ նահապետական ցեղական սկզբունքը: Ցեղի շահը՝ ահա ինքն է ղեկավարում նրա կեանքը: Չկայ այդտեղ ազգային գաղափար, ժողովրդական մի ամբողջութեան հասկացողութիւն: Չկան այդտեղ վերացական ընդհանուր սկզբունքներ ո՛չ սպանութիւնների, ո՛չ յափշտակութիւնների մասին թէ՛ հասարակական եւ թէ՛ մասնաւոր կեանքում, ճիշդ այնպէս, ինչպէս քաղաքակիրթ ազգերի մէջ պետական ինքնապաշտպանութեան տեսակէտից ընդունւում են պատերազմի սպանութիւններ, յափշտակութիւններ եւայլն: Այն ամէնը, ինչ պահպանում է ցեղը, յաճախ նոյնիսկ անհատը — լաւ է, եւ ինչ կարող է վնասել նրանց՝ վատ: «Ցեղակից» եւ «այլացեղ» հոմանիշ են «բարեկամ» եւ «թշնամի» խօսքերին, թէկուզ այլացեղը լինէր նոյն քրտական ազգութիւնից: Ու հասկանալի է, որ յանցանք չկայ, որ քիւրտը չարդարացնէր, եթէ դա կատարւում է այլացեղի վրայ: Այդ բաւական չէ: Կողոպուտն ու սպանութիւնները, իբրեւ ցեղի եւ անհատի բարեկեցութեան նպաստաւոր միջոցներ, նոյնիսկ առաքինութիւն են համարւում եւ գովասանւում, փառաբանւում, երգւում են իբրեւ կորիճի վայել յատկութիւններ:

«Ո՛չ բալուչները, ո՛չ բէդուինները, ո՛չ հապէշները եւ ո՛չ էլ պատագօնները չեն գերազանցում ֆիւրտ պատերազմասէր ցեղերին իրենց աւազակաբարոյութեամբ եւ այդ բնազդմամբ բաւականութիւն տալու արուեստով», — ասում է Էլիզէ Ռեկլիւն:

Այդպիսով քաղաքակրթութեան պատմութեան մէջ ինչ տեսակի բաժանումների էլ հետեւելու լինենք — ընդունենք Տայլորի, Մորկանի թէ Լիպերտի սիստեմները՝ այդ միեւնոյն է — քրտերը, իբրեւ մեծ մասամբ դեռ թափառական-խաշնարած եւ ցեղական սկզբունքով ապրող ժողովուրդ, պէտք է դասաւորուեն մարդկային քա-

ղաքակրթութեան յայտնի շրջաններից՝ բարբարոսական շրջաններում: *Բարբարոսական կենցաղի մի ժողովրդի հետ է ուրեմն, որ պէտք է ապրեն հայերը, նրանց անմիջական հարեւանները, որոնք սակայն վազուց են ոտ կոխել* քաղաքակրթական *կենցաղի շրջանը: Այս անբախտ զուգադիպութիւնը մի երկրում երկու տարբեր քաղաքակրթական կենցաղների — ահա մէկը այն հիմնական պատճառներից, որոնք պայմանաւորում են քրտական ու հայկական շահերի եւ տեսակէտների ահագին տարբերութիւնը:*

* * *

Միւս նշանաւոր պայմանը, որի շնորհիւ անօրինակ կերպով սրւում են քիւրտ–հայկական յարաբերութիւնները եւ որի ահռելի ազդեցոյցը մենք տեսանք մեր օրերում, — դա այն տակտիկն *է, որին հետեւում է* թուրք կառավարութիւնը *հնուց ի վեր:*

«Որպէս զի քրտերը հեռու մնան անկախութեան ձգտումից, կառավարութիւնը աշխատում է նրանց զբաղեցնել ուրիշ խնդիրներով: Այդպէս, օրինակ, նա դրդում է քրտերին Քիւրտիստանում ապրող նեստորականների դէմ, ինչպէս նաև մահմետականներին զինում է քաղդէացիների դէմ, իսկ վերջիններիս՝ եզիտիների եւ քրտերի դէմ: Նա այդպիսով *առաջ է բերում խռովութիւններ* այն միակ նպատակով, որ *իրեն պահի գերագոյն իշխանութիւնը...* եւ հպատակ ազանդները չմիանան *ընդհանուր թշնամու դէմ»:*

Այս դիտողութիւնները մենք գտնում ենք գերմանացի Շուայկեր Լերխենֆելտի մի աշխատութեան մէջ, որ հրատարակուած է 1875 թուին այն հետախուզութիւնների հիման վրայ, որ 1872–1873 թուականներին երկրաչափ Զերնիկի ղեկավարութեամբ արուել են բուն Քիւրտիստանում (Հիւսիսային Միջագետք): Ում յայտնի են քրտերի ձեռքով կատարուած եզիտիների ջարդը 1830 թուին կամ 1846 եւ 1849 թուականներին Մուհամէտ փաշայի (Կիրիտլի) դրդմամբ նեստորականների կոտորածը, ինչպէս նաեւ 1860 թուին առհասարակ քրիստոնեաների ջարդը, երբ, — ըստ միեւնոյն հեղինակի — «թուրքերը գործում էին տրիւզների հետ միասին, գրգռելով նրանց մոլեռանդութիւնը եւ արտայայտելով վերին աստիճանի ենիգամտութիւն ու կեղծաւորութիւն»ում յայտնի են, ասում ենք, այս փաստերը, նրանց մէջ տարակոյս չէ կարող լինել երկրաչափ Զերնիկի իրաւացի դիտողութիւնների մասին: Ցատկապէս հայերիս վերաբերմամբ՝ տաճկական նոյն տակտիկը, ի հարկէ, արտայայտուեց աւելի սոսկալի չափերով: Բոլորիս յայտնի են այն ներգործական խրախուսանքները քրտական բոլոր խըժ–

դժութիւններին, որոնք ուղղուած են եղել հայերի դէմ։ Պատկերը լրացնելու համար միայն յիշատակենք 1829, 1855 *եւ* 1877 *թուերի հայկական մեծ աւերումները քրտերի ձեռքով եւ վերջապէս «համիտիէ» կազմակերպութիւնը, որի կոչումը այնքան աղետաբեր կերպով արտայայտուեց* 1895 *եւ* 1896 *թուերին։*

Միեւնոյն «վերին ստիճանի նենգամտութեան եւ կեղծիքի» սիստեմին են հետեւում եւ պիտի հետեւեն *նաեւ* ռուսները, *լուսաբանելով հայկական շարժումը ճիշդ եւ ճիշդ թուրքերի պէս, այսինքն իբրեւ մի ձգտում, որ նպատակ ունի եւրոպական պետութիւնների միջնորդութեամբ ստեղծել սեփական հայկական թաղաւորութիւն եւ քրտերին ենթարկել ստրկական վիճակի։ Այդպէս, օրինակ, ռուս սպայակոյտի գնդապետ Կարցովը, որի ատելութիւնը դէպի հայկական խնդիրը հասնում է կուրութեան նոյնիսկ ակներեւ փաստերի առաջ, Կովկասի կայսերական աշխարհագրական ընկերութեանը տուած իր դեկուցման մէջ ասում է.*

«Օտար, մեծ մասամբ անգլիական դրդումների (?) ազդեցութեան տակ, վերջին տարիներում, թաղաքների հայերի եւ հոգեւորականութեան մէջ սկսուել է շարժում հայկական անկախութեան վերանորոգման եւ վաղուց չքացած Հայաստանի վերածնութեան համար··· Հասկանալի է ատելութեան այն զգացմունքը, որ ծագեց քրտերի մէջ դէպի հայերը, այն միտքը, թէ նրանք, որ կազմում են երկրի (?) ազգաբնակութեան մեծամասնութիւնը, կը *լինեն ենթարկուած* (?) խորապէս արհամարհուող եւ ոչ-պատերազմասէր փոքրամասնութեան (?), բոլորովին անտանելի է ամէն մի մահմեդականի, մանաւանդ քրտի համար։

Բայց հայկական խնդիրը իր արմատում խեղդելու կողմնակից գնդապետը քրտասիրութիւնից չէ, որ խօսում է հայերի դէմ։ Ահա բառ առ բառ նրա խօսքերը քրտերի մասին, որոնց վրայ նա նայում է լոկ միմիայն ռուսական տիրապետական դիտումների *տեսակէտից, ինչպէս տաճիկները տաճկական ղերիշխանութեան տեսակէտից։*

«Քիւրտերի պատմութեան տեսութիւնից կարելի է հանել մի եզրակացութիւն, որ շատ կարեւոր է գնահատելու համար այս կամ այն *կարելի գործողութիւնները* Քիւրտիստանին մօտիկ երկիրներում ծագած քաղաքական բարդութիւնների ժամանակ։ Քրտին շատ քիչ է ծանօթ հայրենասիրութեան զգացմունքը այն մտքով, ինչ մտքով հասկանում ենք մենք։ Հաւատարմութիւն տանիկ կառավարութեան ամենեւին չունեն, բայց բաւական զօրեղ է զգացմունքը դէպի ցեղը եւ նրա գլխաւորը։

Եւ էլի.

«Քրտերը շուտափոյթ զէնքի դիմելով՝ նոյն արագութեամբ էլ սառչում են, հենց որ դիմադրութեան են հանդիպում: Կողոպուտի հոգսը նրանց մէջ գերազանցում է նոյնիսկ հաւատարմութիւնից դէպի շէյխը. ջալալի քրդերը հետեւում են շիա Թէյմուր աղային ընդդէմ իրենց ցեղակցի, որ բացի դրանից՝ շրջապատուած է կրօնական հմայքով: Մի խօսքով՝ քրտերի բոլոր գործողութիւններում երեւում է ոչ թէ դիմացկուն եւ համարձակ մի ժողովուրդ, այլ վայրենի կողոպտիչներ, որոնք անընդունակ են որեւէ երկարատեւ ջանքերի եւ պատրաստ են ամէն բան զոհել վայրկենական, գրօշային շահին»:

Եւ ի հարկէ այդ «վայրկենական, գրօշային շահին» բաւարարութիւն տալու համար էր, որ 1829 *թուին ռուս-տաճկական պատերազմի ժամանակ կոմս Պասկեւիչը, համարելով Քիւրտիստանի խաղաղութիւնը պատերազմի յաջողութեան գլխաւոր պայմաններից մէկը, թոյլտուութիւն ստացաւ* 100 *հազար ոսկի ծախսելու քրտերին ընծաներ բաժանելու նպատակով:*

* * *

Վերջապէս չէ կարելի անտես առնել մեզ հետաքրքրող հարցում նաեւ կրօնի նշանակութիւնը: Շատերն են ժխտում կրօնի դերը քիւրտ-հայկական յարաբերութիւններում. բայց մեզ թւում է, որ մի կրօն՝ որի մէջ դարերի ընթացքում ամփոփուել է մահմետական աշխարհի համարեա բոլոր մտաւոր-բարոյական կեանքը, մի կրօն՝ որ գերպոյն ղեկավար է հանդիսացել մահմետական պետութիւնների ամբողջ քաղաքական կազմի մէջ, մի կրօն՝ որ «կեաւուր» խօսքով այնքան խստօրէն բաժանում է ամբողջ երկրագնդի այլակրօն տարրերը «միւսիւլմաններից». մի կրօն՝ որ մարդարէի անունով կոչում է իր հօտին՝ «պատերազմեցէ՛ք անհաւատների հետ մինչեւ կը վերանայ ամենայն մի դիմադրութիւն, մինչեւ Ալլահի հաւատը կը դառնայ միակ կրօն աշխարհիս վրայ», մի կրօն՝ որ «հալալ» է անում իր հետեւողներին այլակրօնների արիւնը եւ աւար-կողոպուտը, մի կրօն՝ որի պատգամները այնքան համապատասխանում են մանաւանդ քրտերի բոլոր վայրենի բնազդներին, մեզ թւում է, ասում ենք, որ այդպիսի մի կրօն չէ կարող չունենալ իր որոշ դերը քիւրտ-հայկական հակառակութիւնների խնդրում: Այդպէս են նայում հարցին նաեւ Տաճկաստանը ու իսլամը մօտից ուսումնասիրած բոլոր հեղինակները, սկսած մեր անմահ Բաֆֆիից մինչեւ Էնդելհարտ (Տաճկաստան եւ Թանզիմաթ), *Գրին* (Հայկական ճգնաժամը) *ու շատ ուրիշներ:*

Ահա, մեր կարծիքով, այն գլխաւոր գործօնները, — քրտերի բարբարոսական կենցաղը, *տաճիկ ու ռուս* կառավարութիւնների տակտիկը *եւ*

մահմեդական կրօնը, — որոնք սաստկապէս դժուարացնում են եւ պիտի դեռ եւս դժուարացնեն քիւրտ-հայկական համերաշխութեան գործը:

Հետեւեալ յօդուածում կը քննենք երկրորդ հետաքրքիր հարցը, որ մենք դրինք վերեւ:

II

Այն նշանաւոր պայմանները, որ մենք արդէն մատնացոյց արինք իբր արդելքներ հայ-քրտական մերձեցման, հասկանալի է, որ չեն կարող ներկայ օրերում առանձին հաւատ ներշնչել այդ երկու տարրերի մշտական, սիստեմատիկ միացած գործակցութեան մասին: Բարեշրջել քիւրտերի բարբարոս կենցաղը, որ տարբեր է մերինից, շարունակ յաջող կերպով մրցել երկու կառավարութիւնների հետ, որոնք հաւասարապէս թշնամի են քիւրտ-հայկական համերաշխութեան. չեղոքացնել կրօնական ազդեցութիւնները, որոնք քրտերի մէջ հոմանիշ են ազգայնական հասկացողութեան, — դրանք այնպիսի խոշոր կուլտուրական խնդիրներ են, որոնք կարող են մշակուել անդադար գործող մուրճի տակ, երկար ժամանակի ընթացքում. մինչդեռ հայկական հարցի բնաւորութիւնը, մեր ժողովրդի արդի կացութիւնը, կռուի շրջանին յատուկ մեր լարուած տրամադրութիւնները, ընթացիկ կեանքի անյետաձգելի պահանջները՝ մեզ թոյլ չեն տալիս հեռաւոր ապագայի վրայ հիմնել ժամանակակից մեր հոգսերը եւ գործնական ծրագիրները:

Ահա այդ տեսակէտից՝ քիւրտ-հայկական հակառակութիւնները պայմանաւորող գլխաւոր պատճառների առաջն առնելու հարցը, իբրեւ արմատական եւ միեւնոյն ժամանակ շատ բարդ գործ, չէ կարող իր ամբողջ ծաւալով դրաղեցնել մեզ: Այժմէական կարեւորութիւն ունեցող միակ խնդիրը ուրեմն կը մնայ այն՝ թէ չէ՞ կարելի արդեօք, գոնէ յայտնի չափով, մեղմացնել այդ հիմնական արդելքների վնասարեր բնաւորութիւնը, կամ ուրիշ խօսքով՝ չէ՞ կարելի արդեօք նոյնիսկ այժմեան հանդամանքներում գտնել քրքտական կեանքում ուրիշ այնպիսի գործօններ, որոնք կարող են եթէ ոչ օրէցօր զարգացնել քիւրտ-հայկական համերաշխութիւնը ընդհանրապէս, երբեմն վաղանցիկ, երբեմն փոքրիշատէ տեւողական, երբեմն աննշան, երբեմն լայն յարաբերութիւններ հաստատելու համար:

Սփենսրը իր «Քաղաքական հիմնարկութիւնների զարգացման» մէջ՝ խօսելով «պատերազմասէր հասարակութիւնների տեսակի» վրայ, ասում է, որ նրանց մէջ «չատ ուժեղ է հնազանդելու ընդդէմ» եւ ընդհակառակն՝ «անհատական նախաձեռնութիւնը կաչկանդուած է», որ այդպիսի հասարակութիւնների մէջ իշխում է «կրաւորական համաձայնութիւն եւ սպասողականութեան

դրութիւն», որի շնորհիւ հասարակութեան պետը, առաջնորդը հանդիսանում է «գլխաւոր դերակատար կեանքում»։ Վերածելով այս ընդհանուր ճշմարտութիւնը քրտերին՝ պէտք է տեսնենք, որ նոյն ցեղական սկզբունքը, որ նրանց մէջ քաղաքակրթական այնքա՛ն յետամնաց դրութեան յատկանիշ է, ունի մեզ հետաքրքրող խնդրի տեսակէտից մի առաւելութիւն, որն արժանի է առանձին ուշադրութեան։ Շնորհիւ այդ սկզբունքի՝ քրտերի մէջ համոզել, օրինակ, մի ցեղապետի (էլ-աղասի, միր) կամ մի կրօնապետի (շէյխ), դա միեւնոյն է՝ թէ համոզել նրա ամբողջ ցեղը, որն իր «կրաւորական համաձայնութեան» մէջ՝ պիտէ միայն հնազանդուել իր իշխանաւորներին եւ կատարել նրանց կամքը։ Քաղաքակրթական աւելի բարձր շրջաններում, ի հարկէ, պետերի նշանակութիւնը կեանքում սահմանափակւում է, հետզհետէ դադարելով ամբողջ հասարակութիւնների պատմական կեանքը իրենց մէջ անդրադարձնելուց։ Բայց այդպէս չէ ստորին զարգացման աստիճանների վրայ, ուր հասարակական յարաբերութիւնները չափազանց պարզ են, ուր չկան բազմաթիւ հիմնարկութիւններ, մարդկային գործունէութեան բազմազան ճիւղեր, գաղափարների անընդհատ մշակում, կեանքի նորանոր հոսանքներ՝ իրենց մշտական փոխադարձ ազդեցութիւններով, ընդհարումներով եւայլն։ Երբ Բաֆֆին իր հերոսներից «Գուշակողին» պետեղում է քրտերի մի նշանաւոր շէյխի մօտ, որ «մի օրուան մէջ կարող է 10 կամ 20 հազար ձիաւոր դուրս բերել», կամ երբ՝ խօսելով հայերի մասին՝ նա, Աւլանի բերանով, ցաւ է յայտնում, որ հայերը ազնուականութիւն չունեն, թէեւ ինքը «չէ համակրում ազնուականութեան գաղափարին», մեզ թւում է, որ նա ի նկատի ունի հենց այդ յետամնաց դրութեան մեր մատնացոյց արած որոշ առաւելութիւնը. հայ ազնուականութիւնը, շնորհիւ իր դիրքի եւ հեղինակութեան ժողովրդի առաջ, դուցէ կարողանար կապել, համախմբել ու մղել նրան դէպի մեր ազգային ազատագրութեան գործը... մտածում է Բաֆֆին։

Ընդունելով ուրեմն, որ ցեղական սկզբունքը շատ նպաստաւոր պայման է ներկայանում մեզ հետաքրքրող խնդրում, նայենք այժմ, ո՞րքան հեշտ է կամ կարելի է քիւրտ անհատ-պետերի հետ համերաշխութիւն հաստատելու գործը։

«Քրտերը թշնամաբար են վերաբերւում թուրքերին։ Ամէն բանից երեւում է, որ նրանք, ինչպէս է թուրքերին հպատակ ժողովուրդների մեծ մասը, ձգտում են անջատման եւ որ նրանք պատրաստ են առաջին յարմար դէպքում ապըստամբել՝ իրենց նախկին անկախութիւնը ձեռք բերելու համար», — ասում է Շուայկեր Լերխենֆելտը, որի մասին յիշեցինք անցեալ անգամ։

Նոյն երեւոյթի մասին վկայում է նաեւ Ռեկլիւն.

«Այս դարի կիսից սկսած՝ մասնաւորապէս ռուսաց վերջին արշաւանքից յետոյ տեղի ունեցած քրտական ապստամբութիւններից շատերը նպատակ ունէին ձեռք բերել քաղաքական *անկախութիւն*: Մինչեւ անգամ փորձեր եղան հիմնելու մի «Քրտական դաշնակցութիւն»:

Եւ տեղի ունեցած փաստերը հաստատում են այս վկայութիւնները: Ռըւանտուզի փաշալիքը, Հէյքարի, Բախտանի, Բեղտինանի իշխանութիւնները ընկան ոչ առանց ընդդիմադրութեան տաճիկ կառավարութեան. Պետիր խանի ապստամբութիւնը (1846), *Եղդանչիրի կռիւները* (1854), *մի քանի պետերի առաջարկները Կարինի ռուսաց հիւպատոսին՝ ընդդէմ տաճիկ կառավարութեան* (1876), *Շէյխ Իպատուլլահի ծրագիրը միեւնոյն մտքով* (1880) — *ահա մի քանիսը այդ փաստերից:*

Միեւնոյն տրամադրութիւնը պէտք է լինի քրտերի մէջ նաեւ դէպի ռուսները: Քիւրտ պետերից շատերն են հասկանում, որ ռուսաց տիրապետութիւնը կորստաբեր է իրենց նիստ ու կացի, իրենց արտօնութիւնների եւ ցեղական ամբողջ կազմի համար: Ռուս գնդապետ Կարցովը, որի նկարագրի հետ մենք արդէն ծանօթ ենք, ուղղակի յայտարարում է.

«...1827 թուին, երբ կոմս Պասկեւիչը տիրեց Երեւանեան խանութեանը, քրտերը հաւատարմութեամբ ծառայում էին Երեւանեան սարտարներին եւ ամէն կերպ օգնում էին նրանց *ռուսների դէմ*: Բացի կրօնական պատճառներից՝ նրանց դրդում էր պատերազմել մեր դէմ այն *միանգամայն հիմնաւոր համոզմունքը*, որ երկրում ռուսների հաստատուելուց յետոյ՝ վերջ կը դրուի նրան վայրենի ազատութեան, նրանց կամայականութեանը եւ աւարառութիւններին»:

Մենք ոչ մի կերպ չենք մոռանում ի հարկէ, որ՝ չնայելով այս ատելութիւններին դէպի տաճիկ եւ ռուս կառավարութիւնները, շատ յաճախ քրտերը, չնորհիւ իրենց կեանքում տիրող պայմաններին, սոսկալի գործիք են դառնում իրենց թշնամիների ձեռքում՝ ի վնաս հարեւան ժողովուրդների: Բայց քանի որ անհերքելի են այս տրամադրութիւնները, որոնք անշուշտ նոյնպէս ունին որոշ արմատներ քրտական կեանքում եւ որոնց արտայայտութիւնը եղաւ, ի միջի այլոց, «համիտիէին» շատ ցեղերի չմասնակցելը, ինչպէս նաեւ մինչեւ վերջին ժամանակներս տեղ-տեղ պահպանուող քրտերի կիսանկախ դրութիւնը, — մենք կարծում ենք, որ կայ որոշ հող, որի վրայ կարող են մշակուել եթէ ոչ մշտական, գոնէ ժամանակաւոր, եթէ ոչ լայն ծաւալով, գոնէ մասնաւոր համաձայնութիւններ այս կամ քիւրտ պետերի հետ:

Եզիտիների ժողովրդական մի երգ այս խօսքերն է պարունակում. «Բորենին խնայում է կեանքը եւ միայն դիակներ է հանում գերեզմանից, իսկ փաչան երիտասարդների արիւնն է խըմում... Անիծուի հզօրը, որ զութ չունի»...

Ովքե՞ր են քրտերի համար այդ «զութ չունեցող հզօրները»՝ Թուրքերը, ռուսները թէ՞ հայերը... Անկարելի է, որ քրտերի մէջ չգտնուեն իրենց դրութիւնը բաւականաչափ գիտակցող պետեր, որոնք չկարողանան այս հարցին պատասխանել այն ձեւով, որ համապատասխանում է իրենց եւ մեր փոխադարձ շահերին:

Բայց եւ մենք հայերս պէտք է ջանանք այդ գիտակցութիւնը նրանց ներշնչել: Միայն՝ դրա համար մենք չունենք ուրիշ միջոց, քան մեր սեփական ուժերը հարստացնելու, եւ կենդանի օրինակներով ապացուցանելու, որ մենք ընդունակ ենք պաշտպանել մեր եւ շատ անգամ նաեւ մեր հարեւանների շահերը: Կ'ունենանք այդ ուժը, կ'ունենանք ե՛ւ քիւրտ դաշնակիցներ: Հակառակ դէպքում հայերը աւելի ձեռնտու պիտի մնան քրտերի համար իբրեւ հարստահարութիւնների եւ թալանի առարկայ, քան իբրեւ զինակիցներ ընդհանուր թշնամիների դէմ:

1901

Քրիստափոր Միքայէլեանի կիսանդրին
(Սոֆիա)

ԿՈՎԿԱՍԱՀԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ

«Այս է իմաստութեան վերջին խօսքը — նա է միայն արժանի ազատութեան եւ կեանքի, ով որ ամէն օր կռուով նուաճում է նը-բանց»:

ԿԷՕԹԷ («Ֆաուստ»)

1825 թուին՝ «խելքից պատուհաս»ի հռչակաւոր հեղինակ եւ Արեւելքին քաջ ծանօթ Կրիպոյեդով իր բարեկամ Պեղիչեւին Թէոդոսիայից ուղղած մի նամակում գրում էր. «Ճենովացիներից եւ հովիւ-թաթարներից յետոյ Ղրիմ եկանք մենք (ռուսներս), — ընդհանուր ժառանգներս, — իսկ մեզ հետ նաեւ՝ աւերման ոգին, այդ սովորական մեր ուղեկիցը Արեւելքում եւ Արեւմուտքում»:

Եւ առաջ ընթանալով միշտ հաւատարիմ աւերման իր ոգուն՝ Ռուսաստանը, ինչպէս անցեալում, նոյնպէս եւ այսօր՝ ներկայացնում է ընդհանուր հալածանքի, ընդհանուր աւերածի ու բռնութիւնների մի լայնածաւալ ասպարէզ: Ազգութիւն չմնաց Ռուսաստանում, որ չճնշուէր, ժողովուրդ չմնաց, որ չխեղդուէր, խօսք, կարծիք, իրաւունք, օրէնք չմնաց, — նոյնիսկ կայ-

սերական գահերից հռչակուած,— որ չտրորուէր։ Իշխողների եւ ստրուկների, դիւցազիչների եւ զոհերի, լրտեսների եւ լրտեսուողների մի ահաւոր բեմ է դա՝ փոխադարձ ոխի եւ ատելութեան կրքերով թունաւորուած։ Ռուսաստանը մրցում է Տաճկաստանի հետ պետական կեանքի բոլոր աստիճաններում՝ նոյնչափ յաջող բացասականում, որչափ եւ դրականում։ Եւ վատաբախտ հային վիճակուած է ապրել, օր-արեւ տեսնելու իրաւունք հայցել այդ երկու մահաբեր բռնակալութիւնների սահմաններում՝ «սատանայի եւ խորը ծովի միջեւ», ինչպէս ասում են անգլիացիք։

Եթէ այս դրութիւնը ընդհանրապէս պարզ չէր մեր նախորդների, մեր պապերի ու հայրերի համար, հապա 80ական թուականներից սկսած, այստեղ եւ այնտեղ, մէկը միւսի ետեւից տեղացող ծանր հարուածները այլեւս կասկած չթողին այդ մասին՝ ժամանակակից սերունդների մէջ։

Եւ հայ դպրոցների փակումից յետոյ, ահա մենք ականատես ենք հայ եկեղեցական կալուածքների յափշտակման։ Այդ կարգի երեւոյթները արդէն սովորական ճնշումների արտայայտութիւն չեն, այլ բացայայտ ձեռնոց, որ վայրագօրէն նետում է ռուս աւազակապետութիւնը կովկասահայի ազգային ինքնուրոյնութեանը։ Ինչպէս Տաճկաստանում, նոյնպէս եւ Ռուսաստանում ի լուր անցան ուրեմն «լռութեան», «խոհեմութեան», «բարեմիտ հպատակութեան» եւ «յարմարուելու» այն բոլոր պատգամները, որ կովկասահայը դաւանում էր ռուս կառավարութեան վերաբերմամբ։ Ի զուր էինք մենք լսում, ուրեմն, մեր անասնացած բուրժուազիային ու նրա որդեգրած նորագոյն մտաւորականութեան ներկայացուցիչներին՝ այդ դարչելիներին, որոնք ընդունակ են, կառավարութիւնից վարձատրուելու չափ արժանի եռանդով, հայ ժողովրդից պատրաստել խղխղոցող ոչխարների կամ այլասեռուած անտարբերների մի հօտ միայն։ Ի զուր էր ուրեմն կովկասահայը հետեւում իր կղերին, — այդ պատմական անդամալոյծին, որ կախուած ժողովրդի յոգնած, արիւնոտ մարմնից, բաղմել էր էջմիածնում, առաջնորդարաններում, պետական դպրոցներում եւ այլուր՝ դատախազների, նահանգապետների եւ յետին ոստիկանի հրամանները կատարելու համար։ Ի զուր էինք, ուրեմն, կեանքի գձուձ չահերից մղուած, — ինչպէս այդ արել ենք հայերս շատ անգամ, — այստեղ եւս իլացնում մեր մէջ բոլոր բարձր պահանջները՝ պատուասիրութեան, համարձակութեան, զոհողութեան, ազնիւ պայքարի մեր ամենալաւ հակումները։

Այո՛, ի զո՛ւր, բոլորովին ի զուր անցան այդ բոլոր խարուսիկ ջանքերը, «դդուչութեան» այդ թունաւոր քաղաքականութիւնը, անսիրտ ու ստրկամիտ «խելօքների» այդ վարակիչ, այդ անբարոյականացնող եւ միմիայն իրենց «խելօքնե-

րի» համար անձնականապէս շատ ձեռնտու երեմիականները։

«Դրօշակ»*ի ներկայ համարում(*) տպուած* «Կովկասեան խապրիկները» *եւ մի շարք թղթակցութիւններ արդէն տեղի ունեցած հակակառավարչական ցոյցերի մասին՝ դաղափար են տալիս այն դիմադրական տրամադրութեան, որ արտայայտւում է կովկասահայերի մէջ։ Պատկերը լրացնելու համար առաջ ենք բերում կրկին մի կրտոր մեր ընկերոջ մի նամակից.*

«Կալուածների յափշտակման այս տագնապալից խնդրում ամենէն ուշագրաւ երեւոյթն է ժողովրդի ծայրէ ի ծայր ցնցուելն ու շարժուելը։ Հայ ժողովուրդը ելեկտրականացել է մի կրակով, մի զգացումով — դիմադրել, կռուել, արիւն թափել. գիւղ, քաղաք, համարեա ամէն դասակարգ, ամէն հասակ այժմ միատեսակ են զգում ու մտածում, միատեսակ պահանջներ արտայայտում, միատեսակ ծրագիրներ կազմում՝ վրէժխնդրութեան, ինքնապաշտպանութեան, եւայլն։ Լեռներում եւ բարձրաւանդակներում ժողովուրդը զինւում է։ Մի տեղ հանդիպեցի մօտ 200–300 երիտասարդների՝ ձիաւոր, զինավառ, սպասող ազդանշանի, որ գրոհ տան Մայր–տաճարի պաշտպանութեան համար։ Ահա ինչու էջմիածինը պաշարուած է զօրքերով։

«Դուք լսել էք երեւի Աշտարակի ցոյցի մասին, բայց չէք լսել, երբ Վաղարշապատի գաւառապետը հրամայում է կոզակներին՝ մտրակներով հալածել ժողովրդին դէպի գիւղ. այն ժամանակ Օշականից կոզակների ու գաւառապետի վրայ տեղում են հրացանի գնդակներ այգիների խորքերից եւ ժայռերի արանքներից, ու գաւառապետը ստիպւում է կոզակներով յետ գնալ։

«Այլեւս անկարելի է զսպել ընդհանուր ցասումը, ինչպէս անկարելի է Մասիսից ներքեւ թռչող քարաժայռերը կանգնեցնել»։

Ոգեւորիչ տրամադրութի՛ւն, սրտի խորքում անպատուած, վիրաւորուած ժողովուրդի զայրո՛յթ, ո՞ւր էիք դուք մինչեւ այժմ... Եթէ դրպրոցների փակման ժամանակ հանդէս պայիք շատ նուազ չափերով անգամ, դուցէ իստերիֆ Կալիցիններին, դահիճ Պլեւեների եւ անուղեղ Նիկոլաների համար այսօր ճանապարհը դէպի մեր եկեղեցական կալուածքները այնքան բաց չհամարուէր, որչափ այդ երեւաց այժմ։

Բայց անցածը անցել է, եւ միանգամայն մրխիթարական է այն վճռական սթափումը, որ տիրել է վերջապէս կովկասահայ հասարակութեան եւ ժողովրդին։ Մենք յոռետես չենք եւ կարծում ենք, որ մի անգամ արիւնով սրբագործուած դը-

(*) 1903, Օգոստոս։

ությունը կ'ունենայ իր նշանակալից հետեւանքները եւ այլեւս անդարձ պիտի անցնին–զնան հայ յեղափոխական շարժման առթիւ օրօր երդողների ժամանակները։ Անէ՞ծք այսուհետեւ լռութեան, համբերութեան եւ ամէն տեսակ «խոհեմութիւնների» առաքեալներին։ Նդո՞վք այսուհետեւ՝ կըռուից խուսափելու, հարուածի տակ ընկճուելու, զէնքից փախչելու, վախ ու երկիւղի տեսակէտից իւրաքանչիւր քայլ լուսաբանելու ընդունակ՝ ամէն կարգի խրտուիլակներին։ Մեղկ անդորրութիւնը չէ, որ ապահովում է մարդկային Իրաւունքը, այլ Կռիւը՝ անդուլ, անվկանդ։ «Առանց կռուի չկայ իրաւունք, ինչպէս որ առանց աշխատանքի չկայ սեփականութիւն»։ Որքան ճիշդ է ասուած, թէ «երեսիդ քրտինքով պիտի վաստակես քո հացը», նոյնքան ճիշդ է եւ այն՝ թէ «կռուի մէջ միայն պիտի գտնես քո իրաւունքը»··· «Արդարութիւնը մի ձեռքում բռնած ունի կշիռ, միւս ձեռքում՝ սուր։ Կշիռով նա կշռում է իրաւունքը, սրով պաշտպանում, հաստատում է նրան։ Սուրը առանց կշռի՝ մերկ բռնութիւնն է, կշիռը առանց սրի՝ իրաւունքի անզօրութիւնը», — այսպէս է տրամաբանում գերմանացի Երինգ, եւրոպական ամենահռչակաւոր իրաւաբաններից մէկը։

Թուլամիտ պէտք է լինել՝ այս խօսքերում պարունակուող ճշմարտութիւնը չըմբռնելու համար։ Սակայն եթէ իրաւունքը իր պաշտպանութեան համար կռիւ է պահանջում, հապա կռիւը իր յաղթանակի համար նեցուկ պիտի ունենայ՝ ուժը։ *Ուժն է, որ կառավարում է աշխարհս, եւ մենք ձեռք կը բերենք մեր ուզածները՝ երբ ուժ կ'ունենանք։ Ո՞վ նոյնիսկ մի հասարակ լակէյի պաշտօն կը հաւատար այսօրուան ռուս կայսր Նիկոլա Ա.-ի պէս ապուշին, եթէ նա չլինէր Ալեքսանդր Գ.-ի որդին. ո՞վ այնպիսի մի լուսնոտի՝ ինչպիսին է Կալիցինը, հասարակ տիտոապահի դեր անդամ կը յանձնէր իր տանը, եթէ նա մեծացած չլինէր ռուս կայսերական աւտարակարունի մօտերքում։ Բայց ահա այդ այլասերուած յիմարների, այդ ցաւագար լրբերի իրար վայել խմբակցութիւնը՝ յենուած որոշ աւանդութիւնների եւ հպատակ ժողովուրդների տգիտութեան վրայ, իր տրամադրութեան տակ է առել միլիոնների պիւտճէ եւ իշխում է, ինչպէս ուզում է։ Նոյնն է եւ Տաճկաստանում, ուր Ապտիւլ Համիտ կոչուող հրէշը, եթէ ծնուած լինէր հպատակի ընտանիքում, վաղուց արդէն, իբրեւ ստորագոյն կարգի ոճրագործ, կախաղան կը լինէր հանուած։ Նոյնն է եւ ուրիշ միապետական ու կէս–միապետական երկրներում։*

Համարձակութիւն է հարկաւոր՝ իշխողների լպիրշ երեսին չպրտելու համար իրենց պատշաճ տեղը մարդկային հասարակութեան մէջ. բայց այդ բաւական չէ։ Իշխողների կազմակերպուած ուժի դէմ հակադիր ուժ ստեղծելու համար անհրաժեշտ են.

ա) Ընդհանուր դրութեան եւ շահերի պարզ գիտակցութիւն.

բ) Ոչ մի տեսակ զոհողութիւններից յետ չկանգնելու անյողդողդ վճռողականութիւն.

գ) Համաձայնութիւն, համերաշխութիւն կըռուելու կոչուող տարրերի մէջ։

Անդրադառնալով ընդհ. հայկական կեանքին այս պայմանների տեսակէտից, կարելի է ընդունել, որ վտանգաւոր կացութեան գիտակցութիւնը օրէցօր աւելի եւ աւելի է ծաւալւում։ Հայ ժողովուրդը իր գլխաւոր եւ երկրորդական մասերում այսօր արդէն տեսնում է, թէ որքան նըման են Համիտ եւ Նիկոլա, քիւրտ եւ կողակ, մէկը՝ դաղանութիւնը եւ արիւնարբութիւնը զէնք ընտրած, միւսը՝ մարդատեացութիւնը եւ չնականութիւնը։

Զոհողութեան ընդունակութիւն եւս արտայայտեցինք. Պոլսի, Սասունի, Վանի, Զէյթունի եւ Տաճկահայաստանի բազմաթիւ ուրիշ վայրերի տուած արիւնին դնաց միանալու Գանձակում, Թիֆլիսում, Բաքւում եւ այլ տեղերում յանուն հայ ժողովրդի իրաւունքների նահատակուածների արիւնը։

Համերաշխութեան սկզբունքը չեչտուած է արդէն այն գործօն հետաքրքրութեամբ, որով ռուսահայը հետեւեց տաճկահայկական դատին, իսկ այսօր դալիս է նոր արտայայտութիւն դըտնելու այն բողոքների մէջ, որոնցով տաճկահայ հոգեւորականութիւնը, ժողովուրդը եւ ուրիշ դաղութներ ձայնակցում են ռուսահայի կռուին՝ ռուս կառավարութեան դէմ։

Սակայն այդ բոլոր դրական երեւոյթները կազմում են դեռ եւս անհրաժեշտ պահանջների սաղմը միայն։ Մինչեւ այժմ ո՛չ զոհողութեան ինքնավստահ պատրաստականութիւնը ընդգրկեց ազգութեան բոլոր դասակարգերը, ո՛չ էլ համերաշխութեան, միաբանութեան սկզբունքը դարձաւ կենդանի պահանջ, արիւն ու մարմին՝ ամէնուրեք հալածուող հայ տարրի մէջ։ Ժամանակ է վերջապէս, որ ներկայ մահաշունչ կացութեան դիմաց, երբ տաճկահայկական կոտորածներից յետոյ, դուցէ, դտնւում ենք կովկասահայկական կոտորածների նախատօնակին, կռուելու անդրդուելի վճռողականութիւնը եւ իրար խառնուելու, իրար հետ միանալու, իրօք մի ամբողջութիւն կազմելու միահամուռ, միահոգի պահանջը մեր ընդհանուր նշանաբանը դառնայ։ Պատռել է հարկաւոր քարտէսների վրայ այս կամ այն աւազակապետի կամքով դծուած սահմանները, ջնջել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից եւ որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն չատ կարճատեւ են

լինում։ Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տոգորուած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կռուելու անսասան վճռողականութիւն եւ կապուած, միացած է դարերով սնուած ու պահպանուած ընդհանուր բնաղդների ու զգացմունքների առողջ զարկերով։

Համարձակութի՛ւն գահակալ խրտուիլակների եւ նրանց շրջապատող, նրանց գործակից բոլոր դահիճների եւ անբան ստրուկների դիմաց...

Ինքնավստահ վճռականութի՛ւն՝ ընդհանուր շահերի գիտակցութեամբ լուսավառուած...

Մէ՛կ նպատակ, մէ՛կ ամբողջութիւն՝ յեղափոխական անհաշտ կռուի համար...

1903

— Վ Ե Ր Ջ —